«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան _2024_

ՆԱԽԱԲԱՆ

«Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՖՀՄՈՒԿ, Հիմնադրամ, Կենտրոն, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմում-հայտին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն՝ ուսանող է:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է Հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 13

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 34

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 39

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 45

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 49

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 56

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 60

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 63

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 69

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 72

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 74

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 76

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 78

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ կենտրոնը ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը որպես առաքելություն ընդունել է.

1. Հայաստանում ստեղծել մասնագիտական կրթության օրինակելի կառույց, որը թույլ կտա հայ երիտասարդներին ստանալ որակյալ մասնագիտական կրթություն նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով,
2. Հնարավորություն տալ ուսումնառողներին հետագա կյանքում ինքնահաստատվել և դառնալ հաջողակ ձեռք բերած հմտությունների և կարողությունների շնորհիվ, որոնք կլինեն համահունչ աշխատաշուկայի պահանջներին և շարունակական զարգացումներին,
3. Ֆրանսերեն լեզվի ուսուցման շնորհիվ հնարավորություն տալ սովորողներին ոչ միայն ծանոթանալ օտար մշակույթին, այլ նաև շփվել արտասահմանյան գործընկերների հետ, մասնավորապես փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Փորձագիտական խումբը հաշվի է առել ՖՀՄՈՒԿ-ի, որպես մասնագիտական ուսումնական հաստատության, կազմակերպաիրավական ձևը, կապերը միջազգային գործընկեր ՍԵՊՌ-ի հետ և կառավարման ոլորտում առկա առանձնահատկությունները: Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ ՖՀՄՈՒԿ-ը առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց: Այս ամենով հանդերձ, ուսումնասիրությունների արդյունքում, նկատի ունենալով հաստատության ուժեղ կողմերը, փորձագիտական խումբը կարևորել է հատուկ ուշադրություն դարձնել կենտրոնի կողմից դեռևս չբացահայտված հնարավորությունների դուրսբերմանը՝ նպաստելով հաստատության երկարաժամկետ և կարճաժամկետ առավել արդյունավետ զարգացմանը:

Չնայած ՖՀՄՈՒԿ-ը գտնվում է ՀՀ մայրաքաղաքում, որտեղ մեծ է մրցակցությունը, սակայն կարողացել է իր առանձնակի տեղը զբաղեցնել աշխատաշուկայում ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում իրականավող համապատասխան կրթական ծրագրերի շրջանակում: Կենտրոնը ստանձնել է բավականին հավակնոտ առաքելություն և տեսնալական, որն իրականանալի է հաստատությունների հնարավորությունների տիրույթում, ավելին՝ իրականացման գործընթացը ներառում է ավելին, քան պլանավորումն է նախատեսել: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը հաստատության երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից առավել հավակնոտ հնարավորություններ է տեսնում՝ մասնավորաբար միջազգայնացման և ըստ իրականացվող կրթական ծրագրերի «արտադրության» ապահովման ուղղություններով:

Կենտրոնը կարողացել է ներդնել ռազմավարական կառավարման գործուն տարրեր: Ներդրել է նպատակների իրագործման ռազմավարական ծրագիր, որը, թեև պլանավորման տեսանկյունից ունի անհստակություններ, և կատարելագործման կարիք ունեն թե՛ պլանավորման, թե՛ մշտադիտարկման գործընթացները, սակայն որոշակի գործող գործընթաց արդեն ներդրվել է, ինչը դրական է և կարևոր: Այս տեսանկյունից որոշակի խնդիրներ են առկա մարդկային ռեսուրսների պակասի տեսանյունից: Միաժամանակ հատկանշական են հաստատության ֆինանսական կայունությունը, բազմազանեցված մուտքերը և այս ուղղությամբ տարվող շարունակական աշխատանքները, ինչպես նաև կարճաժամկետ և միջնաժամետ ծրագրերի կառավարման փորձառությունը: Ուշադրության է արժանի նաև հաստատությունում փաստաթուղթ-գործընթաց կապի կարևորումը և այս ուղղությամբ գործընթացների կատարելագործումը:

Չնայած որակի ապահովման համակարգը դեռևս «նոր է ներդրվել» կենտրոնում, սակայն արդեն իսկ կարևոր հաջողություններ են գրանցել, քանի որ մի շարք մեխանիզմներ արդեն իսկ գործել են: Հաստատությունում առկա են ամբողջական ՊԻԳԲ շջափուլն անցած ործընթացների նախադեպեր: Այնուամենայնիվ, «որակի ապահովման համակարգի ներդրումը» հանգեցրել է մի շարք գործընթացների առավել կանոնակագման, համակարգման, բազմաթիվ հետազոտությունների իրականացման, որոնք որոշակիորեն փոփոխությունների հիմք են հանդիսացել: Իհարկե, դեռևս անելիքներ կան բազմակողմանի տվյալների հենքով համակողմանի հետազոտությունների և վերլուծությունների իրականացման տեսանկյունից, ինչը թույլ կտա տարբեր գործընթացների վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկեր ստանալու և նպաստելու ռիսկեի կառավարմանն ու «ճիշտ» որոշումների կայացմանը:

Միաժամանակ դեռևս անհրաժետություն կա աշխատանքներ ծավալելու ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի՝ հաստատության կառավարչական, ռազմավարական և որակի ապահովման գործընթացներում ներգրավելու նպատակով:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ չնայած կենտրոնն առաջին անգամ է ռազմավարական ծրագիր մշակել ու ներդրել և դեռևս նոր է որակի ապահովման համակարգը ներդրել, նաև դեռևս կատարելագործմանն ուղղված աշխատանքների անհրաժեշտություն կա, սակայն գործընթացների պլանավորումը հիմնականում բխում է հաստատության նյութական և այլ ռեսուրսների բավականին օպտիմալ պլանավորումից, միաժամանակ նկատելի է որակի ապահովման գործընթացների ազդեցությունը կառավարման գործընթացների վրա: Այս ամենը հանգեցրել է հաստատության շարունակական զարգացման:

ՖՀՄՈՒԿ-ի ՄԿԾ-ները կազմված են ՈԱՇ-ին և ՊԿՉ-ներին համապատասխան: Չնայած առկա չեն աշխատաշուկայի համակողմանի հստակ վերլուծություններ, սակայն աշխատաշուկայի ՍԵՊՌ-ի նախաձեռնությամբ իրականացվող ուսումնասիրությունները թույլ են տալիս կրթական ծրագրերի ներդրման գործընթացի համար զարգացման եաշխիքներ ապահովել, ՍԵՊՌ-ի նախաձեռնությամբ այլ ուսումնասիրություններ նաև արդեն եղած կրթական ծրագրերի շարունակականության և զարգացման երաշխիքներ են ստեղծում: Կենտրոնում կարևորում են դասավանդման և ուսումնառության փոխգործուն մեթոդների գործածումը, կարևորվում է գնահատման գործընթացի օբյեկտիվությունը: Աշխատանքներ են իրականացվել նաև ուսանողների պրակտիկ կարողությունների ապահովման ուղղությամբ, առկա են վերլուծական կարողությունների զարգացմանն ուղղված առանձին հաջողված հանձնարարություններ, սակայն այս ուղղություններով գործընթացները կատարելագործման

անհրաժեշտություն ունեն դեռևս։ Հատկանշական է, որ ՄԿԾ-ների մի շարք բարելավման գործընթացներ պայմանավորված են առանձին ուսումնասիրություններով, սակայն գործընթացի արդյունավետության համար կարևոր կլինի բազմակողմանի տվյալների հենքով համակողմանի վերլուծությունների իրականացումը։ Միաժամանակ փորձագիտական խումբը որպես երկարաժամկետ զարգացման հնարավորություններ է դիտարկում կրթական ծրագրերի միջազգայնացման և «արտադրության» ապահովման աշխատանքները։

ՖՀՄՈւԿ-ը ներդրել է դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, որը նաև բարելավել է, ինչն էլ նպաստել է գործընթացի արդյունավետության բարձրացմանը։ Հատկանշական ու կարևոր է, որ կենտրոնում առկա են դասախոսական կազմի կարիքների հենքով կատարելագործման գործընթացներ, որոնցում նշանակալի դերակատարություն ունեն ՍԵՊՌ-ի կողմից իրականացվող միջոցառումները։ Ինչպես նաև, որ հաստատությունում կիրառվում են դասախոսական կազմի գնահատման և առաջընթացի մեխանիզմներ, սակայն այդ մեխանիզմների՝ ռազմավարական նպատակների հետ փոխկապակցումը կնպաստի այդ գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու շարունակական զարգացմանը, միաժամանակ կնպաստի ռազմավարական նպատակների առավել արդյունավետ իրականացմանը։ Հաստատությունը մարդկային ռեսուրսների որոշակի համալրման անհրաժեշտություն ունի՝ ռազմավարական նպատակների իրագործման նպատակով։

ՖՀՄՈւԿ-ն ունի ՄԿԾ-ների իրականացման համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք մշտապես համալրվում են ընթացիկ դիտարկումների և արդի զարգացման միտումներով պայմանավորված։ Կենտրոնն հատուկ ուշադրություն է դարձրել շահակիցների համար անվտանգ և ապահով միջավայր ստեղծելու համար, գործածում է նաև ապահովագրական գործընթացներ։ Կենտրոնը հարցումներ է անցացնում ուսանողների շրջանում, սակայն ռեսուրսների կիրառելությունը և հասանելիությունը գնատող մեխանիզմները դեռևս հստակեցնելու և կատարելարծելու կարիք ունեն։

Վերոնշյալը նկատի ունենալով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈւԿ-ը ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում։

ՖՀՄՈւԿ-ն ապահովում է ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ գործընթաց, ընդ որում կարողացել է ապահովել դիմորդների աճ։ Կենտրոնը կարևորում է ուսանողների կրթական կարիքները և այս ուղղությամբ տարբեր գործընթացնե է իրականացնում, սակայն դեռևս ուսանողների մոտիվացվածության պակաս կա այս տեսանկյունից։ Գնահատելի են կենտրոնի կողմից կազմկերպված մի շարք միջոցառումները՝ ուսանողների հետաքրքրություններին ուղղված, ինչպես նաև նրանց՝ կարիերային նպաստող ծառայությունների իրականացումը։ Միաժամանակ նկատելի են շրջանավարտների հետ կապի ամրապնդմանն ուղղված աշխատանքները, սակայն դեռևս այս ուղղությամբ անելիքներ կան։ Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ քոլեջը աշխատանքներ ունի կատարելու՝ ուղղված ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածության ապահովմանը։

Փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը հետազոտական ոլորտում հիմնային աշխատանքների իրականացման անհրաժեշտություն ունի. քաղաքականության որդեգրում, հետազոտական ուղղությունների սահմանում, նպատակների սահմանում և դրանց ուղղված գործընթացների իրականացում։ Միաժամանակ կարևոր են այս ուղղությամբ խրախուսման մեխանիզմների ներդրումը և հետազոտական բաղադրիչը առաջընթացի մեխանիզմներում կարևորելը։ Դրանով հանդերձ փորձագիտական համար գնահատելի են դասախոսական կազմի կողմից ուսումնական գործընթացում իրենց իսկ հեղինակությամբ ուսումնամթդական

աշխատանքների, ձեռնարկների առկայությունը և գտնում է, որ հաստատությունն ունի համապատասան ներուժ հետազոտական ուղղությունը զարգացնելու համար: Այս առումով կարևոր է արդեն ձեռնարկված ծրագրերի մեկնարկը:

ՖՀՄՈՒԿ-ն ունի ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության մեխանիզմ, աշխատանքներ է իրականացնում գործընթացների թափանցիկության ապահովման ուղղությամբ: Կենտրոնը աշխատանքներ է կատարում հասարակությանը արժեքների և գիտելիքի փոխանցման ուղղությամբ, իրականացնում է կարճաժամկետ մի շարք ծրագրեր՝ շարունակաբար ընդլայնելով դրանք: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում, նկատելով մի շարք ուղղություններով հաստատությունում առկա լավ փորձը, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը կարող է ստանձնել հասարակական պատասխանատվություն դրանք համապատասխան մասնագիտական լայն շրջանակներում ներկայացնելու համար:

Հաստատությունը կարևորում է արտաքին կապերի հաստատումը, նաև՝ միջազգային գործընկերների հետ: Այս ուղղությամբ նկատելի են անընդհատ իրականացվող աշխատանքները, ինչը հանգեցրել է համագործակցության շրջանակի ընդլայնման, ինչն իր հերթին նկատելիորեն հանգեցրել է թե՛ ռեսուրսների շարունակական համալրման, թե՛ ուսանողների ու դասախոսների համար շարժունության և փորձի փոխանակման հնարավորությունների ստեղծման ու գործընթացների ապահովման: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ործատուների հետ համագործակցությունը բովանդակային առումով կատարելագործելու անհրաժեշտություն ունի: Փորձգիտական խումբը, հիմքում ունենալով հաստատության հնարավորությունները, նաև գտնում է, որ ուսանողների և դասավանդողների լեզվահմացության զարգացման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու անհաժեշտություն կա:

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը իրականացվող գործընթացներով ապահովում է հաստատության շարունակական զարգացումը, միաժամանակ գտնում է, որ զարգացման առավել լայն հնարավորություններ են առկա:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Մրցակից միջավայրում յուրօրինակ առաքելությունն և հավակնոտ տեսլականը երաշխավորող ՌԾ:
2. Ռազմավարական կառավարման գործուն տարրերի առկայություն և մշտադիտարկման մեխանիզմների կարևորում:
3. Մշտապես համալրվող նյութական ռեսուրսներ և կայուն ու բազմազանեցված ֆինանսական մուտքեր:
4. Կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի իրականացման փորձառություն:
5. Փաստաթուղթ-գործընթաց կապի կարևորում և առկա դրական նախադրյալներ:
6. Միջազգային փորձին և արդի պահանջներին համահունչ ՄԿԾ-ներ:
7. Միջազգային փորձի ուսումնասիրման և ներդրման մոտեցումների, ինչպես նաև դասավանդողների և ուսումնառողների ակադեմիական շարժունության առկայություն:
8. Ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:
9. Ուսանողակենտրոն միջավայրի և դասավանդման ու ուսումնառության փոխգործուն մեթոդների կարևորում:

10. Դասավանդողների ընտրության քաղաքականության և կատարելագործման ու մասնագիտական առաջընթացի մեխանիզմների առկայություն։
11. Հետազոտական աշխատանքներ իրականացնելու ներուժ։
12. Կրթական և այլ նպատակներից բխող ռեսուրսների շարունակական համալրում և թարմացում։
13. Ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքների առկայություն։
14. Արտաքին կապերի և համագործակցության լայն շրջանակ։
15. Միջազգային տարբեր կառույցներում, ծրագրերում ընգրկվածություն և հարուստ փորձ ու շարունակական զարգացման տենդենց։
16. Որակի ապահովման գործընթացներին ուղղված որոշ հետազոտությունների առկայություն և ատաքին գնահատման գործընթացների օբյեկտիվ պատկերի կարևորում։
17. ՊԻԳԲ շրջափուլն ամբողջապես անցած գործընթացների առկայություն։

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի թույլ ներգրավվածություն հաստատության կառավարչական, ռազմավարական և որակի ապահովման գործընթացներում։
2. Ըստ ռազմավարական նպատակների մարդկային ռեսուրսների որոշակի պակաս։
3. Ուսանողների վերլուծական, քննադատական, հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված հանձնարարականների պակաս և գործնական կարողությունների ու հմտությունների որոշակի անկատարություն։
4. Ուսանողների՝ սեփական կարիքների վերհանման մոտիվացվածության պակաս։
5. Հետազոտական ոլորտում նպատակների, հստակ քաղաքականության և խրախուսման մեխանիզմների բացակայություն։
6. Ներքին շահակիցների ռեսուրսային կարքների վերհանման, դրանց կիրառելությունը և հասանելիությունը գնատող մեխանիզմների անկատարություն։
7. Գործատուների հետ համագործակցության բովանդակային առումով նեղ շրջանակ։
8. Միջազգային զարգացման հնարավորություններին ոչ համահունչ լեզվաիմացության մակարդակ։
9. Բազմակողմանի տվյալների հենքով համակողմանի հետազոտությունների և վերլուծությունների պակաս։

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ներդնել ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի կարիքների վերհանման արդյունավետ մեխանիզմներ՝ ուղղված դրանց արտացոլմանը հաստատության նպատակների, խնդիրների և նոր հնարավորությունների ձևավորման հարցում։
2. Սահմանել ՌԾ նպատակների միջանկյալ և արդյունարար հստակ գնահատման առանցքային ցուցանիշներ/արդյունքներ և բարելավել մշտադիտարկման մեխանիզմները՝ ուղղված ռազմավարական նպատակների իրագործման համար ինստիտուցիոնալ երաշխիքների ապահովմանը։

Կառավարումն ու վարչարարությունը

3. Ապահովել դասախոսների և ուսանողների կառավարման գործընթացներում ինստիտուցիոնալ ներգրավման մեխանիզմներ՝ ուղղված շահակիցների տեսակետների լիարժեք ներկայացվածության ապահովմանը:
4. Բարելավել ռազմավարական կառավարման մեխանիզմները՝ հստակեցնելով պլանավորման և գնահատման գործընթացները և ուշադրություն դարձնելով ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված մարդկային ռեսուրսների ապահովմանը:
5. Ներդնել տարբեր գործընթացների և փաստաթղթերի արդյունավետության գնահատման մեխանիզմներ բազմակողմանի վերլուծությունների հիման վրա՝ ուղղված ըստ կառավարման հիմնական սկզբունքի դրանց շարունակական բարելավման և հետազոտահենք կառավարման ապահովմանը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

6. Ապահովել ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանն ուղղված հանձնարարականներ և առավել բարելավել գործնական կարողությունների և հմտությունների զարգացման գործընթացը՝ կիրառելով առկա ռեսուրսային հնարավորություններն ու զարգացնելով գործատուների հետ համագործակցությունը:
7. Դիտարկել ըստ իրականացվող կրթական ծրագրերի «արտադրության» հնարավորությունը և քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ՝ ուղղված արտադրական պրակտիկաների առավել արդյունավետ կազմակերպմանը և դրա միջոցով հաստատության զարգացման ապահովմանը:
8. Դիտարկել իրականացվող կրթական ծրագրերի միջազգայնացման հնարավորությունները և քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ՝ ուղղված հաստատության տեսանելիության բարձրացմանը, միջազգայնացմանն ու զարգացման երկարաժամկետ և արդյունավետ երաշխիքների ստեղծմանը:

Ուսանողները

9. Ապահովել եղած տարբեր մեխանիզմներով ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված ուսանողների առավել մոտիվացվածության բարձրացում՝ ուղղված նրանց կարիքների բավարարման արդյունավետության բարձրացմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

10. Ապահովել կրթական նպատակներով պայմանավորված համապատասխան ուսումնաօժանդակ կազմ:
11. Բարելավել դասախոսական կազմի գնահատման և ատեստավորման մեխանիզմները՝ դրանք կապակցելով ՄՈՒՀ-ի ՌԾ նպատակների և զարգացման միտումների հետ-ի: Ներառել դրանցով պայմանավորված գործոններ՝ լեզվաիմացություն, հետազոտական աշխատանքների իրականացում, մասնագիտական որակներ և այլն:

Հետազոտությունը և զարգացումը

12. Սահմանել ՄՈՒՀ-ի առանձնահատկություններից բխող հստակ հետազոտական ոլորտի քաղաքականություն՝ առանձնացնելով որոշակի հետազոտական ուղղություն/ներ՝ ապահովելով ոլորտի զարգացումը:

13. Հետազոտական նպատակներով պայմանավորված ներդնել դասախոսական կազմի և ուսանողների հետազոտական աշխատանք իրականացնելու խրախուսման մեխանիզմներ՝ ապահովելով միջազգային փորձի ուսումնասիրումը և նորարարական գաղափարների ներմուծումը:
14. Մշակել և բազմազանեցնել ուսանողներին ներկայացվող վերլուծական, քննադատական, հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականները: Ապահովել ուսանողների հետազոտական աշխատանքների իրականացումը մոտիվացնող և խթանող միջավայր:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

15. Մշակել և ներդնել ներքին շահակիցների ռեսուրսային կարքների վերհանման, ինչպես նաև դրանց կիրառելությունը և հասանելիությունը գնատող մեխանիզմներ՝ ուղղված գործընթացների արդյունավետության շարունակական երաշխիքների ստեղծմանը :

Հասարակական պատասխանատվությունը

16. Համապատասխան քայլեր ձեռնարկել ՖՀՄՈՒԿ-ի տաբեր գործընթացների հետ կապված լավ փորձը համապատասխան մասնագիտական լայն շրջանակներում ներկայացնելու

Արտաքին կապերը և միջազգայնացումը

17. Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակները նաև բովանդակային առումով՝ ուղղված հաստատության տարբեր գործընթացների և ՌԾ նպատակների արդյունավետության առավել բարձրացմանը:
18. Նկատի ունենալով հիմնադրամի միջազգային կրթական ծրագրեր իրականացնելու հնարավորությունները՝ ապահովել ներքին շահակիցների օտար լեզուների իմացության համապատասխան մակարդակ:

Որակի ներքին ապահովման համակարգը

19. Ապահովել ներքին և արտաքին շահակիցների մոտիվացված ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում՝ ուղղված հետազոտությունների օբյեկտիվության ապահովմանն ու գործընթացների շաունակական բարելավման երաշխիքների ամրապնդմանը:
20. Գործոնություն (ուշադրություն դարձնելով նաև բազմակողմանի տվյալների հավաքագրմանն ու համակողմանի վերլուծությունների իրականացմանը), ինչպես նաև գնահատումների հենքով դրանց բարելավման գործընթաց՝ ուղղված հետազոտությունների արժանահավատության ապահովմանը:

Ամսաթիվ՝ 10.01.2024 թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. Արմենուհի Սարգսյան- ֆիզ.մաթ.գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբիղեկավար:

2. Օլյա Ավետիսյան- Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ, Հագուստիմոդելավորում և նախագծում դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

3. Էլեոնորա Ղազարյան – ԵՊԲՀ մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնիդոցենտ, բ.գ.թ., փորձագիտական խմբի անդամ:

4. Թամարա Պետրոսյան-Հայկական բժշկական համալսարանի Բուժական գործ մասնագիտության 5-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քարտուղարության բաժնի մասնագետ՝ Լիլիթ Ղազարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և գործընթացի համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնն 09.02. 2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափին համապատասխան դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (03.03.2023թ.) Հիմնադրամի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Կենտրոնը ինքնավերլուծությունն իրականացրել է ՖՀՄՈՒԿ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Կենտրոնն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 25.05.2023թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների

կողմից/14/: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է ՖՀՄՈՒԿ-ի համապատասխան աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները: Ինքնավերլուծությունը հիմնականում եղել է և նկարագրական և բավականաչափ վերլուծական, ինչը փորձագետներին հնարավորություն է տվել նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

Հիմնադրամի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Այնուհետև, ըստ հստատված ընթացակարգի, փորձագիտական խումբը, ուսումնասիրելով հիմնադրամի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակրգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական հանդիպումներ և այլն: Մասնագիտական հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միանում է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ հիմնադրամի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության տիրույթում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախանական այց

2023թ. հոկտեմբերի 9-ին ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի և փորձագիտական խմբի համակարգողի կողմից իրականացվել է նախնական այց «Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամ: Հանդիպման ընթացքում հաստատությանն է ներկայացվել և համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի

և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ.հոկտեմբերի 16-19-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (15.10.2023թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն ունեցել են փակ հանդիպում-քննարում: Հանդիպման նպատակն էր՝ դուրս բերել կենտրոնի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:
Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է հաստատության տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների և ուսումնական պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ և 19.12.2023թ. ներկայացվել ՖՀՄՈՒԿ-ին: Հիմնադրամի կողմից նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ և առարկություններ չեն եղել: Փորձագիտական խումբը կազմել է վերջնական զեկույցը և ներկայացրել քոլեջին 10.01.2024թ.:

Համակարգողի ստորագրությունը

10.01.2024թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Պատմություն. «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: 1995 թվականին Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունների միջև կնքված մշակույթի, գիտության և տեխնիկայի բնագավառներում համագործակցության համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության (ի դեմս Կրթության և Գիտության նախարարության և Երևանի քաղաքապետարանի), Ռոնի Գլխավոր Խորհրդի, Լիոնի քաղաքապետարանի, «Ռոն-Հայաստան-վերապատրաստում-փոխանակումներ» կազմակերպության (ՌԱՖ) և Ռոնի մասնագիտական կրթության ընկերության (ՄԵՊՌ) կողմից ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ ստեղծված կազմակերպություն է:

Հիմնադրամը ստեղծվել է 06.02.2001 թվականին, Հիմնադրամի գործունեությունն անժամկետ է:

2.Կրթություն. Հիմնադրամում սովորողների ուսուցմը կազմակերպվում է միջնակարգ հանրակրթական, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական, առկա ուսուցմամբ: Հիմնադրամի գործունեության հիմնական առարկան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի (ՈԱԾ 4-րդ և 5-րդ մակարդակներ) իրականացումն է:

Ներկայումս Հիմնադրամում գործում են հետևյալ հինգ մասնագիտությունները.

- Ատամնատեխնիկական գործ
- Խոհարարական գործ
- Հրուշակեղենի տեխնոլոգիա
- Կարի արտադրության տեխնոլոգիա
- Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում:

Ակադեմիական ծրագրերից բացի, Հիմնադրամն իրականացնում է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր երիտասարդների ու մեծահասակների մասնագիտական ուսուցման և կատարելագործման նպատակով:

Հիմնադրամի ՌԾ-ի նպատակներից է ուժեղացնել այն՝ ապահովելով որակյալ ակադեմիական և լրացուցիչ կրթություն, դասավանդման նոր տեխնոլոգիաներ, բարձր որակավորում ունեցող դասավանդողներ, մանկավարժական գործունեության գնահատման գործիքներ: Հաստատությունում կարևորվում է դասախոսական համակազմի համալրումը նոր, երիտասարդ, բանիմաց կադրերով: Գործընթացների արդյունավետ իրականացման համար գործում է որակի ապահովման համակարգը:

Հաստատությունը ուսանողների համար ստեղծում և ապահովում է համապատասխան կրթական, իրական մասնագիտական միջավայր՝ անհատական աշխատանքային տարածք, պրոֆեսիոնալ նյութեր և գործիքներ գործնական աշխատանքները արդյունավետ կատարելու համար:

3. Հետազոտություն. Հիմնադրամը իր առջև խնդիր է դնում ստեղծել ուսանողների և դասավանդողների համար հետազոտական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտ պայմաններ՝ զարգացնելու համար վերջիններիս համապատասխան կարողությունները և վերլուծական միտքը: Հիմնադրամի հավակնությունն է հետազոտական ծրագրերի և աշխատանքների ներդրմամբ նպաստել Հիմնադրամի զարգացմանը՝ ստեղծելով

հետազոտական պրոդուկտներ, որոնք կնպաստեն մասնագիտական կրթության որակի բարձրացմանը, արժևորմանը, ոլորտի նկատմամբ տեսանելիության և գրավչության ավելացմանը:

4. Միջազգայնացում. Հիմնադրամն իր կանոնադրության համաձայն՝ ստեղծվել է ֆրանս-հայկական համագործակցության արդյունքում և հիմնադրման օրվանից ինտեգրված է իր պատմական գործընկեր ՍԵՊՌ-ի հետ պլանավորված փոխանակման ծրագրերում: Հիմնադրամի ՌԾ տեսլականում սահմանված է միջազգայնացման վերաբերյալ գործունեության ամբիցիան, որի ուղղությամբ գործուն քայլերը շարունակաբար արդիականացվում են: Հիմնադրամի գործունեության արդյունավետության գնահատականն է հանդիսանում շրջանավարտների ինտեգրումը Հայաստանում գործող եվրոպական բարձրակարգ ձեռնարկություններում, գրանցելով բարձր արդյունք կարճ ժամանակահատվածում՝ շնորհիվ իրենց մրցունակության:

5. Որակի ապահովում. Ըստ Հիմնադրամի ՌԾ-ի, ՀՀ կրթության համակարգում որակի ապահովման առաջնահերթությամբ պայմանավորված՝ հաստատությունը կարևորում է Որակի ապահովման համակարգի ներդրումը ՖՀՄՈՒԿ-ում: Որակի ապահովման գործընթացները հիմք են հանդիսանում դասավանդման, ուսումնառության և կառավարման համակարգում ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու, հետագծելիությունը ապահովելու համար, ինչն էլ իր հերթին կայուն ուղի է հարթում հաստատության զարգացման, մրցունակության և վարկանիշի բարձրացման համար: Որակի ապահովման համակարգը Հիմնադրամում ներդրվել է 2021 թվականին: նշանակվել է կրթության որակի ապահովման պատասխանատու, սահմանվել պատասխանատուի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Որակի ապահովման համակարգի ներդրմանը զուգահեռ մշակվել և հաստատվել են որակի ապահովման քաղաքականություն և որակի ապահովման գործընթացները համակարգող այլ փաստաթղթեր:

Աղբյուր. վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: 2022 թ-ին հաստատվել է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» /այսուհետ՝ ՖՀՄՈՒԿ, Կենտրոն/ հիմնադրամի 2022-2027 թթ.-ի ՌԾ, որը հաստատության ՌԾ մշակման և ներդրման առաջին փորձն է: Ըստ փաստաթղթի սահմանվում է հաստատության առաքելությունն ու տեսլականը:

Որպես առաքելություն նշվում է.

· Հայաստանում ստեղծել մասնագիտական կրթության օրինակելի կառույց, որը թույլ կտա հայ երիտասարդներին ստանալ որակյալ մասնագիտական կրթություն նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով:

· Հնարավորություն տալ ուսումնառողներին հետագա կյանքում ինքնահաստատվել և դառնալ հաջողակ ձեռք բերած հմտությունների և կարողությունների շնորհիվ, որոնք կլինեն համահունչ աշխատաշուկայի պահանջներին և շարունակական զարգացումներին:

· Ֆրանսերեն լեզվի ուսուցման շնորհիվ հնարավորություն տալ սովորողներին ոչ միայն ծանոթանալ օտար մշակույթին, այլ նաև շփվել արտասահմանյան գործընկերների հետ, մասնավորապես փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Ըստ տեսլականի նշվում է.

- Երկխոսության մեջ դնել մասնագիտությունները Եվրոպայում և Հայաստանում:
- Օգտվելով մարդկային և նյութատեխնիկական ողջ ներուժից ու հնարավորություններից՝ ապահովել ժամանակակից մասնագիտական կրթություն՝ համապատասխան աշխատաշուկայիպահանջներին:
- Քայլել եվրոպական կրթական համակարգի զարգացմանը համահունչ:
- Կարևորել ֆրանկոֆոնիայի դերը մասնագիտական ուսուցման մեջ:

ՖՀՄՈՒԿ-ը կրթական ծրագրեր է իրականացնում ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում:

Ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզվեց, որ, չնայած ՖՀՄՈՒԿ-ը գտնվում է մայրաքաղաքում և առկա են ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում կրթական ծրագրեր իրականացնող բազմաթիվ այլ ուսումնական հաստատություններ, ՖՀՄՈՒԿ-ը նախանշել և զբաղեցրել է իր առանձնահատուկ տեղը այդ մրցակցային դաշտում: Առանձնակի դերն ու նշանակությունը և առաքելությամբ ընդգծված առանձնահատկությունները հիմնականում ընկալելի են նաև շահակիցների կողմից: Նրանց կողմից հատկապես կարևորվում են միջազգային ծրագրերում ներգրավվելու, ինչպես նաև միջազգային մոտեցումներին և հարուստ նյութատեխնիկական բազայի հենքով համապատասխան կրթություն ստանալու հնարավորությունները:

ՖՀՄՈՒԿ-ը աշխատաշուկայի հստակ առանձնացված ուսումնասիրություններ և վերլուծություններ չունի, սակայն կրթական ծրագրերի ներդրման և դրանց զարգացման գործընթացները փոխպայմանավորված են հոգաբարձուների խորհրդի անդամ և համահիմնադիր ՍԵՊՌ-ի ներկայացուցիչների բազմակողմանի մշտադիտարկումներով կենտրոնում և

կենտրոնի համագործակից գործատուների մոտ, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի և էկոնոմիկայի նախարարությունների տվյալներով:

ՖՀՄՈՒԿ-ը, ըստ ՌԾ-ի, հիմնականում ունի առաքելությունից բխող համապատասխան նպատակներ, սակայն նպատակներում արտահայտված չէ առաքելությամբ և հեռանկարով նախանշված միջազգային կապերի և գործընթացների ուղղությունը: Դրա հետ մեկտեղ, փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ այս ուղղություններով քոլեջն իրականացնում է գործընթացներ, նախատեսում է համապատասխան զարգացումներ (առկա են արդեն հաստատված ծրագրեր, ընդլայնվում են համագործակցության շրջանակները) և ունի լուրջ հնարավորություններ:

Հիմնադրամը որպես ներքին շահակիցներ առանձնացնում է ուսանողներին ու դասախոսներին, իսկ որպես արտաքին շահակիցներ՝ դիմորդներին, շրջանավարտներին, գործատուներին և այլն: Ուսումնասիրությունների և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ հիմնադրամի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները ձևավորվել են գլխավորապես ղեկավար կազմի կողմից, հատկապես հիմնադրամի անդամ համահիմնադիր ՍԵՊՌ-ի և տնօրենի սերտ համագործակցության արդյունքում: Շահակիցները հիմնականում մասնակցություն չեն ունեցել ՌԾ նպատակների ձևավորմանը, քննարկումներ և հստակ մեխանիզմներ չեն եղել, սակայն դրանով հանդերձ այդ գործընթացներում որոշակի ներգրավվածություն ունենում են այն դասավանդողները, ովքեր միաժամանակ նաև վարչական աշխատողներ են: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, նաև, որ գործատուների հետ կապը թույլ է և գործատուներն ունեն առաջարկներ, որոնք կարող են նոր հնարավորությունների հիմք հանդիսանալ, մասնավորաբար գործատուների կողմից դասավանդողների պրակտիկ հմտությունների զարգացման, հետազոտությունների իրականացման և այլնի համար: Հիմնադրամը որպես ՌԾ նպատակների ձևավորմանը շահակիցների ներգրավվածության ապահովման մեխանիզմներ նշում է նրանց կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ (հարցումներ, ՈւԽ և այլն), սակայն դրանց ազդեցությունը ՌԾ նպատակների ձևավորման հարցում դեռևս նկատելի չէ:

Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցների մոտեցումների դիտարկման տեսանկյունից կարևոր նշանակություն են ունենում ՍԵՊՌ-ի կողմից իրականացվող այցերը և դրա շրջանակում մշտադիտարկումները:

Առկա է 2022-2027 թթ.-ի ՌԾ գործողությունների իրականացման ժամանակացույց, որտեղ գործողությունների համար սահմանված ժամկետները հիմնականում ներառում են 3-5 տարի ժամանակահատված, նշում են ցուցիչներ, սակայն դրանք չափելի չեն (Բարեկարգված շենքային պայմաններ, Գործող մասնագիտությունների գծով վերապատրաստված դասավանդողներ, ՄԿԾ-ներից գործատուների բավարարվածության վերաբերյալ տվյալների հավաքագրում, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայություն և այլն): Փորձագիտական այցից պարզվեց, որ մի շարք ուղղություններով հիմնադրամի ղեկավար կազմի մոտ ավելի հստակ են ձևավորված նախատեսվող արդյունքները, քան դրանք արտահայտված են փաստաթղթում, մասնավորաբար նոր կրթական ծրագրերի ներդրման, շենքային պայմանների ընդլայնման և բարելավման ուղղություններով:

ՖՀՄՈՒԿ-ի ստորաբաժանումները և տնօրենը ներկայացնում են հաշվետվություններ, սակայն դրանք հստակորեն չեն կապվում ՌԾ արդյունքների հետ, գլխավորապես նկարագրական բնույթ են կրում: Տնօրենի հաշվետվությունները մինչ ՌԾ-ն և դրանից հետո նույն բնույթի են և նկարագրական են: Քոլեջը նաև ըստ ՌԾ-ի 2022 թ.-ի կատարողական է

ներկայացրել համապատասխան ՌԾ գործողությունների, որը ՌԾ գնահատման առաջին փորձն է: Այստեղ տարբեր գործողությունների պարագայում որպես արդյունքներ հղում են տրվում ստորաբաժանումների և հիմնադրամի աշխատանքային պլաններին և հաշվետվություններին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ ՖՀՄՈՒԿ-ը կրթություն է իրականացնում ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան և որդեգրել է դրանց համահունչ նպատակներ, առաքելություն և տեսլական:

Փորձագիտական խումբը փաստում և դրական է համարում, որ հիմնադրամը, որպես ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում կրթական ծրագիր իրականացնող հաստատություն, իր յուրահատուկ տեղն է զբաղեցրել բավականին մրցակցային դաշտում, ունի ընդգծված առանձնահատկություններ ու մոտեցումներ, որոնք բոլոր կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում նկատելի են: Դրական է, որ հիմնադրամը որոշակիացրել և ամրագրել է առաքելությունն ու տեսլականը, որոնք բավականին հավակնոտ են, սակայն իրականանալի և համահունչ հաստատության հնարավորությունների հետ: Հիմնադրամը ՌԾ-ում առաջադրել է դրանց ուղղված նպատակներ ու խնդիրներ, սակայն փորձագիտական խումբը համարում է, որ նպատակները համալրման անհրաժեշտություն ունեն որոշ ուղղություններով (մասնավորաբար՝ միջազգային կապերի և գործընթացների ուղղությունը)՝ որպեսզի ապահովվի «առաքելություն և տեսլական»-«նպատակներ և խնդիրներ» լիարժեք համահունչություն, առավել ևս, որ այդ ուղղություններով գործընթացներն իրականում անտեսված չեն և ակտիվորեն ծավալվում են: Փորձագիտական խումբը փաստում է նաև, որ ՖՀՄՈՒԿ-ը կարող է ստանձնել և աշխատանքներ ձեռնարկել նաև միջազգային կրթական հաստատություն դառնալու ուղղությամբ:

Փորձագիտական խմբի համար նկատելի է, որ հիմնադամը կարևորում է իր շահակիցների ներգրավումը ռազմավարական ուղղությունների և նպատակների ձևավորման հարցում, ինչպես նաև աշխատաշուկայի դիտարկման տեսանկյունից կարևոր են ՍԵՊՌ-ի կողմից այցերն ու այդ շրջանակում իրականացված մշտադիտարկումները և նկատելի է այս գործընթացի արդյունավետ ազդեցությունը: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբը կարևորում է ներքին (դասավանդողներ և ուսանողներ) և արտաքին (հատկապես՝ գործատուներ) շահակիցների առավել լայն շրջանակների ներգրավումը այս գործընթացներում, քանի, որ այդ պարագայում առավել լայն հնարավորություններ և խնդիրների լուծման այլընտրանքային ուղիներ ի հայտ գալու հավանականություն է ստեղծվում, ինչը կարող է զարգացման նոր ուղղություններ առաջացնել: Միաժամանակ դա կնպաստի նրանց՝ այդ նպատակների իրագործմանն առավել մոտիվացված ներգրավմանը: Այս տեսանկյունից, փորձագիտական խումբը կարևորում է հստակ ինստիտուցիոնալ արդյունավետ մեխանիզմների ներդրմանը՝ ուղղված շահակիցների առավել լայն շրջանակի ներգրավմանը ռազմավարական ուղղությունների և նպատակների ձևավորման հարցում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒԿ-ի՝ ՌԾ մշակելու և ներդնելու առաջին փորձը բավականին հաջողված է, նպատակները հիմնականում բխում և համապատասխանում են իրականացվող գործընթացներին: Դրական է նաև այն, որ հիմնադրամը կարևորել է ՌԾ մշտադիտարկման գործընթացը, այն կանոնակարգող փաստաթուղթ է ներդրել և ըստ դրա ՌԾ կատարողականի գնահատման մեկ տարվա փորձ ունի: Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ այս գործընթացների արդյունավետությունը կարող է տուժել միջանկյալ արդյունքների բացակայության և անհստակ և ոչ չափելի

ցուցիչների, ինչպես նաև՝ դրանց արդյուքում ոչ հստակ կատարողականի պատճառով։ Փորձագիտական խումբը նշում է, որ այս ուղղությամբ գործընթացների բարելավումը և հաշվետվությունների փոխկապակցումը կարող է ստեղծել ռազմավարական նպատակների լիարժեք ապահովման ինստիտուցիոնալ երաշխիքներ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՖՀՄՈՒԿ-ը ստանձնել է յուրօրինակ և ՈԱՇ-ին համահունչ առաքելություն, հավակնոտ տեսլական, ունի դրանք երաշխավորող ՌԾ, որն արտահայտում է հիմնադամի հիմնական նպատակները, կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանումն ու ներգրավվածությունը ռազմավարական գործընթացներում, կարևորել է ՌԾ մշտադիտարկման մեխանիզմի ներդրումն ու առկա են գործընթացներ այս ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար։

II.ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: ՖՀՄՈՒԿ-ը հիմնադրամ է, որը գործում է ըստ հաստատված կանոնադրության և գործող համապատասխան օրենքների։ Հիմնադրամի կառավարման հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է։ Հատկանշական է, որ ՖՀՄՈՒԿ-ի ֆինանսական մուտքերի մեծ մասն ապահովվում է Հոգաբարձուների խորհրդի միջոցով։ Փորձագիտական այցից պարզվեց, որ ՍԵՊՌ-ը ՀԽ-ում որոշումների կայացման տեսանկյունից որոշիչ դեր ունի։ Որոշումների կայացման համար հիմնականում հիմք են հանդիսանում ՍԵՊՌ-ի կողմից ՖՀՄՈՒԿ այցելությունների ժամանակ կատարված ուսումնասիրությունները և տնօրենի հետ սերտ համագործակցությունը։ Միաժամանակ կայացրած որոշումների իրականացման տեսանկյունից վերահսկողական լուրջ մոտեցումներ են գործում ՍԵՊՌ-ի կողմից, ինչը արտահայտվում է ինչպես այցելությունների ժամանակ դիտարկումներով, այնպես էլ՝ ընթացիկ պարբերական ֆինանսական և այլ հաշվետվություններով։ ՀԽ-ում ներգրավված չեն դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչներ։

Հիմնադրամի տնօրենը վերահսկողություն է իրականացնում հաստատության ընթացիկ գործունեության վրա, սահմանված ժամանակացույցով, ամեն ամիս ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում ՀԽ-ին։

Հիմնադրամում առկա է Ուսումնամեթոդական խորհուրդ, որը ուսումնական գործընթացի հետ կապված մի շարք հարցեր է ներկայացնում ՀԽ-ի հաստատմանը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս կերպ որոշակիորեն դասավանդողների կարիքները և մոտեցումները ներկայացվում են ՀԽ, սակայն դա գլխավորապես այն դասավանդողների պարագայում է արտահայտվում, ովքեր միաժամանակ վարչական աշխատակիցներ են։ Փորձագիտական այցից

պարզվեց, որ վարչական աշխատակիցներ չհանդիսացող դասավանդողները և ուսանողները հիմնականում ներգրավված չեն իրենց առնչվող որոշումների կայացմանը: Միաժամանակ, չնայած որոշումներից հետո դրանց մասին առանձին իրազեկման աշխատանքներ չեն իրականացվում, սակայն նրանք իրազեկվում են դրանց մասին՝ ի շնորհիվ այդ որոշումներին համապատասխան գործընթացների իրականացման: Ուսանողական կազմի ներկայացուցիչներ ներգրավված չեն Ուսումնամեթոդական խորհրդում: Չնայած ըստ ինքնավերլուծության՝ անհրաժեշտության պարագայում նիստերին կարող են ներգրավել ուսանողների, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ նման նախադեպեր չեն եղել:

ՖՀՄՈՒԿ-ն ունի կազմակերպական կառուցվածք, որն արտահայտում է հիմնական ենթակայական կապերը:

Հիմնադրամում ուսումնական աշխատանքների համակարգումն ու կառավարումն իրականացնում է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Առկա է Կարիերայի կենտրոն, Որակի ապահովման կենտրոն, Ռեսուրսների կենտրոն, Հաշվապահություն՝ յուրաքանչյուրում մեկական աշխատակից, կես դրույքաչափով: Ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգված է փաստաթղթերով, աշխատակիցների գործառույթները սահմանվում են պաշտոնների անձնագրերով:

ՖՀՄՈՒԿ-ում Որակի ապահովման պատասխանատուն միաժամանակ Կադրային գծով պատասխանատու և տնօրենի օգնական է: Կարիերայի կենտրոնի պատասխանատուն միաժամանակ Ռեսուրս կենտրոնի պատասխանատուն է և Հայոց լեզու և գրականություն առարկաների դասախոս: Հիմնադրամը առավելություն է համարում բազմագործառութային աշխատակիցներ ունենալը և նշում է, որ այդ կերպ ապահովում է դասավանդողների ներգրավումը կառավարման գործընթացներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ աշխատակիցները հստակ պատկերացնում են իրենց գործառութային շրջանակները տարբեր վարչական պաշտոններին համապատասխան և ապահովում են տարբեր ուղղություններով արդյունքներ՝ դրսևորելով այդ ուղղություններով համապատասխան կոմպետենցիաներ: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունների և փորձագիտական այցի արդյունքում, փորձագիտական խումբը նշում է խիստ ծանրաբեռնվածության մասին, ինչը նաև դրսևորվում է տարբեր ուղղություններով: Միաժամանակ փորձագիտական այցից պարզվեց, որ ղեկավար կազմը գտնում է, որ ՌԾ նպատակների իրականացման համար մարդկային ռեսուրսների համալրման անհրաժեշտություն կա և որոշ ուղղություններով նախատեսումներ ունեն:

Փորձագիտական այցից պարզվեց, որ տնօրենն անընդհատ աշխատանքային կապի մեջ է փոքր վարչական աշխատակազմի հետ, տիրապետում է հաստատությունում առկա հիմնական խնդիրներին: Նաև պարզվեց, որ խնդիրները ՀԽ-ին տնօրենի միջոցով են հասնում, և դրանց լուծումները գլխավորապես տնօրեն-ՍԵՊՌ օպերատիվ համագործակցությամբ են լուծվում:

Փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ստորաբաժանումների կարիքներին համապատասխան նյութական ռեսուրսների համալրումներն իրականացվել են ըստ պահանջագրերի և դրանք հիմնականում ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներով:

Հիմնադրամի ֆինանսական մուտքերը գոյանում են ուսման վարձերից, լրացուցիչ կրթական ծրագրերով նախատեսված դասընթացներից, ՍԵՊՌ Ավընիր դոտացիոն ֆոնդի կողմից հատկացված դրամաշնորհներից (որը առավել, քան 40%-ն է), տեղական և միջազգային գործընկեր այլ կազմակերպությունների օժանդակություններից: Վերջին տարին նվազել է ՍԵՊՌ Ավընիր դոտացիոն ֆոնդի կողմից հատկացված միջոցները, չնայած որ ընդհանուր

մուտքային ֆոնդը աճել է: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՖՀՄՈՒԿ-ը կարևորում է ՍԵՊՌ Ավընիվ դոտացիոն ֆոնդի հատկացումներից կախվածության փոքրացումը և այս ուղղությամբ գործուն քայլեր է ձեռնարկում ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ՝ հատուկ աշխատանքներ ծավալելով կարճաժամկետ ծրագրերի և միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացմամբ: Այդկերպ արդեն իսկ կարողացել են ապահովել մուտքերի աճ: Մասնավորաբար կարճաժամկետ ծրագրերից մուտքերը 2021 թ.-ին եղել է 3.145.000 ՀՀ դրամ, իսկ 2022 թ.-ին՝ 17.129.000 ՀՀ դրամ: Հիմնադրամը նաև ավանդային ներդրում ունի: ՖՀՄՈՒԿ-ը ֆինանսական հատկացումներ է կատարում աշխատավարձերի վճարման, ռեսուսների համալրման, վերանորոգումների, վերապատրաստումների և այլ ուղղություններով: Չնայած ֆինանսական արտահայտված խնդիրներ առկա չեն և տարբեր ուղղություններով պատշաճ հատկացումներ են կարողանում կատարել, սակայն դրա հետ մեկտեղ, փորձագիտական այցից պարզվեց, որ կարևորվում է ֆինանսների արդյունավետ կառավարումը և այս տեսանկյունից գործածում են նաև ներքին հնարավորությունները: Մասնավորաբար, ներքին ուժերով մշակել են ուսանողների օրագրերի ձևաչափեր, որոնք առավել հարմարեցված են ներքին նպատակներին և դրանց համար առավել քիչ գումար են ծախսում, քան եթե օգտվեին շուկայում առաջարկվող համապատասխան ծառայություններից: Հիմնադրամը նաև կարևորում է լրացուցիչ աշխատանքների համար աշխատակիցների վճարումը և սրա համար հստակ մեխանիզմ է գործածում, ըստ դասավանդողների վարձատրության տարիֆիկացիայի սահմանվում է լրացուցիչ պարտականությունների վճարում:

ՖՀՄՈՒԿ-ում գործում է 2018 թ-ին հաստատված Ներքին կարգապահական կանոնակարգ, ըստ որի սահմանվում են մի շարք գործընթացներ, այդ թվում նաև՝ աշխատակիցների պարտականությունները, ուսանողների և աշխատակիցների էթիկան և վարքագիծը: Փորձագիտական այցից պազվեց, որ սահմանված նորմերին հետևելը կարևորվում է հիմնադրամի կողմից:

Հիմնադրամում երկարաժամկետ պլանավորման փորձն առաջին անգամ է և արտահայտվում է 2022-2027 թթ.-ի ՌԾ-ով: Առկա է ՌԾ գործողությունների պլան, որում յուրաքանչյուր գործողության համար նշվում են պատասխանատուներ: Առկա չեն ՌԾ ֆինանսական պլանավորումներ: Սահմանված են ցուցիչներ, որոնց անհստակության հետ կապված առկա են որոշ խնդիրներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ղեկավար կազմն առավել հստակ է պատկերացնում առաջիկա անելիքները և հստակ քայլեր է ձեռնարկել նույնիսկ առավել ֆինանսական ռեսուրսներ պահանջող գործընթացների ուղղությամբ, մասնավորաբար, տարածքի ընդլայնման, ռեսուրսների շարունակական զագացման ուղղություններով և այլն: Նաև պարզվեց, որ ունեն մոտավոր հաշվարկ և պատկերացում, թե ՌԾ-ի իրականացման համար ինչպիսի ֆինանսական ռեսուրս է պահանջվելու: Ղեկավար կազմը գիտակցում է, որ եղած մարդկային ռեսուրսները բավարար չեն ՌԾ խնդիրների լուծման համար և այս ուղղությամբ նախատեսում է համալրումներ: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ իրականում նախատեսվող և իրականացվող գործընթացներն ավելին են, քան արտահայտված է ՌԾ գործողությունների պլանով, մասնավորաբար միջազգային ծրագրերի և գործընթացների, ռեսուրսների համալրման ուղղություններով:

ՖՀՄՈՒԿ-ն իրականացնում է միջնաժամկետ (ՍԵՊՖԱ Ֆրանսիայի Լիոն քաղաքում գործող Բյուլլուկյան հիմնադրամի ֆինանսավորմամբ ծրագիր, Ֆրանսիայում գործող ԱՖՐԱՏ ուսումնական կենտրոնի հետ համատեղ ծրագիր, Էրազմուս +-ի շրջանակներում ծրագիր և այլն) և կարճաժամկետ միջազգային և ազգային ծրագրեր՝ ըստ նախապես կազմված պլանների և

ներկայացնում է դրանց վերաբերյալ ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ՝ արդյունքների հենքով։

Որպես կարճաժամկետ ծրագրեր կուրսղեկների և ստորաբաժանումների տարեկան պլաններն են, որոնք սակայն չեն կապակցվում ՌԾ-ի գործողությունների հետ, այլ բխում են կանոնակարգային գործառույթներից։ Հաշվետվությունները նկարագրում են տարբեր գործընթացներ, սակայն հստակորեն չեն կապակցվում ՌԾ արդյունքների հետ։ ՖՀՄՈՒԿ-ը նաև ըստ ՌԾ-ի գործողությունների 2022 թ-ի կատարողական է կազմել, սակայն միջանկյալ արդյունքների բացակայության և ներկայացված կատարողականի գլխավորապես հաշվետվություններին հղում տալը թույլ չի տալիս միջանկյալ գնահատում իրականացնել։

Հաշվետվությունները նաև հիմնականում չեն պարունակում բազմակողմանի տվյալների հենքով համակողմանի վերլուծություններ, որոնք կծառայեին հետագա որոշումների համար հենք։ Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, տնօրենի հաշվետվությունում անդրադարձ է կատարվում, թե դիմորդները, որ մարզերից են, և սա հիմք է հանդիսանում դիմորդների հավաքագրման հետագա աշխատանքների կազմակերպման ժամանակ, մասնավորապես մարզեր այցեր կազմակերպելու։ ՍԵՊՌ-ի կողմից իրականացվող այցերն իրենց բնույթով բազմակողմանի մշտադիտարկում են ներկայացնում, որի ժամանակ և՛ դիտարկվում են նախատեսված գործընթացների արդյունքները, և՛ վեր են հանվում կարիքներ, և՛ ուսումնասիրություններ են իրականացվում։ Մասնավորաբար գործատուների հետ հանդիպումների, տեղում դիտարկումների և նախարարությունների հետ համագործակցության արդյունքում պարզում են նոր մասնագիտությունների պահանջը և ըստ այդմ ներդնում նոր մասնագիտություններ։ Ինչի արդյունքում, տարիների ընթացքում կարողացել են ընդլայնել և շարունակում են ընդլայնել մասնագիտությունների ցանկը։ Միաժամանակ այդ մշտադիտարկումների և միջազգային փորձի հենքով ապահովում են նույն այդ ծրագրերի շարունակական զարգացումը՝ ապահովելով այդ տիրույթում յուրահատուկ տեղ։ Այնուամենայնիվ, բոլոր գործոնների պարագայում չէ, որ որոշումները բխում են հետազոտություններից և գործընթացների ազդեցությունների գնահատումից։ Մասնավորաբար՝ արտադրական պրակտիկայի կազմակերպման, ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի զարգացման, գործատուների հետ համագործակցության և այլն։

ՖՀՄՈՒԿ-ում մի շարք փաստաթղթեր դեռևս նոր են ներդրվել (Հարցումների անցկացման կարգ, ՌԾ մշտադիտարկման և գնահատման կարգ և այլն), կան որոշ փաստաթղթեր, որոնք, չնայած ներդրվել են վաղ, սակայն ոչ ամբողջությամբ են գործում (Ներքին կարգապահական կանոնակարգ, Մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման, վերանայման, գնահատման և հաստատման կարգ, Դասալսումների մատյանի ձևաչափ և այլն), կան նաև փաստաթղթեր, որոնք գործածման արդյունքում բարելավվել են (մասնավորաբար՝ Դասախոսի գանահատման մեխանիզմում վերանայել են ուսանողների հարցարանը՝ նկատելով, որ եղել են անհասկանալի հարցեր, դասախոսների ընդունելության ժամանակ կարևորել են փորձնական դասի վարումը, քանի որ ըստ կարգում սահմանված չափանիշների հնարավոր չի եղել միայն հարցազրույցով գնահատել), ընդ որում նշված բարելավումները ղեկավար կազմի ներկայացուցիչների կողմից առանձին խնդիրների դիտարկման արդյունք է։ Այնուամենայնիվ, ինչպես փաստաթղթերի արդյունավետության, այնպես էլ մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ դեռևս առկա չեն։

ՖՀՄՈՒԿ-ի պաշտոնական կայքում հրապարակվում են հաշվետվություններ, հարցումների վերլուծություններ: Լուսաբանումներ են իրականացնում լաբորատորիայում ուսանողների կատարած աշխատանքների վերաբերյալ: Դեռևս առանձին չեն դիտարկում, թե ինչպիսին են այդ հրապարակումների վիճակագրությունը և դրանցից գոհունակությունը, ուսումնասիրություններ են իրականացվում Google Analytics-ի միջոցով և նախատեսում են ներդնել տեղեկատվության բավարարության և մատչելիության գնահատման գործիք: Լավագույն փորձի և շրջանավարտների վերաբերյալ, ինչպես նաև ՀԽ և Ուսումնամեթոդական խորհրդի նիստերի արձանագրությունների հրապարակումներ չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ ՖՀՄՈՒԿ-ի կառավարման մարմիններն ու կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն իրենց հստակ կանոնակարգված գործառույթները և գործում են ըստ այդմ՝ էթիկայի նորմերին համապատասխան: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՀԽ-ն հանձինս ՍԵՊՌ-ի ստանձնել է ֆինանսական մուտքեր ապահովողի և ռազմավարական ուղղություններ նախանշողի դերակատարություն, միաժամանակ նշում է, որ նկատելի են ապահովված կարևոր արդյունքներ: Փորձագիտական խումբը դրական է համարում որոշումներ կայացնելու հարցում ՍԵՊՌ-ի որոշիչ դերը, որ հանգեցրել է նաև միջազգային լավ փորձի ներդրմանը ՖՀՄՈՒԿ-ում, ինչը ևս կարևոր հանգամանք է բարձր արդյունքների ապահովմանը: Փորձագիտական խմբի կողմից գովելի է ՍԵՊՌ-տնօրեն սերտ համագործակցային կապը, ինչի արդյունքում ներքին շահակիցների կարիքները և մոտեցումները որոշակիորեն հաշվի են առնվում որոշումներ կայացնելիս: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսները թույլ են ներգրավված, իսկ ուսանողներն ընդհանրապես այդ գործընթացներում ներգրավված չեն, ինչը կարող է հանգեցնել շահակիցների տեսակետների ոչ լիարժեք ներկայացվածության: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է այնպիսի հստակ իստիտուցիոնալ մեխանիզմների ներդրումը, որոնք կապահովեն ներքին շահակիցների լիարժեք ներգրավվածությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը: Սա կարող է նպաստել կառավարման գործընթացների առավել արդյունավետությանը:

Փորձագիտական խմբի համար տեսանելի են ՖՀՄՈՒԿ-ի կատարած աշխատանքները ռազմավարական կառավարման գործընթացների ապահովման ուղղված, թե՛ պլանավորման, թե՛ ըստ պլանավորման իրականացման, թե՛ գնահատման որոշ գործընթացների տեսանկյունից: Փորձագիտական խումբը գտնում է, որ որպես այդ ուղղությամբ դեռևս առաջին փորձ, բավականին արդյունավետ սկիզբ է, միաժամանակ համարում է, որ դեռևս նշված բոլոր ուղղություններով էլ գործընթացները բարելավման և փոխկապակցման անհրաժեշտություն ունեն: Այսպես, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների փոխկապակցվածությունն ու հստակությունն ապահովելու անհրաժեշտություն կա՝ նաև պահանջվող ռեսուրսների հստակեցմամբ և չափելի միջանկյալ ու արդյունարար արդյունքների նախատեսմամբ: Փորձագիտական խմբը կարևոր է նաև գնահատման գործընթացի լավարկումը, հասկանալու համար նաև, թե ինչպիսի շեղումներ են առաջացել և ինչպիսի փոփոխությունների կարիք կա՝ երաշխավորելու համար ռազմավարական նպատակների և դրանցից բխող խնդիրների լիարժեք իրագործում:

Փորձագիտական խումբը դրական է համարում հիմնադրամում միջնաժամկետ և կարճաժամկետ միջազգային և ազգային ծրագրերի իրականացման փորձը: Միաժամանակ նշում է, որ դրանք նպատում են հիմնադրամի ֆինանսական ռեսուրսների բազմազանեցմանը,

նյութական ռեսուրսների համալրմանն ու զարգացմանը, ինչպես նաև ռազմավարական որոշ նպատակների իրագործմանը:

Փորձագիտական խումբը համարում է, որ բազմագործառույթ աշխատակիցների ընտրություն կատարելիս ՖՀՄՈՒԿ-ը հաշվի է առել ինչպես անձնային որակների, այնպես էլ կարողությունների հանգամանքը: Սա, թերևս, հիմք է հանդիսացել այդկերպ հաջողություններ գրանցեն և արդյունքներ ապահովեն: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ տարատեսակ ուղղություններով վարչական հաստիքների զբաղեցումը մեկ անձի կողմից, այնուամենայնիվ, կարող է խոչընդոտել աշխատանքների հնարավոր առավել արդյունավետ իրականացմանը: Այս տեսանկյունից, ինչպես նաև տարբեր ուղղություններով մարդկային ռեսուրսների պակասի խնդրով պայմանավորված կարևոր է մարդկային ռեսուրսների համալրումը, ինչը կերաշխավորի ռազմավարական նպատակների իրագործումը:

Փորձագիտական խումբը նշում է, որ չնայած ՌԾ-ում առկա չէ ֆինանսական և նյութական ռեսուրսների հստակ պլանավորում, սակայն հիմնադրամն ունի այդպիսի բավարար հնարավորություններ՝ ապահովելու ՌԾ նպատակների իրագործումը: Միաժամանակ, փորձագիտական խումբը դրական է համարում ֆինանսական ռեսուրսների բազմազանցման ուղղությամբ կատարված և կատարվող գործընթացները և կարևորում դրանց շարունակելիությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է ՖՀՄՈՒԿ-ին բնորոշ առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են կառավարման ոլորտում՝ պայմանավորված ինչպես կազմակերպահիրավական ձևով, այնպես էլ ՍԵՊՌ-ի դերակատարությամբ: Փորձագիտական խումբը դրական է համարում դրանց հիման վրա կարևոր արդյունքների ապահովումը, մասնավորաբար ՍԵՊՌ-ի կողմից իրականացված այցերի շրջանակում իրականացվող գնահատումներն ու ուսումնասիրությունները, որոնք հիմք են հանդիսանում առավել լայնամասշտաբ որոշումների կայացմանը՝ հետազոտությունների հենքով: Միաժամանակ փորձագիտական խմբի համար գնահատելի է, որ ներքին առավել փոքրամասշտաբ որոշումների կայացման դեպքում ևս առկա են հետազոտահենք լինելու նախադեպեր և նկատելի է, որ հիմնադրամը գիտակցում և կարևորում է այդ հանգամանքը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ համակարգային գործընթացներ իրականացնելու անհրաժեշտություն կա: Այս առումով կարևոր կլինի ինչպես հարցումների, հետազոտությունների, այնպես էլ բազմակողմանի տվյալների հենքով վերլուծությունների իրականացումը, ինչը թույլ կտա առկա խնդիրների վերհանում, հնարավորությունների դիտարկմամբ առավել արդյունավետ լուծումների իրականացում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ հիմնադրամում փաստաթղթերը մշակվել և ներդրվել են գործընթացների կանոնակարգման անհրաժեշտությամբ պայմանավորված, միայն որոշ փաստաթղթեր են, որոնք մասնակիորեն են ներդրվել: Փորձագիտական խումբը նաև դրական է համարում, որ առկա են փաստաթղթեր, որոնց բարելավման անհրաժեշտությունը բխել է գործածման արդյունքում: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ ինչպես փաստաթղթերի, այնպես էլ մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գործընթացների գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը՝ հենված ուսումնասիրությունների վրա, կարող է խոչընդոտել այդ գործընթացների շարունակական զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում պաշտոնական կայքում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին հրապարակումների կատարման ուղղությամբ հիմնադրամի աշխատանքները, միաժամանակ գովելի է, որ իրականացնում են որոշ ուսումնասիրություններ և նախատեսում են զարգացնել այդ ուղղությամբ աշխատանքները: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ ՖՀՄՈՒԿ-ում առկա է լավ փորձ և հաջողություն ունեցող շրջանավարտներ, որոնց վերաբերյալ և այլ հրապարակումները կարող են նպաստել հիմնադրամի կորպորատիվ հեղինակության և տեսանելիության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՖՀՄՈՒԿ-ն ունի կառավարման համակարգ, որը տանում է զարգացման, ներդրել է ռազմավարական կառավարման մոտեցումներ և գիտակցում է դրանց բարելավման ուղղությամբ աշխատանքները, ունի ռազմավարական նպատակների իրագործման համար բավարար ֆինանսական և նյութական ռեսուրսներ, մշտական աշխատանքներ է իրականացնում ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ և գրանցել է հաջողություններ, ունի միջնաժամկետ և կարճաժամկետ միջազգային և ազգային ծրագրերի իրականացման հաջող փորձ, որոշումների կայացման համար կարևորում է որոշակի տվյալների և հետազոտությունների իրականացումը, հիմնականում ապահովել է փաստաթուղթ-գործընթաց կապը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է բավարար:

III.ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամը իրականացնում է ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան կրթական ծրագրեր, որոնք իրականացվում են համաձայն ՊԿՉ-երի: Ուսումնական կենտրոնի կողմից իրականացվող կրթական ծրագրեր 5-ն են՝

- Խոհարարական գործ,
- Հրուշակեղենի տեխնոլոգիա,
- Կարի արտադրության տեխնոլոգիա,
- Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում,
- Ատամնատեխնիկական գործ:

Նշված կրթական ծրագրերն իրականացվում են առկա ուսուցմամբ՝ վճարովի հիմունքներով: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են ուսումնական պլաններն ու մոդուլային ծրագրերը, պարունակում են ըստ շնորհվող որակավորումների մանրամասն նկարագիր:

Յուրաքանչյուր դասավանդողի համար պարտադիր պայման է դասավանդելիս առաջնորդվել հաստատված ծրագրով: Հաստատված ծրագրերի մեկական օրինակ պահպանվում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի մոտ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ կրթական ծրագրերը ներդնելիս ուսումնական կենտրոնն առաջնորդվում է գլխավորապես ՍԵՊՌ-ի կողմից՝ գործատուների հետ ունեցած հանդիպումներով և ուսումնասիրություններով: Այս ուսումնասիրությունները թույլ են տալիս որոշակիորեն դիտարկել աշխատաշուկան: Մասնավորաբար, դիտարկել են, որ «Խոհարարական գործ» մասնագիտության շրջանավարտները աշխատում էին որպես հրուշակագործներ: Հաշվի առնելով աշխատաշուկայի և գործատուների պահանջարկը՝ ֆրանսիացի գործընկերների ուղղորդմամբ, հաստատությունում ներդրվել է նոր կրթական ծրագիր՝ «Հրուշակեղենի տեխնոլոգիա»: Այս կրթական ծրագրի ներդրման արդյունքում հաստատությունը նախատեսում է ունենալ հրուշակագործության լաբորատորիա, որի աշխատանքային մեկնարկը տրված է:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ հիմնադրամի ՀԽ-ի անդամ՝ Երևանի փոխքաղաքապետի և հիմադրամի տնօրենի հանդիպումից պարզել են, որ աշխատաշուկան թատրոնի կամ արվեստի տեխնիկ մասնագետների կարիք ունի: Այս մասնագիտությունների ներդրման նպատակով ֆրանսիայից ժամանած ՍԵՊՌ-ի մասնագետի հետ այցեր են իրականացվել Երևանի բոլոր թատրոններ, ուսումնասիրություններ են կատարել նաև տեղի աշխատաշուկայում, անհրաժեշտ մասնագետների թվաքանակի հետ կապված:

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամի կողմից իրականացվող կրթական ծրագրերը շարունակականության առումով վտանգված չեն, դրանք տարիների ընթացքում ընդլայնվել են, նաև հետագա ընդլայնման միտում ունեն:

Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամը, սերտ համագործակցելով ՍԵՊՌ-ի հետ, գործունեության ընթացքում ուղղորդվում է ՍԵՊՌ-ի առաջավոր փորձով:

Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամը ՊԿՉ-ների տեղայնացման նպատակով, թույլատրելիի սահմաններում իրականացրել է ուսումնական պլանների վերանայման աշխատանքներ բոլոր կրթական ծրագրերում, բացի «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրերից: Կրթական ծրագրի պարտադիր մաս կազմող մոդուլային և առարկայական ծրագրերը կազմվում են դասախոսների կողմից և հաստատվում ուսումնամեթոդական նիստերում: Օրինակ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունը ներդնելիս և տվյալ մասնագիտության կրթական ծրագիրն ուսումնասիրելիս պարզել են, որ ուսանողներն ըստ կրթական ծրագրի հաջորդականության ուսումնասիրում են «Մարդու ընդհանուր անատոմիա և ֆիզիոլոգիա» մոդուլը՝ 3-րդ կուրսի 1-ին կիսամյակում և «Ատամների ընդհանուր անատոմիա, ֆրոնտալ ատամների մասավոր անատոմիա» մոդուլը՝ 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում: Տվյալ մասնագիտության ուսանողները ստանում են ատամնատեխնիկի որակավորում: Մասնագետ-դասախոսների, հաստատության տնօրենի և ուսումնական գծով փոխտնօրենի հետ համատեղ քննարկումների արդյունքում որոշում է կայացվել, որ 1-ին

կիսամյակում ուսումնասիրեն «Ատամների ընդհանուր անատոմիա, ֆրոնտալ ատամների մասավոր անատոմիա» մոդուլը: Նշված փոփոխությունների արդյունքում ուսանողները ստանում են գործնական առաջադրանքներ, որոնք իրականացվում են հաստատությունում գործող մասնագիտական լաբորատորիայում: Այս հանգամանքը նպաստում է նաև ուսանողներիի՝ ավելի շուտ մասնագիտական լաբորատորիա մուտք գործելուն և ծանոթանալու մասնագիտական տեխնիկաներին և հմտություններին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՍԵՊՌ-ի հետ համագործակցության շրջանակներում ՍԵՊՌ-ից պարբերաբար ժամանող փորձագետ-մասնագետները ծանոթացնում են Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամին Եվրոպայի ՄԿՈ ոլորտի կրթական վերջին զարգացումներին: Ուսումնասիրելով Ֆրանսիայի առաջավոր փորձը, ինչպես նաև հիմք համարելով ՍԵՊՌ-ի հետ համագործակցությունը՝ Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի կողմից ուսումնասիրվել և համեմատականներ են անկացվել Ֆրանսիառյում գործող կրթական ծրագրերի հետ: Այս ուսումնասիրությունների արդյունքում Ֆրանսիայում գործող կրթական ծրագրերը տեղայնացվել են՝ նկատի ունենլով տեղի առանձնահատկությունները, և բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում ներդրվել են ընտրովի և նախասիրական առարկաներ: Ներդրվել է «Մասնագիտական հմտությունների կատարելագործում» մոդուլային ծրագիրը, ընդ որում ուրաքանչյուր տարի այս մոդուլի բովանդակությունը փոխոխվում է՝ պայմանավորված ժամանակի պահանջով:

«Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրերում ընտրովի և նախասիրական առարկաներ են՝ մասնագիտական նկարչություն և տեխնիկական էսքիզավորում առարկաները: Այս առարկայի ներդրումը ուսանողների հնարավորություն է տալիս ուսումնասիրել նկարչություն, կատարել ինքնուրույն և ստեղծագործական էսքիզներ:

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրերում ընտրովի առարկան է «Կերամիկական կոնստրուկցիաներ»:

«Խոհարարական գործ» մասնագիտության ՄԿԾ-ներում, ներդրել և տեղայնացրել է որպես ընտրովի առարկա «Սպասարկում» մոդուլը: Ուսումնասիրելով Ֆրանսիայի առաջավոր փորձը, հաստատությունը համագործակցել և ֆոկուս խմբային քննարկում են իրականացրել ՍԵՊՌ-ի հետ:Այս մոդուլի ներդրումը ուսանողներին նհարավորություն է ընձեռում ծանոթանալու ռեստորանային սպասարկման արվեստին և մոտ լինել բարձրակարգ սպասարկմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընտրված առարկաները տեղ են գտել դասացուցակում և իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից: Ընտրովի և նախասիրական առարկաների ընտրությունը պայմանավորված է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներով:

Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ժամանակ հիմնականում առաջնորդվում է ՊԿՉ-ներով, համաձայն որի դասախոսներն ազատ են դասավանդման մեթոդների ընտրության հարցում՝ կախված ուսումնառության արդյունքներից: Դասավանդման մեթոդների ընտրությունը պայմնավորեցնում են վերջնարդյունքների առանձնահատկություններով: Ներքին շահակիցների հետ հանդիպումներից և դասալսումներից պարզ դարձավ, որ բացի ծրագրով նախատեսված մեթոդներից դասավանդողները կիրառում են նաև դասավանդման և ուսումնառության նորարար մեթոդներ՝ քառափուլ, մտագրոհ, Վենի դիագրամ, պրիզմա, և այլն: Դասավանդման մեթոդները տարբեր առաջընթաց ունեցող

ուսանողների համար բազմազանեցված են, ուսանողները համաչափ ներգրավված են դասապրոցեսում, կարևորվում են ուսանողակենտրոն մոտեցումներ:

Մեթոդների վերանայման համար հիմք են հանդիսանում նաև դասալսումները, հարցումները: Հիմնադրամում գործում է «Դասալսումների անցկացման կարգ»՝ հաստատված 2018թ-ին: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են փորձի փոխանակման, դասավանդման մեթոդների ընտրության, սկսնակ մասնագետների ուղղորդման նպատակով իրականացվող դասալսումներ: Դասալսման արդյունքները, համաձայն դասալսումների անցկացման կարգի, քննարկվում են, արձանագրվում դասալսումների մատյանում, որտեղ գնահատվում է դասի պլանավորումը, կառուցվածքը, ուսանողների ներգրավվածությունը, ուսանողին ցուցաբերած անհատական մոտեցումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը, նախապես պատրաստված ուսումնական նյութերը, նյութերում առկա տեղեկատվության հավաստիությունը, նորարարական տեխնոլոգիաների օգտագործումը: Փորձագիտական այցից և փաստաթղթի ուսումնասիրությունից պարզվեց, որ դեռևս այս բոլոր չափանիշներով գնահատում չի իրականացվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասավանդման ժամանակ հավասարապես կիրառվում են առցանց ժամանակակից տարբեր ռեսուրսներ և գործիքներ: Յուրաքանչյուր դասավանդողի՝ մինչ դասի մեկնարկը ռեսուրս կենտրոնի կողմից տրամադրվում են անհրաժեշտ ռեսուրսներ՝ համակարգիչներ, էլեկտրոնային մատյաններում աշխատելու, նյութի յուրացման համար սահիկների ցուցադրման և ժամանակակից մեթոդների կիրառման համար:

Հաստատությունում անցկացվել են հարցումներ ուսանողների շրջանում՝ ըստ կրթության որակի գնահատման հարցաշարի: Հարցաթերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների գերակշիռ մասը, որպես հաստատության բարելավման կողմ նշում են մասնագիտական մոդուլների ժամաքանակի ավելացումը:

Ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից ևս պարզ դարձավ, որ իրականացվող մոդուլային ծրագրերում գործնական ժամաքանակի ավելացման կարիք կա: Ըստ արտաքին շահակիցների պահանջների՝ իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում առկա է մասնագիտական գործընթացների կրկնության անհրաժեշտություն՝ հմտության ձևավորման նպատակով: Օրինակ՝«Կարի արտադրության տեխնոլոգիա» կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող «Գրպանների մշակում» մոդուլի ժամանակ ուսանողը պետք է վրադիր գրպան մշակի 2-3 անգամ:

Գործատուները հաստատություն են ներկայացնում որոշ պահանջներ արտադրական պրակտիկայի բարելավման նպատակով: Օրինակ գործատուները նշում են, որ «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների համար՝ արտադրական պրակտիկայի ընթացքում խոչընդոտ է համարվում հագուստի վերանորոգումը: Հաստատության դասավանդող-մասնագետները փաստեցին, որ նախատեսվում է դիմել ՄԿՈՒԶԱԿ և «Կարի արտադրության տեխնոլոգիա» ՄԿԾ-ում ներդնելու հագուստի նորոգում մոդուլը: Սակայն մինչ ՄԿՈՒԶԱԿ-ի արձագանքը հաստատությունում յուրաքանչյուր հագուստի տեսակի ուսումնասիրության ժամանակ անդրադառձ է կատարվում նաև վերանորոգմանը:

Փորձագիտական այցից պարզվեց որ, չնայած առաջին կուրսում՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրերի, անցնում են հանրակրթական առարկաներ, ուսանողները հնարավորություն ունեն շաբաթական մեկ անգամ մուտք գործել հաստատությունում գործող մասնագիտական լաբորատորիաներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունում գործում է ժամանակակից տեխնիկաներով կահավորված մուլտիմեդիա-

լսարան: Այս լսարանում իրականացվում են հանրակրթական առարկաների դասաժամերը՝ կիրառելով փոխգործուն մեթոդներ և փորձելով ապահովել ուսանողների հետաքրքրությունը:

Հիմնադրամում գործում է «Գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ»՝ հաստատված 2018 թ.-ին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերը նշված կանոնակարգը հասանելի է հաստատության կայք-էջում և հաստատության ներքին շահակիցները իրազեկ են: Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամն իրականացնում է գիտելիքների ընթացիկ և վերջնական ստուգումներ: Ուսանողների ընթացիկ գնահատումն իրականացվում է բանավոր հարցումների, թեստային առաջադրանքների, ինքնուրույն աշխատանքների, գնահատման թերթիկների միջոցով: Ընթացիկ գնահատումները գրացվում են դասամատյանում: Գնահատումն իրականացվում է միավորային (թվանշան) և որակական (անցել է/չի անցել) եղանակներով: Ներկայացված բոլոր ՄԿԾ-ների գնահատման թերթիկներն ունեն գործնական կարողություն գնահատող բնույթ: Գիտելիքների վերջնական ստուգումն իրականացվում է ստուգարքների և քննությունների միջոցով: Տարբերակված ստուգարքների և քննությունների գնահատումը գրանցվում է քննական տեղեկագրերում: Գիտելիքների ստուգման ձևի ընտրությունը կախված է տվյալ առարկայի կամ մոդուլի առանձնահատկությունից: Ուսումնառության ավարտին ուսանողներն ունենում են հագեցած պորտֆոլիո:

Փորձագիտական այցից պարզվեց, որ «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները հաճախ համտեսում, գնահատում և համեմատականներ են անցկացնում իրենց պատրաստած ուտեստի և այն ուտեստի միջև, որը լավագույն պատրաստվածն է համարվել տվյալ բաղադրատոմսով: Խմբի ուսանողները խմբային գնահատում են ուտեստը լավ պատրաստած ուսանողին: Այս մասնագիտությամբ առկա են բաղադրատոմսերի ձեռնարկներ, որոնք գործածվում են ուսումնական գործընթացում: Միաժամանակ առկա են ուսանողների ստուգման թերթիկներ, որտեղ յուրաքանչյուր հանձնարարական ունի նախատեսվող գնահատականը:

Ուսանողներին տրվող հանձնարարականների դիտարկումը ցույց տվեց, որ դասախոսները առաջադրանքները փոխկապակցում են մասնագիտական ոլորտին, օրինակ՝ ֆրանսերեն լեզվի ուսուցման ժամանակ ուսանողները 2-րդ կուսից ուսումնասիրում են տվյալ մասնագիտության տերմինաբանություն: 2018-2019 ուստարուց բոլոր ՄԿԾ-ներում ներառել են «Ձեռներեցություն» մոդուլը, ինչը միտված է ուսանողի մոտ զարգացնել և ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններ և կարողություններ: «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլի շրջանակներում յուրաքանչյուր մասնագիտության ուսանողներն ուսումնասիրում են մասնագիտական սարք-սարքավորումների հետ աշխատելու անվտանգության կանոնները:

Ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ի մոդուլներում առկա են մի շարք հանձնարարականներ, որոնք ձևավորում են ինքնուրույն և ստեղծագործական մտածողություն: Օրինակ «Կարի արտադրության տեխնոլոգիա» ՄԿԾ-ի մոդուլներում հանձնարարվում է ձևել և պատրաստել լեկալներ, լեկալների չափս-հասակային բազմազանեցում, նախագծումների համար տարբեր հաշվարկների կատարում, էսքիզների պատրաստում և այլն: Առկա են նաև հանձնարարականներ, որոնք վերլուծական կարողությունների զարգացման միտում ունեն: Օրինակ «Խոհարարական գործ» մասնագիտությամբ սովորող ուսանողներին տրվում են միևնույն բաղադրիչները և յուրաքանչյուր ուսանող տրված բաղադրիչներից պատրաստում է որևէ ուտեստ: Այս

հանձնարարականն ուսանողի մոտ ձևավորում է ստեղծագործ մտքի, ինքնուրույնության և նոր բաղադրատոմսի ստեղծման կարողություններ: Այս մասնագիտության շրջանակներում ուսանողները նաև մշակում են մենյուներ, լոգոտիպեր սեփական ռեստորանների համար: Սակայն ոչ բոլոր մասնագիտություններով են առկա նման բնույթի հանձնարարականներ: Որոշ հանրակրթական և ոչ մասնագիտական առարկաների և մասնագիտական մոդուլների շրջանակներում ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, որոնք մեծամասամբ համացանցից և գրքերից վերցված պատճեններ են: Ռեֆերատներում հիմնականում վերլուծական բաղադրիչը բացակայում է:

Ուսումնառության ավարտին Հիմնադրամի ուսանողները դիպլոմային աշխատանքներ չեն ներկայացնում: Նրանք հանձնում են պետական ամփոփիչ ատեստավորման քննություններ: Քննությունների հաստատված հանձնաժողովի կազմում ընդգրկվում են անդամներ հիմնադրամի դասավանդողներից, իսկ հանձնաժողովի նախագահը նշանակվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից: Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է 2 փուլով՝ բանավոր և գործնական ձևերով: Իրականացվում է միավորային գնահատում: Պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում, 2 փուլերում կիրառվում է կույր գնահատման մեթոդը:

Ուսումնասիրված փաստաթղթերից և ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կենտրոնում գործում է Գիտելիքների ստուգման և բողոքարկման կանոնակարգ, որի համաձայն կարգավորվում են գնահատականի հետ անհամաձայնության բողոքարկման, չգնահատված և անբավարար գնահատված ուսանողների ակադեմիական պարտքերի վերահանձնման և գնահատականների վերահանձնման հարցերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բողոքարկման ժամանակ ուսանողներին ներկայացվում են այն թերացումները, որոնց արդյունքում նա ստացել է տվյալ գնահատականը:

Հաստատությունում իրականացվում են ուսումնական և արտադրական պրակտիկաներ: Ուսումնական պրակտիկաններն իրականացվում են ուսումնական կենտրոնում: Արտադրական պրակտիկաները կազմակերպելու համար հաստատությունը համագործակցում է գործատուների հետ: Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում ուսանողները միավորային գնահատական են ստանում նաև ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամանակ: Փորձագիտական խմբի հանդիպումներից և ինքնավերլուծությունից պարզվեց, կենտրոնը համարում է, որ երբեմն արտադրական պրակտիկայի միավորները չափազանց բարձր են և չեն արտացոլում ուսանողների ունակությունների իրական պատկերը: Այս խնդիրը պայմանավորեցնում են այն հանգամանքով, որ գործատուները ուսանողի գնահատման համար բավարար ժամանակ չեն տրամադրում և հիմնականում իրազեկ չն չափորոշիչների մասին:

Միաժամանակ փորձագիտական այցից պարզվեց, որ դասավանդողներն ու ղեկավար կազմը բավարար արդյունավետ չեն համարում արտադրական պրակտիկան՝ նշելով, որ հաճախ պրակտիկայի վայրում նյութատեխնիկական բազան նույնիսկ իրենց լաբորատորիաների բազային համարժեք չէ: Մյուս կողմից, գործատուները քիչ են համարում պրակտիկային հատկացված ժամանակը և կարևորում են արտադրական պրակտիկայի ընթացքում ձևավորվող հմտությունները, մասնավորաբար նաև ժամանակի կառավարումը:

Կենտրոնը կրթական ծրագրեր ներդնելիս նկատի է ունեցել նաև Ֆրանսիայի փորձը, ինչը ապահովվել է ՍԵՊՌ-ի հետ համագործակցության շրջանակներում: Այդ համագործակցության

արդյունքում նաև պարբերաբար ժամանող փորձագետ-մասնագետները վերապատրաստում են դասավանդողներին՝ ծանոթացնելով Եվրոպայի ՄԿՈ ոլորտի կրթական վերջին զարգացումներին, և աջակցում են նրանց ուսուցանվող մասնագիտական տարբեր ոլորտներում փոփոխություններին ինտեգրվելու հարցում: ՄԿԾ-ների վերջին զարգացումները ուսումնասիրելու և ներդնելու նպատակով գործընկերների աջակցությամբ հաստատությունն իրականացնում է դասավանդողների և ուսանողների փոխանակման ծրագրեր Ֆրանսիայի ուսումնական 53 հաստատությունների հետ: Այս գործընթացներն ապահովվում են բոլոր կրթական ծրագրերի պարագայում: Այս ամենը հանգեցնում է ինչպես մոդուլների բովանդակությունների, այնպես էլ դասավանդման մեթոդների վերանայման:

Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում դասավանդողները և ուսանողները հնարավորություն ունեն գտնվելու ֆրանսիայի ուսումնական հաստատություններում և ուսումնասիրելու տեղի փորձը: Ուսանողների ներհոսքի ցուցանիշներն են՝ 2019-2020 ուստարի՝ 6 %, 2022-2023 ուստարի՝ 1 %, արտահոսք՝ 2018-2019 ուստարի՝ 2.8%, 2019-2020 ուստարի՝ 1.3%, 2022-2023 ուստարում նախատեսվում է՝ 2.6%: Դասախոսների ներհոսքի ցուցանիշներն են՝ 2018-2019 ուստարի՝ 7%, 2019-2020 ուստարի՝ 14% , 2021-2022 ուստարի՝ 14%, 2022-2023 - 14%, արտահոսք՝ 2019-2020 ուստարի՝ 3.7%, 2020-2021 ուստարի՝ 3.7%, 2022-2023 ուստարում նախատեսվում է 11%:

Փորձագիտական այցից պարզվեց, որ հաստատությունն ընդլայնում է համագործակցության շրջանակները՝ ապահովելով շարժունություն նաև այլ երկրներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ ուսումնառելու համար ունեցել են միջազգային դիմորդ, սակայն հաստատությունը դեռևս չի մտածել և քայլեր ձեռնարկել կրթական ծրագրերը միջազգայնացնելու ուղղությամբ:

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում գործում է «ՄԿԾ-ների մոնիթորինգի, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգ»՝ հաստատված 2021թ.-ին: Սույն կանոնակարգը կարգավորում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում իրականցվող միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերի գործընթացները: Հիմնադրամում ուսուցանվող մասնագիտական կրթական ծրագրերի մոդուլների մշտադիտարկումը, վերանայումն ու հաստատումը իրականացվում են համաձայն այդ կանոնակարգի:

Հաստատությունում ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման և բարելավման նպատակով իրականացվում են դասալսումներ, անցկացվում են հարցումներ ուսանողների, գործատուների շրջանում, կիրառում են պրակտիկաների ժամանակ գործատուների հետ հետադարձ կապը, ինչպես նաև գործատուների կարծիքները՝ պետական ատեստավորման քննության ժամանակ, կազմակերպում են ֆոկուս-խմբային հանդիպումներ, համեմատական վերլուծություն Ֆրանսիայի գործընկեր ՍԵՊՌ ընկերության հետ:

Հարցման արդյունքների ուղղությամբ փորձագիտական խմբի կողմից իրականացված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների զգալի մասը պատրաստակամ են աջակցել հիմնադրամին ՄԿԾ-ների վերանայման և բարելավման աշխատանքներին, նաև ունեն տարբեր առաջարկություններ պրակտիկաների գործընթացների բարելավման ուղղությամբ:

Ըստ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում ներգրավված գործատուների ներկայացրած կարծիքների առաջարկություններ են եղել սարքավորումներով համալրելու

ուղղությամբ, ամփոփիչ ատեստավորման հարցերի փոփոխության և այլ ուղղություններով: Հաստատությունն այդ առաջարկությունների հիմքով նախատեսել և իրականացրել է փոփոխություններ, որոշներն էլ դեռևս իրականացման ընթացքում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի կողմից իրականացվող ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համահունչ են հաստատության առաքելությանն ու ՈԱՇ-ին: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ մրցակցային և հարափոփոխ դաշտում հաստատությունը կարողացել է իր յուրօրինակ առաքելությանը համապատասխան գիծը ընդգծել կրթական ծրագրերում, ինչը գլխավորապես պայմանավորված է ՍԵՊՌ-ի հետ համագործակցության շրջանակներով: Այդ յուրօրինակության առկայությունն է նաև հանգեցնում հեղինակության բարձրացմանն ու դիմորդների ներգրավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում հաստատությունում նոր կրթական ծրագրեր ներդնելիս ՍԵՊՌ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունները: Չնայած առկա չեն աշխատաշուկայի հստակ վերլուծություններ, սակայն իրականացվող ուսումնասիրություններն ապահովում են հաստատության առաքելությանն ու առանձնահատկություններին համապատասխան կթական ծրագրի ներդրումն ու դրանց զարգացումը: Բացի այդ այս հանգամաքը հանգեցնում է կրթական ծրագրերի ցանկի ընդլայնմանը՝ աշխատաշուկայում պահանջ ունեցող մասնաիտություններով, ինչը կարևորվում է փոձագիտական խմբի կողմից:

Փորձագիտական խումբը նաև կարևորում է, որ կրթական ծրագրերում առկա են ըստ շնորհվող որակավորումների մանրամասն նկարագրեր, որոնք թույլ են տալիս դասավանդողներին և գործատուներին հստակ պատկերացումներ ունենալ շրջանավարտների մասին:

Փորձագիտական խումբը դրական է համարում առկա դասի պլանավորման փաստաթղթերի (ուսումնառության պլան, գնահատման թերթիկ) առկայությունը հիմնադրամում, այս փաստաթղթերի կիրառությունը և բովանդակության միասնականությունը, որը մոդուլի շրջանակներում ապահովում է ուսանողների առաջընթացը: Փորձագիտական խումբը բավականին արդյունավետ է համարում դասաանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության հաստատությունում վարվող քաղաքականությունը: Դասախոսների կողմից կիրառվող նորարար մեթոդները հնարավորություն են տալիս դասապրոցեսը կազմակերպել արդյունավետ, հիմնականում ապահովել ուսանողների ներգրավվածություն, ինչը գլխավորապես ապահովում է նախատեսվող ուսումնառության արդյունքների ձեռքբերումը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ վերլուծական կարողությունների և հմտությունների ձևավորման ուղղությամբ հաստատությունն առավել ուշադրություն դարձնելու անհրաժշտություն ունի առավել ևս, որ այդ ուղղությամբ առկա են առանձին լավ փորձի օրինակներ և առկա է համապատասխան նյութատեխնիկական բազա: Այս տեսանկյունից նաև ռեֆերատային և կուրսային աշխատանքներին ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն կա, նաև, ըստ հնարավորության, ավարտական աշխատանքների ներդրմամբ կարելի է զարգացնել:

Ուսանողների մոտ կրթական ծրագրերով նախատեսված կարողությունների ձևավորման տեսանկյունից փորձագիտական խումբը դրական է համարում հաստատության լաբորատոր բազան և համապատասխան հմտություններով դասավանդողների առկայությունը:

Փորձագիտական խումբը նշում է, որ այս հանգամանքը ևս հաստատության յուրօրինակությունն է, այն տեսանկյունից, որ առանձնակի կարևորվում է պրակտիկ կարողությունների զարգացումը: Կարևոր է նաև գործատուների հետ համագործակցությամբ պայմանավորված արտադրական պրակտիկաների գործընթացը, և փորձագիտական խումբը գտնում է, որ դրանք ևս պակաս նպաստ չունեն կարողությունների ձևավորման հարցում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ վերջիններիս արդյունավետության որոշակի թերությունները բխում են գոծատուների հետ որոշակիորեն թույլ համագործակցությամբ: Մինչդեռ առավել ամուր համագործակցությունը կարող է հանգեցնել եղած գործընթացների առավել արդյունավետության բարձացմանը, ինչպես նաև նոր հնարավորությունների բացահայտմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ կենտրոնում գործածվում են գնահատման բազմազան մոտեցումներ և մեխանիզմներ՝ կարևորելով ինչպես գիտելիքների, այնպես էլ պրակտիկ կարողությունների գնահատումը: Վերջինս արտահայտված է նաև ամփոփիչ ատեստավորման գործընթացում:

Նկատի ունենալով փորձագիտական այցի արդյունքները և կարևորելով հաստատության առավել արդյունավետ զարգացումը, փորձագիտական խումբը համարում է, որ հաստատությունը տարբեր մասնագիտությունների ուղղություններով հնարավորություններ ունի արտադրական պրակտիկաների բաղադրիչ իրականացնելու ուսումնական կենտրոնում: Փորձագիտական խումբը գտնում է, որ սա կարող է նպաստել նաև արտադրական պրակտիկաների արդյունավետության բարձրացմանը՝ նպաստելով ուսանողների հմտությունների արդյունավետ ձևավորմանը, ինչպես նաև կհանգեցնի հաստատության ֆինանսական մուտքերի այլընտանքային բազմազանեցման:

Փորձագիտական խումբը դրական է համարում «Մասնագիտական հմտությունների կատարելագործում» մոդուլային ծրագրի ներդրումը հաստատությունում, քանի որ վերջինս աշխատաշուկայի պահանջների ներդրման յուրօրինակ շղթա է հանդիսանում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ հաստատությունը կարևորում է ակադեմիական ազնվության գործընթացները, մասնավորաբար ամփոփիչ ատեստավորման ժամանակ կիրառում է կույր գնահատման մոտեցում, ինչը նպաստում է գործընթացների օբյկտիվության ապահովմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ հաստատությունում ներդրվեն նաև գրագողության դեմ ուղղված մեխանիզմներ, քանի որ դրանք կնպաստեն նաև ռեֆերետային և այլ աշխատանքների բովանդակային բարելավմանը՝ ուղղված առավելապես վերլուծական կարողությունների զարգացման ապահովմանը:

Փորձագիտական խումբը առանձնակի կարևորում և դրական է համարում ՍԵՊՌ-ի հետ համագործակցությունը և այդ համագործակցության առկա բովանդակային շրջանակը: Ինչը նպաստել է Ֆրանսիայի լավ փորձի ուսումնասիրմանն ու նեդրմանը հաստատությունում, նպաստել է ուսանողների և դասախոսների շարժունության հնարավորությունների ընձեռմանը: Այս ամենը հանգեցրել է կրթական ծրագրերում յուրահատկությունների ապահովմանը ի համեմատություն տարածաշրջանի այլ հաստատություններում նույն կրթական ծրագրերի: Բացի այդ, կրթական ծրագրերը բխում են ՊԿՉ-ներից և համահունչ են տեղի համապատասխան պահանջներին:

Միաժամանակ, նկատի ունենալով հաստատությունում առկա ռեսուրսները, զարգացման երկարաժամկետ և արդյունավետ երաշխիքների ստեղծման տեսանկյունից,

փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը կարող է որպես հնարավորություն դիտարկել կրթական ծրագրերի միջազգայնացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ հաստատությունը մշակել և ներդրել է ՄԿԾ-ների մոնիթորինգի, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգ: Չնայած գործընթացի հստակ ընթացակարգ առկա չէ, սակայն հաստատությունը մի շարք մեխանիզմներով կարողանում է մշտադիտարկում իականացնել և խնդիրներ բացահայտել, որոնք նաև բարեփոխումների հիմք են դառնում: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որպեսզի ապահովվի առավել բազմակողմանի տվյալների հավաքագրում ու համակողմանի վերլուծության իրականացում, ինչը կնպաստի կրթական ծրագրերի բարելավման գործընթացի կանոնակարգմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՖՀՄՈՒԿ-ում առկա ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության առաքելությանը, ՈԱՇ-ին և ՊԿՉ-ներին, առկա է ըստ որակավորումների մանրամասն նկարագիր, գործում են դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետ մոտեցումներ, առկա են ակադեմիական ազնվության ապահովման որոշ մոտեցումներ, առկա են Ֆրանսիայի լավ փորձի ուսումնասիրման և ներդրման գործընթաց, առկա են շարժունության հնարավորություններ և նախադեպեր, առկա է ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն, կարևորում են այդ գործընթացը և իրականացնում առանձին ուսումնասիրությունների հենքով բարելավումներ, առկա են զարգացման առանձնակի հնարավորություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IV.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության համար գործում են հստակ մեխանիզմներ: Ընդունելությունը կատարվում է համաձայն ԿԳՄՄՆ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի՝ առցանց եղանակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական կողմնորոշման և հաստատության մասին դիմորդներին տեղեկատվություն փոխանցելու նպատակով ՖՀՈՒՄԿ-ի կողմից իրականացվում են ամենամյա շրջայցեր ՀՀ մարզերի և Երևան քաղաքի դպրոցներ, որին մասնակցում են ուսանողներ, Կարիերայի պատասխանատուն, տնօրենը և այլ աշխատակիցներ: Լուսաբանվում են ընդունելության կարգը, Կենտրոնում գործող մասնագիտությունների ցանկը,

ուսման վճարները, պահանջվող փաստաթղթերը և դիմումի ներկայացման լրացման ընթացակարգը: Տարբեր սոցիալական հարթակներում կատարվում են հրապարակումներ, ներկայանում են տարաբնույթ մրցույթների, EXPO-ների, տոնավաճառների:

Կազմակեպվում են «բաց դռների» օրեր, որի ժամանակ աշակետների և ծնողների հետ հանդիպումներ են իրականացվում հաստատության հետ, ծանոթանցնում ռեսուրսներին և ծավալած գործունեությանը:

Դիմորդների դիմում-հայտերը և փաստաթղթերը ընդունվում են առցանց եղանակով, մանրամասները տեղադրվում են քոլեջի ֆեյսբուքյան էջում, կայք էջում, շահակիցներին հասանելի է նաև քոլեջի էլ. հասցեն:

Ըստ ինքնավերլուծության և իրականացված ուսումնասիրությունների պարզ դարձավ, որ Կենտրոնի որակի ապահովման պատասխանատուի և ՈւԽ-ի կողմից համագործակցությամբ 2021 թվականից պարբերաբար իրականացվում են հարցումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները մասնակցել են հարցումների, որոնց միջոցով դուրս են բերվել իրենց հուզող խնդիրները: Հարցաշարի միջոցով ուսանողները հնարավորություն են ունեցել բարձրացրել ՄԿԾ-ի ռեսուրսային խնդիրներ, օրինակ՝ նոր տախտակների կարիք, կարի մեքենաների ժամանակակից մոդելներ, էլեկտրական շպանելներ, որոնք, արդեն իսկ լուծվել էր ղեկավարության կողմից:

Ինքնավերլուծության համաձայն՝ Կենտրոնը կրթական կարիքների ուսումնասիրության, դրանց վերհանման և բավարարման ուղղությամբ պարբերաբար իրականացնում է աշխատանքներ, այդ թվում նաև՝ ուսանողներն ազատ կարող են իրենց խնդիրներով դիմել Հիմնադրամի ղեկավարությանը (տնօրեն, փոխտնօրեն, Կարիերայի պատսխանատու, կուրսղեկներ): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կրթական կարիքերը բարձրաձայնելու նպատակով կուրսի ավագի միջոցով դիմում են կուրսղեկին և ունեն հնարավորություն խնդիրները բարձրացնելու, ինչպես նաև տարբեր առաջարկներ ներկայացնելու: Ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ գործունեություն են ծավալում նաև Որակի հանձնախմբում ներգրավված ուսանողները ու Ուսանողական խորհուրդը: ՈւԽ-ն հանդիպումներ է կազմակերպում ուսանողների հետ, որտեղ քննարկվում են տարաբնույթ միջոցառումներ, բանավեճ-քննարկումներ:

Ուսանողներն ունեն պրակտիկայի օրագրեր, որտեղ նրանք բացի գնահատվելուց հանդես են գալիս առաջարկներով: Օրինակ՝ ուսանողների հարցումներց առաջացել է պահանջ՝ պրակտիկ միջավայրում ավելի շատ աշխատելը, գործատուների մոտ համապա տասխան ռեսուրսների ապահովումը, քանի որ առանձին դեպքերում նշում են խնդիր, թե գործատուների մոտ առկա ռեսուրսները էապես զիջում են կենտրոնում առկա ռեսուրսներին:

Ինքնավերլուծության համաձայն և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կենտրոնում խորհրդատվություններ իրականացնելու համար ուսումնական մասի կողմից կազմվում է հստակ սահմանված ժամանակացույց, համաձայն որի դասախոսների կողմից մատուցվում են պարտադիր խորհրդատվական ծառայություններ՝ ընթացիկ քննություններից և պետական ատեստավորումից առաջ նրանց կողմից առաջադրված անհաղթահարելի հարցերի շուրջ: Խորհրդատվությունների ժամանակացույցները փակցվում են ցուցատախտակներին:

Հաստատությունում ներդրված է պարտադիր պայման՝ ուսանողների կողմից լրացնել բաց թողնված դասերը՝ անկախ բացակայության պատճառից յուրաքանչյուր մոդուլի կամ առարկայի գծով յուրացնելու նյութն ամբողջությամբ: Յուրաքանչյուր բաց թողած թեման ուսանողը պարտավոր է լրացնել դասերից հետո: Նրանք իրավունք ունեն ազատ

ժամանակահատվածում՝ դասախոսի թույլտվությամբ լրացնել օրվա բացը (օրինակ հաջորդ օրը)։ Գործնական ժամերի բացը լրացնել հնարավոր չէ, մասնավորաբար Խոհարարական գործ մասնագիտության պարագայում նույն բաղադրատոմսով պատրաստելու հնարավորություն չեն ունենում, սակայն ծրագիրն այնպես է մշակված, որ մյուս բաղադրատոմսերով պատրաստման արդյունքում կարողանում են ձևավորել ակնկալվող կաղությունները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ատամնատեխնիկական գործ և Խոհարարական գործ ՄԿԾ-ի ուսանողները կարող են այցելել դասախոսների աշխատավայր և իրենց դասերը դիտարկել ռեալ-պրակտիկ միջավայրում։

Ուսանողները ունեն խմբեր սոցիալական տարբեր հարթակներում, որտեղ նրանք տարաբնույթ հարցերով դիմում են դասախոսներին։

Ուսանողների՝ վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց առկա չէ, սակայն ուսանողները ազատ իրենց հարցերով կարող են դիմել ղեկավարությանը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կենտրոնի վարչական անձնակազմը պլանավորել է ներդնել հստակ ժամանակացույց վարչական անձնակազմին դիմելու, խորհրդատվություն և օժանդակություն ստանալու համար։ Միաժամանակ այցից պարզվեց, որ կանոնակարգի բացակայությունը չի խոչընդոտել գործընթացներին։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների իրավունքները և պարտականությունները ամրագրված են Հիմնադրամի ներքին կարգապահական կանոններում, ինչպես նաև ուսանողների հետ կնքված պայմանագրերում։ Ուսանողների իրավունքների պաշտպանության գործում կարևոր է ՈՒԽ-ի դերը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ի գործունեությունը ըստ իրականացրած աշխատանքների, սահմանափակվում է թեմատիկ տարբեր միջոցառումների կազմակերպմամբ, օրինակ՝ ուսուցչի տոնի վերաբերյալ միջոցառում, բանավեճերի կազմակերպում և այլն։

Փորձագիտական այցից, շահակիցների հետ հանդիպումներից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կենտրոնում գործում է խրախուսման, ուսանողների վարձավճարների զեղչային համակարգ, որն իրականացվում է ՖՀՄՈՒԿ-ի դրամաշնորհային ծրագրերի միջոցով. սոցիալապես անապահով խավի և բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին տրամադրվում է անվճար ուսուցում, դրամական օժանդակություն, այց արտերկիր, միջոցառումների և մրցույթների մասնակցության հնարավորություններ։

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում 2020 թվականից գործում է Կարիերայի կենտրոն, որն իր գործունեությունն իրականացնում է հստակ սահմանված կանոնակարգով։ ՖՀՄՈՒԿ-ի Կարիերայի կենտրոնն ապահովում է կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցում ուսանողներին, նպաստում է ուսանողների կարիերայի նախապատրաստմանը, աջակցում նրանց աշխատատեղերի որոնման, մասնագիտական կողմնորոշման հարցում, նպաստում շրջանավարտների ինքնուրույն մուտքին աշխատաշուկա։ Կարիերայի կենտրոնի պատասխանատուն մշտական կապ է պահպանում գործատուների հետ, ուսումնասիրում նրանց կարծիքները շրջանավարտների մասնագիտական մակարդակի և կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ, կազմակերպում տարաբնույթ միջոցառումներ, կլոր սեղան քննարկումներ։ Գործատուների և կարիերայի պատասխանատուի կողմից պարբերաբար կազմակերպում և իրականացնում են դասախոսություններ, վերապատրաստումներ, վարպետաց դասեր, էքսպոներ, որոնք իրականացվում են կամավորական սկզբունքով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնի պատասխանատուն մշտապես կապ է պահպանում Հիմնադրամի շրջանավարտների հետ, ունի համակարգված բազա, որտեղ առկա են բոլորի կոնտակտային տվյալները, միաժամանակ նախատեսում եմ զարգացնել բազան: Ունեն ֆեյսբուքյան էջ՝ հատուկ շրջանավարտների համար, որտեղ պարբերաբար տեղադրվում են հայտարարություններ աշխատանքի թափուր տեղերի վերաբերյալ:

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում ուսանողների վերլուծական-հետազոտական աշխատանքներում մասնակցությունը դրսևորվում է ռեֆերատների, ինքնուրույն գործնական աշխատանքների ու հանձնարարությունների միջոցով, որոնցում հետազոտական և վերլուծական բաղադրիչները հիմնականում բացակայում են: Ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ տարբեր առարկաներից՝ մասնավորապես աղետների, քաղաքացիական պաշտպանության թեմաներով: Խոհարարական գործ ՄԿԾ-ի ուսանողները կազմել են ռեստորանների մենյուներ, խոհանոցի հատակագիծ, Կարի արտադրության տեխնոլոգիա մասնագիտության ուսանողները՝ տեխնիկական մոդելավորում և էքսքիզավորում: Առանձին ուսանողների դեպքում որոշակիորեն արտահայտված է վերլուծական միտքը, մասնավորաբար ռեստորանների մենյուներ, խոհանոցի հատակագիծ կազմելիս:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման հստակ կանոնակարգեր և մեխանիզմներ: Գովելի է նաև այն, որ դիմորդների ներգրավմանն ուղղված աշխատանքներն ակտիվ կերպով ընթանում են ՀՀ բոլոր մարզերով, ինչը նպաստում է դիմորդների շրջանում քոլեջի վերաբերյալ հետաքրքրվածության ավելացմանը և դիմորդների թվի շարունակական աճին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ կրթական կարիքների ուսումնասիրության, դրանց վերհանման և բավարարման ուղղությամբ պարբերաբար իրականացնում են աշխատանքներ: Դրական է նաև ուսանող-ղեկավար կազմ՝ կուրսղեկ, դասախոս, ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրեն, Կարիերայի կենտրոնի պատասխանատու սերտ համագործակցությունը, ինչը հանգեցնում է ուսանողների խնդիրների վերհանմանը և համապատասխան արձագանքին ինչպես դասավանդողների, այնպես էլ վարչական անձնակազմի կողմից: Փորձագիտական խումբը դրական է համարում բոլոր օղակների դերը և իրականացված աշխատանքները՝ ուղղված ուսանողների կարիքների վերհանմանը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների մոտիվացվածությունը իրենց կարիքների վերհանման ուղղությամբ բավարար չի դրսևորվում, մինչդեռ դա կարող է առավել նպաստավոր լինել և ապահովել նշված գործընթացի առավել արդյունավետության ապահովմանը, հատկապես աշխատակիցների եղած պատրաստակամության պայմաններում:

Գովելի է համարվում այն փաստը, որ հաստատությունում գործում է ստորաբաժանումների սերտ փոխհամագործակցություն՝ Կարիերայի կենտրոնի պատասխանատու-Որակի ապահովման պատասխանատու-Որակի հանձնախումբ ներգրավված ուսանողներ և պարբերաբար իրականացվում են հարցումներ, որոնց վերլուծությանների դուրս բերված խնդիրները ստանում են իրենց լուծումները: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կենտրոնում իրականացվում են

խորհրդատվական և լրացուցիչ պարապմունքներ և առկա է հստակ ժամանակացույց։ Դրական է համարվում, որ բացակայությունների հետևանքով ուսումնական նյութը բաց թողած ուսանողները պարտադիր կերպով լրացնում են բացթողումները, որը նպաստում է ուսանողների առաջընթացին և սահմանված վերջնարդյունքների ամբողջական ձեռքբերմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է Հիմնադրամում կարիերայի կենտրոնի առկայության փաստը, այդուհանդերձ, գտնում է, որ շրջանավարտների հետ հետադարձ կապի առավել գործուն մեխանիզմների կիրառումը կնպաստի շրջանավարտների կարիքների պարբերաբար վերհանմանը և բարելավման հետագա ուղիների դուրսբերմանը։ Դրական է նաև այն, որ կարիերայի կենտրոնը սերտ համագործակցում է Որակի պատասխանատուի և ՈւԽ-ի հետ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ կարիերայի կենտրոնի աշխատանքների շնորհիվ ապահովվում է՝ կարիերայի կենտրոն-ուսանող և ուսանող-գործատու փոխհամագործակցությունը։ Փորձագիտական խումբը կարևոր հանգամանք է համարում Կենտրոնի պաշտոնական կայքէջի ակտիվ գործունեությունը, ինչը ապահովում է Հիմնադրամի տեղեկատվության հասանելիությունը, հաշվետվողականության ապահովումը և տեղեկատվության տարածումը։ Փորձագիտական խումբը կարևորում է նաև ռեֆերատների առկայությունը և հաստատության կողմից հետազոտական բաղադրիչի ներդրման կարևորումը, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ դեռևս բավականին քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն կա։ Մասնավորաբար, փորձագիտական խումբը կարևորում է ռեֆերատային, կուրսային և հնարավորությամբ նաև ավարտական աշխատանքների իրականացումը և այդ աշխատանքների միջոցով հետազոտական բաղադրիչի արտահայտումն ու համապատասխան կարողությունների զարգացումը։ Միաժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունն ունի հնարավորություններ ձևավորելու միջավայր և այնպիսի միջոցառումների իրականացման մշակույթ, որտեղ ուսանողները կներակայացնեն իրենց հետազոտությունների արդյունքները, սա կարող է նաև մոտիվացնել ուսանողներին և զարգացնել գործընթացները։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Կենտրոնում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ Ուսանողական խորհուրդը։ Խորհրդի անդամները ներգրավված են Կենտրոնի գործընթացներում, իրականացնում են աշխատանքներ, որոնք ուղղված են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը՝ նպաստելով ուսանողակենտրոն միջավայիր ստեղծմանը։ ՈւԽ-ն հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով և մասնակցություն է ունենում կազմակերպչական բոլոր աշխատանքներում։ Փորձագիտական խումբը կարևորում է իրականացված բոլոր գործընթացները, սակայն գտնում է, որ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին դեռս որոշակիորեն զարգանալու անհրաժեշտություն ունի։

Փորձագիտական խմբի կողմից գնահատելի է, որ Հիմնադրանում գործում են ուսանողների խրախուսանքներ՝ բարձր առաջադիմության համար, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ, որոնք ուսանողների մոտ բարձրացնում են հետաքրքրությունը դեպի կրթություն և հավատ Հիմնադրամի նկատմամբ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՖՀՄԿ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման միջոցներ, գործում են խրախուսման մեխանիզմներ, լրացուցիչ պարապունքների և խորհրդատվությունների տրամադրման ծառայություններ, ուսանողները

կարող են ազատ դիմել վարչական կազմին, գործում է կարիերայի կենտրոն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄԿ-ը համապատասխանում է 4-րդ չափանիշի պահանջներին

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: ՖՀՄՈՒԿ-ի ՌԾ-ի նպատակներից է ուժեղացնել հիմնադրամը՝ ապահովելով որակյալ ակադեմիական և լրացուցիչ կրթություն, դասավանդման նոր տեխնոլոգիաներ, բարձր որակավորում ունեցող դասավանդողներ, մանկավարժական գործունեության գնահատման գործիքներ: Հաստատությունում կարևորվում է դասախոսական կազմի համալրումը նոր, երիտասարդ կադրերով, ինչպես նաև փորձառու մասնագետների առաջավոր փորձի փոխանցումը վերջիններիս: Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզվեց, որ այս ամենը ապահովելու համար հիմնադրամն ունի հստակ մշակված ընթացակարգեր, իրականացնում է դասավանդող անձնակազմի վերապատրաստումներ (այդ թվում ֆրանսիացի գործընկեր ՍԵՊՌ-ի աջակցությամբ): ՊԿՉ-ներում հստակ սահմանվում են մասնագիտական հիմնական ծրագիր իրականացնող կադրերի նկատմամբ ներկայացվող պահանջները:

ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին համապատասխանող դասավանդողն ընդունվում է՝ համաձայն Հիմնադրամի «Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների ընդունելության կարգի»: Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների ընդունելության գործընթացը իրենից ենթադրում է թափուր հաստիքի առկայության բացահայտում, աշխատանքային նկարագրի ձևակերպում, աշխատանքային հայտարարության կազմում և տեղադրում, թեկնածուների դիտարկում, հարցազրույցի իրականացում, աշխատանքային պայմանագրի կնքում: Հայտարարությունը տեղադրվում է Հիմնադրամի կողմից վարվող սոցիալական էջերում, Հիմնադրամի կայքում և աշխատանքի տեղավորման կայքերում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցազրույցից հետո թեկնածուին հանձնարարվում է անցկացնել նաև փորձնական դասընթաց, որի ընթացքում գնահատվում է թեկնածուի դասավանդման մեթոդիկան և մոտեցումները, որից հետո որոշվում է ընդունել տվյալ թեկնածուին, թե՝ ոչ: Պայմանագիրը կնքվում է՝ համաձայն ՀՀ ԱՕ-ի դրույթների:

Հիմնադրամն առաջնորդվում է իր կանոնադրությամբ, որում ընդհանրական անդրադարձ կա աշխատողների իրավունքներին և պարտականություններին: 12.04.2018թ.-ին Հիմնադրամի կողմից մշակված «Ներքին կարգապահական կանոններ»-ում նույնպես ամրագրված են գործատուի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները: ՊԴ կազմի ընտրության ժամանակ ՖՀՄՈՒԿ-ն առաջնորդվում է նաև կրթական չափորոշիչներում նկարագրված դասավանդողներին ներկայացվող պահանջներով: Փորձաքննության ընթացքում

պարզ դարձավ, որ ՊԴ կազմի ընտրության ժամանակ ՖՀՄՈՒԿ-ը կարևորում է դասավանդողների մասնագիտական կրթությունը (որակավորումը) և աշխատանքային փորձը տվյալ ոլորտում, պարբերական մասնակցությունը վերապատրաստումներին:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ հիմնադրամն ունի 27 դասավանդող, որոնցից 3-ն աշխատում են համատեղությամբ: Հանրակրթական առարկաների դասախոսներն ունեն մանկավարժական համապատասխան որակավորում: Արտադրական ուսուցման 10 վարպետներից 4-ը ունեն բարձրագույն կրթություն, որոնցից 3-ը՝ մասնագիտական ոլորտում: Արտադրական ուսուցման վարպետներից 4-ը հանդիսանում են Հիմնադրամի տարբեր տարիների շրջանավարտներ: Հիմնադրամի դասավանդողների շուրջ 75%-ի տարիքը չի գերազանցում 45 տարեկանը:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Հիմնադրամի դասախոսական կազմի գնահատման համար հիմք են հանդիսանում դասալսումների արձանագրությունները, դասավանդողների կիսամյակային հաշվետվությունները, ուսանողների կողմից դասավանդողների գնահատմնան արդյունքները, դասախոսների տարեկան աշխատանքների ամփոփ բնութագիրը: Ուսումնական տարվա ընթացքում դասալսումները կազմակերպվում են նվազագույնը երկու անգամ: Ըստ կազմակերպման ձևի անցկացվում են՝ պլանավորված, փոխադարձ և չպլանավորված դասալսումներ: Դասալսմանը կարող է ներկա լինել մեկ կամ մի քանի դասավանդող: Որպես հրավիրյալ՝ դասալսմանը կարող են ներկա գտնվել ծնողական համայնքի ներկայացուցիչներ և Հիմնադրամի սոցիալական գործընկերներ: Դասալսում իրականացնող անձը չի միջամտում դասապրոցեսի ընթացքին, չի կատարում հարցադրումներ և քննարկումներ: Ըստ անհրաժեշտության դասալսումներ կարող են պլանավորել և իրականացնել նաև տնօրենը, ուսումնական գծով տնօրենի տեղակալը, ՈԱՊ-ը, ինչպես նաև կիրառվում են փոխադարձ դասալսումներ: Դասալսման արդյունքները, համաձայն դասալսումների անցկացման կարգի, քննարկվում են և արձանագրվում դասալսումների մատյանում, որտեղ գնահատվում է դասի պլանավորումը, կառուցվածքը, ուսանողների ներգրավվածությունը, ուսանողին ցուցաբերած անհատական մոտեցումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը, նախապես պատրաստված ուսումնական նյութերը, նյութերում առկա տեղեկատվության հավաստիությունը, նորարարական տեխնոլոգիաների օգտագործումը: Դասի ընթացքի մասին տեղեկությունները, դիտարկումներն ու առաջարկությունները լրացվում են դասալսումների մատյանում և տրվում համապատասխան եզրակացությունը, որոնք պարտադիր քննարկվում են դասավանդողի ներկայությամբ: Դասավանդման որակի բարելավման նպատակով ելնելով եզրակացության արդյունքներից՝ դասավանդողի մոտ հնարավոր է սահմանել շարունակական դասալսումներ: Դասալսումների արդյունքների վերլուծությունների հիման վրա դասախոսներին տրվում են համապատասխան խորհրդատվություններ, և դրանց իրականացման ուսումնասիրության նպատակով դասալսումները կրկնվում են: Դասալսումների արդյունավետությունը գնահատելու համար մշակված են հստակ պահանջներ և ընթացակարգեր:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ դասալսումներից բացի կիսամյակի կտրվածքով դասավանդողների կողմից ներկայացվում է հաշվետվություն իրենց կատարած աշխատանքի մասին, որտեղ պետք է նշվեն իրենց կողմից կազմած նոր ուսումնառության նյութերը (հղում տալով Google Drive-ում իրենց հատկացված թղթապանակին), իրենց կողմից անցկացրած միջոցառումները (բաց դաս, ցերեկույթ, հանդիպում), օգտագործված առցանց գործիքները և ռեսուրսները (կցելով կայքերի հղումները՝

Quizziz, LearningApps.org, Google forms, Kahoot.com և այլն), համատեղ դասերի նկարագիրը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը, իրենց մասնակցությունը մասնագիտական դասընթացներին վերապատրաստումներին:

ՖՀՄՈՒԿ-ի դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները գնահատելիս կարևորվում է ուսանողների կարծիքը, որը ստացվում է Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցումների միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները բարձր են գնահատում դասախոսների կատարած աշխատանքը և ուսումնական կենտրոնում ստացած գիտելիքները: Գնահատման այս եղանակը իրականացվում է տարեկան կտրվածքով և ներառում է հետևյալ կետերը. լսարանի կառավարում, օբյեկտիվություն, թվային տեխնոլոգիաների կիրառում, իրականության հետ առնչվող վառ օրինակների մեջբերում, տեսական և գործնական դասերի համամասնության պահպանում, ուսանողակենտրոն մոտեցում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նման գնահատումները հիմնականում ուղղված են դասավանդման, գնահատման մեթոդներին, դասախոս-ուսանող փոխհարաբերություններին, մանկավարժական մոտեցումներին, իսկ մասնագիտական կարողությունների գնահատումն արտահայտված չէ, նաև հաշվի առնված չեն ՌԾ-ով և հետագա զարգացումներով պայմանավորված որոշ ուղղություններ, այնպես ինչպես լեզվահմացությունը, հետազոտական գործունեությունը:

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ «Աշխատակիցների պարգևատրման, խրախուսման և առաջխաղացման կարգ»-ում նշված է ոչ միայն խրախուսման, այլ նաև տույժերի մասին. փորձաքննության ընթացքում գնահատման արդյունքներով պայմանավորված տույժերի կիրառման դեպքեր չարձանագրվեցին: Նշված կարգով սահմանված են խրախուսման տարաբնույթ մեխանիզմներ: Օրինակ, գործում է տարվա լավագույն դասախոս անվանակարգն, ըստ որի ընտրվում է լավագույն դասախոսների եռյակը՝ հաշվի առնելով տարվա ընթացքում իրենց կողմից իրականացրած տարաբնույթ աշխատանքը, ցուցաբերած ակտիվությունը, նորարարական մոտեցումները և այլն: Փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ խրախուսման մեխանիզմները կիրառվում են, այդ թվում՝ նաև ֆինանսական: Փորձագիտական խումբը պարզեց նաև, որ դասավանդողների գնահատման բոլոր եղանակների արդյունքները հաշվի են առնվում դասախոսական կազմի անվանակարգման ժամանակ: Ամեն տարի ըստ վերոնշյալ չափանիշների ընտրվում է լավագույն դասախոսների եռյակը, ովքեր համապատասխանաբար ստանում են խրախուսում՝ պարգևավճարների ձևով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ վերջին տարիներին ՖՀՄՈՒԿ-ում նկատելի են դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ: Հիմնադրամում կարևորվում է սկսնակ դասախոսների հետ կատարվող աշխատանքը: Այդ գործառույթը իրականացվում է մենթորների կողմից:

Փորձագիտական խումբը պարզեց նաև, որ բոլոր մասնագիտությունների գծով Հիմնադրամում առկա են ՖՀՄՈՒԿ-ի դասավանդողների կողմից մշակված ուսումնական ձեռնարկներ՝ նախատեսված ներքին օգտագործման համար:

Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասավանդողի մասնագիտական զարգացման նպատակով Հիմնադրամը տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում է հայ և ֆրանսիացի դասավանդողների փոխադարձ այցեր, ինչը մասնագետներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ եվրոպական առաջադեմ փորձին, դասավանդման մեթոդաբանությանը: Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ

Հիմնադրամը ներգրավում է դասավանդողներին կատարելագործմանն ուղղված միջոցառումներին՝ ապահովելով նրանց տիրապետումը դասավանդման նոր մեթոդներին, գործիքներին, ուսուցողական առցանց հարթակներին և ռեսուրսներին: Այդ նպատակով Հիմնադրամի դասախոսները մասնակցել են ՍԿԼԱԴ կրթական հարթակի կազմակերպած առցանց դասընթացներին, Հայկական Ալիանս Ֆրանսեզի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին և այլն: Յուրաքանչյուր տարի դասավանդող կազմի մեթոդական վերապատրաստման նպատակով ՍԵՊՖԱ-ն հայտ է ներկայացնում ՄԿՈՒԶԱԿ՝ նշելով վերապատրասման մասնակիցների ցանկը:

Հիմնադրամը հանդիսանում է Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ETF) գերազանցության կենտրոնների ցանցի անդամ և ակտիվ մասնակցում է Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ETF) առցանց հանդիպումներին, ինչը թույլ է տալիս ծանոթանալ մանկավարժության նորարար մոտեցումներին և իրականացվող միջազգային նախագծերին:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ մասնագիտական առարկաներ դասավանդողների մի մասը դասավանդմանը զուգահեռ աշխատում է համապատասխան մասնագիտական ոլորտներում՝ հանդիսանալով պրակտիկ- դասախոսներ (ատամնաբուժական/ ատամնատեխնիկական կլինիկաներում, գեղեցկության սրահներում, ռեստորաններում): Փորձագիտական խմբի կողմից նաև պարզվեց, որ դասավանդող կազմը որակյալ մասնագետներով համալրելուն է միտված Հիմնադրամում գործող դասավանդողների վարձատրության համակարգը, ինչը միևնույն ժամանակ թույլ է տալիս շահագրգռել մասնագետին և կանխել կադրերի հոսունությունը: Համաձայն այդ համակարգի, մասնագիտական առարկաներ դասավանդողների համար ապահովվում է աշխատավարձի շարունակական բարձրացում Հիմնադրամում աշխատանքային ստաժի աճմանը զուգահեռ (վերանայում յուրաքանչյուր 5 տարին մեկ), հանրակրթական բլոկի դասավանդողների, այդ թվում ֆրանսերեն առարկայի դասավանդողի համար ևս ապահովվում է աշխատավարձի վերանայում:

ՄՈՒՀ-ը միտված է պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանը և այդ նպատակով իրականացնում է մի շարք միջոցառումներ: Դասավանդողների առաջընթացի ապահովման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը կարող է կատարվել ինչպես Հիմնադրամի կողմից, այնպես էլ այլ կազմակերպություններում: Գործընթացը կարող է իրականացվել ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակով: Դասավանդողները անցնում են հատուկ մասնագիտական և մանկավարժական հմտությունների վերապատրաստումներ, մասնակցում են սեմինարների և կոնֆերանսների ինչպես առկա, այնպես էլ հեռահար տարբերակով, տեղի և արտասահմանյան գործընկերների կողմից իրականացվող վարպետաց դասերի: Նրանց համար կազմակերպվում են օտար լեզուների և համակարգչային հմտությունների դասընթացներ: Նաև իրականացվում են արտասահմանյան գործընկերների հետ փորձի փոխանակման ծրագրեր և ֆոկուս-խմբային հանդիպումներ փորձառու դասավանդողների հետ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնական կենտրոնն դասավանդողների համար իրականացնում է մասնագիտական վերապատրաստումներ, այդ թվում նաև արտերկրում, իր ֆինանսական ռեսուրսների հաշվին: Խրախուսվում է ֆրանսերեն լեզվի իմացությունը՝ հաշվի առնելով սերտ համագործակցությունը Ֆրանսիայի հետ և այնտեղ կազմակերպվող վերապատրաստումները, սակայն այս առումով դեռևս առկա են որոշ խնդիրներ: Ունեն մշակված ատեստավորման կարգ, սակայն այն չի գործել, քանի որ դեռևս դրա կարիքը չեն ունեցել:

Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ հիմնադրամում առկա են բազմագործառույթ աշխատակիցներ, ովքեր ծանրաբեռնված են տարբեր վարչական գործառույթներով: Հիմնադրամը նման մոտեցումը համարում է դասավանդողներին՝ վարչական գործընթացներում ներգրավելու մեխանիզմ: Առկա են նաև որոշ գործառույթներ, որոնց իրականացումը լրացուցիչ վարձատրության աղբյուր է հանդիսանում, ըստ սահմանված մոտեցման: Ուսումնաօժանդակ աշխատակազմ ՄՈՒՀ-ում չի գործում, նրա գործառույթները նույնպես բաշխված են դասավանդողների միջև: Փորձագիտական այցից պարզվեց, որ ղեկավար կազմը դեռևս կադրերով համալրման անհրաժեշտություն է տեսնում՝ ապահովելու համար ՌԾ նպատակների իրագործումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ կենտրոնում առկա է դասավանդողների ընտրության գործող քաղաքականություն: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործող մոտեցումը թույլ է տալիս լիարժեք կերպով կարծիք կազմել դասավանդողի կարողությունների և հնարավորությունների վերաբերյալ՝ հետագա գործընթացի արդյունավետ իրականացման տեսանկյունից: Այսպիսով՝ ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության հստակ ընթացակարգեր ու քաղաքականություն: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ ուսումնաօժանդակ կազմով համալրումը կթեթևացներ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունը և էլ ավելի արդյունավետ կդարձներ աշխատանքը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այցի արդյունքում պարզ դարձած այն փաստը, որ մասնագիտական առարկան տիրապետելուց զատ կարևորվում է դասախոսների մանկավարժական ստաժն ու որակները՝ դասավանդման ժամանակակից մեթոդներին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելը: Հիմնադրամում խրախուսվում է առավել ինտերակտիվ դասընթացների վարումը ուսանողների շրջանում հետաքրքրությունը մեծացնելու ու մոտիվացիան բարձրացնելու նպատակով: Բացի այդ ընտրության ժամանակ առավելություն է հանդիսանում ֆրանսերեն լեզվի իմացությունը՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի սերտ համագործակցությունը Ֆրանսիայի գործընկերների հետ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ մասնագիտական առարկաներ դասավանդողների մի մասը դասավանդմանը զուգահեռ աշխատում է համապատասխան մասնագիտական ոլորտներում՝ հանդիսանալով պրակտիկ-դասախոսներ: Փորձագիտական խմբի կարծիքով դա ապահովում է դասավանդման համահունչությունը աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև դասախոսի մասնագիտական որակների արդիականությունը և նպաստում ավելի գործնական մոտեցմանը:

Գովելի է նաև այն, որ բոլոր մասնագիտությունների գծով Հիմնադրամում առկա են դասավանդողների կողմից մշակված ուսումնական ձեռնարկներ՝ նախատեսված ներքին օգտագործման համար, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմամանը:

Գնահատելի է նաև այն, որ նոր մասնագիտական ուղղություններով դասընթացներ բաշխելիս մի կողմից հաշվի է առնվում դասավանդման տարիների փորձը, պրակտիկ աշխատանքը, որակավորումը, մյուս կողմից սկսնակ դասախոսներին հանձնարարվում է մոդուլների վերաբերյալ նշումներ անել՝ փոփոխությունների առաջարկներ ներկայացնելու համար, որպեսզի փոփոխություններ արվի հետագայում: Սա ապահովում է համապատասխան որակներով դասավանդողներ ունենալուն և նրանց շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒԿ-ը գործածում է դասավանդողների գնահատման մեխանիզմ, որը ներառում է տարբեր գործոններ՝ ինչպես ուսանողների կողմից գնահատում, դասալսման արդյունքներ, այնպես էլ որոշ փաստական հենք, կարևոր է նաև, որ դրա հետևանքով խրախուսման գործընթաց է առկա: Այս ամենը նպաստել է դասավանդողների մոտիվացվածության:

Սակայն փորձագիտական խմբի կարծիքով ցանկալի կլինի, որպեսզի հետագայում դասավանդողների գնահատումն նաև հիմնված լինի իրենց ՌԾ-ի վրա, այսինքն ներառի լեզվի իմացությունը, գիտական հետազոտությունների իրականացումը և այլն, ինչպես նաև նկատի առնվեն մասնագիտական կարողությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում կարիքի գնահատման հիման վրա ֆրանսիացի գործընկերների կողմից իրականացվող վերապատրաստումները և փորձի փոխանակումները, ինչպես նաև ծանոթացումը միջազգային տարբեր նորարարական նախագծերին, ինչն ապահովում է ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների արագ ներմուծումը ուսումնական պրոցեսում, դասավանդողների մասնագիտական աճը և նոր դասընթացների նախագծումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ն ունի աշխատակիցների առաջընթացիքաղաքականություն: Օրինակ՝ աշխատավարձը տարբեր է պայմանավորված ստաժով և աճում է վերջինիս հետ միասին: Բացի այդ անվանակարգման արդյունքում դասախոսները լրավճար են ստանում և պարգևատրվում: Սա հանգեցնում է դասավանդողների առաջընթացին միտված մոտիվացվածության բարձրացման և կատարելագործման:

Գնահատելի է նաև այն, որ սկսնակ դասավանդողների աշխատանքը կազմակերպվում է հստակ գրաֆիկով, որը նախատեսում է փորձառու մասնագետի՝ մենթորի ուղղորդում, վերջինս մի քանի ամիս շարունակ ներկա է լինում դասավանդողի լսարանային և գործնական ժամերին և իրականացնում է աջակցող-ուղղորդող գործառույթ: Այսպիսի մոտեցումը փորձագիտականն խմբի կարծիքով ապահովում է սկսնակ դասավանդողի արագ ինտեգրումը դասավանդման պրոցեսին: Միաժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ մենթորի աշխատանքը ևս կարող է որոշակիորեն խրախուսվել (դասավանդողի գնահատման գործընթացում որպես գործոն նկատի ունենալով կամ այլ կեպ), ինչը կարող է նպաստել այդ գործառույթների առավել մոտիվացված և արդյունավետ իրականացմանը:

Հիմնադրամում խրախուսվում է դասավանդողների բազմագործառույթ աշխատանքը, ինչը հիմնադրամի կողմից կկարևորվում է, որ աշխատակիցների համար նաև լրացուցիչ վարձատրության աղբյուր է հանդիսանում: Դա մի կողմից օգնում է խուսափել աշխատակիցների հոսունությունից աշխատաշուկայի ներկայիս պայմաններում:Սակայն մյուս կողմից լրացուցիչ ռիսկեր է պարունակում նման բազմագործառույթ աշխատակցի աշխատանքից ազատվելու պայմաններում՝ ինչպես ուսումնական ու վարչական օղակների միաժամանակյա խաթարման տեսանկյունից, այնպես էլգերծանրաբեռնվածությամբ պայմանավորված արդյունավետության ապահովման տեսանկյունից: Ուստի փորձագիտական խումբը համարում է, որ ինչպես այս տեսանկյունից, այնպես էլ ՌԾ նպատակների իրագործելիության ամուր երաշխիքներ ստեղծելու տեսանկյունից մարդկային ռեսուրսները համապատասխանեցնելու անհրաժեշտություն ունեն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական

կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, քաղաքականություն և ընթացակարգեր, դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար և վերջինիս արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան իրականացվում են դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, առկա է մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամն իր՝ 2022-2027թթ. ՌԾ-ում հետազոտությունը որպես նպատակ և առաջնահերթություն չի դիտարկում: Հաստատությունը դեռևս չի սահմանել իր հետազոտական հավակնությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունը նաև չունի մշակված ռազմավարություն և քաղաքականություն հետազոտական աշխատանքների իրականացման համար: Հարկ է նշել, որ հաստատությունը իրականացնում է վերլուծություններ՝ հետազոտական աշխատանքների ներդրման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու, կատարվում են ուսումնասիրություններ հետազոտական աշխատանքների իրականացման կազմակերպման և կանոնակարգման համար:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ հիմնադրամը նախատեսում է 2023-2024 ուսումնական տարվանից իրականացնել նախագծային ծրագրեր, որոնք կներառեն հետազոտական բաղադրիչ: Հաստատության կողմից նախատեսվում է, ՈԱՊ-ի առաջարկով, Ուսումնամեթոդական խորհրդի նիստի ընթացքում քննարկման դնել «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողների կողմից կուրսային աշխատանքներ կատարելու հարցը:

2023 թվականի մայիսի 12-ին հիմնադրամը Ֆրանսիայի Լիոն քաղաքում գործող Բյուլլուկյան հիմնադրամին հաստատության կողմից ներկայացրել է եռամյա ծրագիր, որն իր մեջ ներառում է հետազոտական բաղադրիչ՝ հայ և ֆրանսիացի ուսանողների և դասավանդողների մասնակցությամբ: Այս ծրագրի նպատակն է զարգացնել Խոհարարություն և Հրուշակագործություն մասնագիտությունները՝ երկխոսության մեջ դնելով հայ և ֆրանսիական խոհարարական մշակույթները և նպաստել հայկական մշակութային ժառանգության տարածմանը: Տվյալ համագործակցության շրջանակներում նախատեսվում է, որ Հայաստանի մարզերից, ուսանողները կհավաքագրեն հայկական ավանդական խոհանոցային պարագաներ և բաղադրատոմսեր՝ կկազմակերպվեն ցուցահանդեսներ հայ և ֆրանսիացի հասարակության

համար, կստեղծվի բաղադրատոմսերի գիրք ուսանողների կողմից, որը կօգտագործվի ուսումնական գործընթացում, ինչպես նաև նախատեսված կլինի հանրության լայն շերտերի համար։ Այս հետազոտական ծրագրի մեթոդաբանության մշակումը նախատեսվում է իրականացնել Հիմնադրամի և ՍԵՊՌ-ի կողմից, որին ակտիվ կմասնակցեն նաև ոլորտի ակտիվ դերակատարներ Հայաստանից և Ֆրանսիայից։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում առկա չէ հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույց կամ սահմանված կանոնակարգ, ինչպես նաև ուսանողները նախապես (դասընթացի ձևով) չեն ուսումնասիրում հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմ և մեթոդաբանություն։ Մշակված չեն նաև հետազոտական աշխատանքի գնահատման հստակ ռուբրիկներ/չափանիշներ, որը ցույց կտա, թե ուսանողն իր աշխատանքի ամեն բաղադրիչն ինչպես պետք է կատարի և ինչ միավոր է դրա համար նախատեսված։

Հաստատությունում իրականացվում է դասախոսների գնահատում։ Հետազոտական բաղադրիչը դասախոսների գնահատման ժամանակ հաշվի չի առնվում։ Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ընդհանուր առմամբ, Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամի դասախոսական անձնակազմը այլ ՄՈՒՀ-երի նույն ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի իրականացման վերաբերյալ ուսումնասիրություններ դեռևս չի կատարել։

«Խոհարարական գործ» մասնագիտության դասավանդողը հանդիսանում է ԿԶՆԱԿ-ի կողմից՝ 2022թ.-ին հաստատված «Ռեստորանային սպասարկում» ուսումնական ձեռնարկի հեղինակ։ Ձեռնարկը տպագրվել է 2022 թ.-ին։ Ձեռնարկում հեղինակն անդրադարձ է կատարել նաև ռեստորանային սպասարկման ոլորտում անվտանգության կանոնների պահպանմանը, անվտանգության տեղնիկաներին, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը։ Ձեռնարկը հարուստ է լուսանկարներով և սխեմաներով, ինչպես նաև մշակված է ՆՇՈՒՄ բաժինը՝ ռեստորանային ոլորտում սահմանված կանոնների համար։

Առկա է «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության դասավանդողի կողմից հեղինակված է 3 ուսումնական ձեռնարկ, որոնք ևս հաստատված են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից։ «Դերձակ-մոդելավորող 2014», «Դերձակ-մոդելավորող 2015» «Դերձակ-մոդելավորող 2017»։ Ձեռնարկները մշակված են հագուստի մանր մասնիկների մշակման սխեմաներով, գծագրերով և լուսանկարներով։

Ֆրանսերեն լեզվի ձեռնարկ է մշակվել ֆրանսերենի դասախոս-մասնագետի կողմից «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության ուսանողների համար։ Ձեռնարկը նախատեսված է տվյալ ոլորտում մասնագիտական ֆրանսերենի խորացված ուսուցման համար։

Վերոնշյալ ձեռնարկները նախատեսված են հաստատությունում ներքին օգտագործման համար։

Հիմնադրամի դասավանդողներից 2-ը հանդիսանում են մի շարք հոդվածների հեղինակներ։

Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամը Գերազանցության կենտրոնների Էրազմուս+ ծրագրի շրջանակներում պորտուգալացի գործընկերոջ կոորդինացմամբ 25 մասնակիցների հետ միասին հայտ է ներկայացրել Եվրահանձնաժողովին՝ տուրիզմի ոլորտի քառամյա ծրագրի համար, որի շրջանակներում կատարվելու են հետազոտական աշխատանքներ։ Ծրագրի իրականացման պայմաններից է, որպեսզի յուրաքանչյուր երկիր ծրագրում ներգրավի տուրիզմի ոլորտի մեկ գործընկեր։

Հիմնադրամը կոնսորցիումում որպես գործընկեր հրավիրել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին Սյունիքի մարզից: Փորձագիտական այցից պարզվեց, որ այս ծրագրի իրականացման համար հաստատությունում համապատասխան մասնագետների ներգրավման ուղղությամբ աշխատանքների մեկնարկը տրված է:

Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքների իրականացման համար խրախուսման մեխանիզմներ առկա չեն:

ՄԿԾ-ների հանրակրթական և ոչ մասնագիտական առարկաների շրջանակներում ուսանողներն իրականացնում են ռեֆերատային աշխատանքներ: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ռեֆերատները հիմնականում հետազոտական բաղադրիչ չեն պարունակում, Կուրսային և ավարտական աշխատանքներ ուսանողների կողմից չեն իրականացվում:

Ուսանողները ռեֆերատային աշխատանքներ են իրականացնում նաև մասնագիտական մոդուլների շրջանակներում: «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ ծովամթերքի տեսակների, ուտեստների ծագման և բաղադրատոմսերի ստեղծման, շեֆ խոհարարների կենսագրականների և գործունեության մասին: Այս պարագայում, առանձին ուսանողների մոտ ոռշակիորեն արտահայտվում է վերլուծական և հետազոտական բաղադրիչը: «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների մշակված ռեֆերատները վերաբերում են աղանդերների ծագմանը, բաղադրատոմսերին, ինչպես նաև հայտնի հրուշակագործների կենսագրականներին: «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության շրջանակներում ռեֆերատները ներկայացվում են խմբակային՝ «Հագուստի էվոլուցիան», «Նորաձևության շաբաթը Միլանում» և այլ թեմաներով: Ռեֆերատների ներկայացման ժամանակ ուսանողները մշակում են նաև սահիկահանդեսներ հանձնարարված թեմաների շուրջ: Փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ռեֆերատների մեծ մասում բացակայում են համապատասխան հետազոտական վերլուծությունները: Ռեֆերատները գլխավորապես համացանցից կրկնօրինակումներ են:

Հիմնադրամում ուսանողների կողմից որպես ինքնուրույն աշխատանքներ ներկայացվել են նաև բաղադրատոմսերի ստեղծումը, հագուստի էսքիզների կատարումը:

«Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության շրջանակներում ուսանողները կատարում են շրջազգստի մոդելի էսքիզավորում: Էսքիզավորման ժամանակ ուսանողները հաշվի են առնում էսքիզի նորաձև լինելը և արդիականությունը: Ուսանողները էսքիզավորումը իրականացնում են սեփական պատկերացմամբ, էսքիզները քննարկվում են նաև դասախոս-մասնագետի հետ միասին:

«Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները հանձնարարականներ են ստանում և իրականացնում ափսեի ձևավորման ժամանակ: Յուրաքանչյուր ուսանող ուտեստը մատուցելիս ձևավորում է մատուցվող ափսեն եղած բաղադրիչներով:

Բաղադրատոմսերի ուսումնասիրության և պատրաստման ժամանակ ուսանողները հաճախ հանդես են գալիս առաջարկներով, օրինակ՝ տվյալ բաղադրատոմսում ավելացնել կամ բացառել որևէ բաղադրիչ: Առաջարկները քննարկվում են դասախոսների և ուսանողների հետ միասին: Այս հանձնարարականը ուսանողի մոտ ձևավորում է ստեղծագործ մտքի, ինքնուրույնության և նոր բաղադրատոմսի ստեղծման կարողություններ: Այս մասնագիտության շրջանակներում ուսանողները նաև մշակում են մենյուներ և լոգոտիպեր սեփական ռեստորանների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈւԿ-ը գիտակցում է հետազոտական աշխատանքների կարևորությունունը և որոշ քայլեր է ձեռնարկել և նախադրյալներ է ստեղծում այս ուղղությամբ և որոշակի քաղաքականություն է իրականացնում, արդեն իսկ որոշ ծրագրեր է իրականացնում: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է հաստատության համար հետազոտական ուղղությունների որոշակիացումը ըստ մարդկային և նյութական ռեսուրսների ու համագործակցության շրջանակների հնարավորությունների: Ինչպես նաև ըստ այդ ուղղությունների ՌԾ նպատակների սահմանումն ու նպատակներին հասնելու երաշխիքների ստեղծումը: Այս ամենը կապահովի հետազոտական ուղղությամբ հաստատության դիրքավորումը և կնպաստի այդ ուղղությամբ արդյունքների ապահովմանը:

Փորձագիտական խմբի համար նկատելի է, որ ՖՀՄՈւԿ-ի դասախոսական կազմը համապատասխան ներուժ ունի հետազոտական աշխատանքներ կատարելու, դրական է, որ առկա են նրանց կողմից հրատարակված և գործածվող ուսումնական ձեռնարկներ, իսկ հաստատությունն էլ ունի հնարավորություն դրանք խթանելու և զարգացնելու: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ հաստատությունն հետազոտական աշխատանքների ուղղությունը դեռևս խրախուսման ուղղություն չի համարում և համպատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ չի ներդրել: Մինչդեռ դասախոսական անձնակազմի հետազոտական գործունեության իրականացման խթանումը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական աճին, ուսանողների ներգրավմանը համատեղ հետազոտական աշխատանքներին, ինչպես նաև ավելի ուժեղ կդարձնի հետազոտություն ուսումնառություն կապը: Ավելին, փորձագիտական խումբը հաստատության համար նաև հնարավորություն է դիտարկում միջազգային հետազոտությունների իրականացումը՝ նկատի ունենալով ՍԵՊՌ-ի հետ կապերը և միջազգային ծրագրեր իրականացնելու փորձը:

Դրական է, որ ՖՀՄՈւԿ-ը որոշ այլեր է ձեռնարկել առաջիկայում հետազոտական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ, այս առումով գործածելու է միջազգային ծրագրեի հնարավորությունները: Այս գործընթացների աղյունավետության ապահովման տեսանկյունից կարևոր կլինի հստակ ճանապարհային քարտեզի ներդրումը և նպատակների սահմանումը::

Մտահոգիչ է, որ ուսանողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքներն իրենց բովանդակությամբ ամբողջությամբ չեն նպաստում ուսանողների վերլուծական, հետազոտական և ստեղծագործական մտքի զարգացմանը: Այս առումով առկա են առանձին դրական նախադեպեր, ինչը գնահատելի է և կարող է նաև հիմք հանդիսանալ լավ փորձի տարածման համար:

Փորձագիտական խումբը ընդգծում է նախքան հետազոտական աշխատանքներ սկսելը ուսանողներին հետազոտություն իրականացնելու գործիքակազմի, քոլեջի կողմից ներկայացվող ձևաչափային պահանջների հետ ծանոթացման անհրաժեշտությունը, որը կնպաստի հետազոտական աշխատանքների բովանդակային և տեխնիկական կողմերի բարելավմանը: Հետազոտական աշխատանք իրականացնելու ուղեցույցի մշակումը, որտեղ ներկայացված կլինի, թե ինչ է հետազոտական աշխատանքը, ինչպիսի մասերից այն պետք է բաղկացած լինի, ինչպիսի չափանիշներով է այն գնահատվելու հաստատության համար հրատապ խնդիր է: Ուղեցույցի մշակման աշխատանքներում կարևոր է նաև հետազոտության ոլորտում

փորձառություն ունեցող մասնագետի ներգրավումը, այս տեսանկյունից հաստատությանը կարող են աջակցել արտաքին կապերը։

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ հետազոտությունը հիմնադրամի համար առաջնահերթություն չի դիտարկվում, առկա չէ հետազոտական աշխատանք իրականացնելու հստակ քաղաքականություն և նպատակներ, ուսանողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքներում բացակայում է վերլուծական մասը և ինքնուրույնությունը, դասախոսական կազմը հիմնականում չի իրականացնում հետազոտական աշխատանքներ, ներդրված չեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու խրախուսման հստակ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ի-ը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին։

Եզրահանգում: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է անբավարար։

VII.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ՖՀՄՈՒԿ-ի զբաղեցրած ամբողջ (շենքային, հողային) տարածքը 1670.2 քմ է, տիպային շինության՝ տեղակայված է 3 հարկանի շենքում։

Հաստատությունն ունի 10 լսարան, 4 լաբորատորիա և կարի արհեստանոց։ Փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ հաստատության ներքին շահակիցները նշեցին, որ լսարանների քանակը բավականին սուղ է։

Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամն իր՝ 2022-2027թթ. ՌԾ-ում հստակ նպատակադրում է հիմնադրամի վերակազմակերպում արհեստների կամպուսի։ Կամպուսի հինման գլխավոր նպատակներից է ընդլայնել հաստատությունը՝ դարձնելով ուսումնական, տնտեսական թաղամաս, որն իր մեջ կներառի նոր լաբորատորիաներ, արհեստանոցներ, սպորտդահլիճ՝ այսպիսով արժևորելով թաղամասը։ Տարածքի ընդլայնումը նախատեսվում է իրականացվել հիմնադրամին կից Ստ. Լիսիցյանի անվան թիվ 34 հիմնական դպրոցին պատկանող մարզադահլիճի մասնաշենքի և բակային տարածքի հաշվին։ Ըստ հաստատության 2022-2027 թթ. մշակված ՌԾ-ի կամպուսը կունենա ձեռնարկությունների կարիքների նպատակով լրացուցիչ կրթություն իրականացնելու համար նախատեսված տարածք և բարձր մակարդակի կիրառական ռեստորան, կկարողանա ռեսուրսներ գեներացնել հաստատության հետագա գործունեությունն ապահովելու համար։

Հիմնադրամում ֆիզիկական կուլտուրա առարկայի դասաժամերը անցկացվում են հիմնադրամին կից Ստ. Լիսիցյանի անվան թիվ 34 հիմնական դպրոցին պատկանող բակային տարածքում (379.41քմ.), ոչ բարենպաստ եղանակային պայմանների ժամանակ լսարանում՝ շախմատ խաղալով։

Հիմնադրամում բուժկետը բացակայում է։ Բուժօգնության կարիքի դեպքում հիմնադրամը դիմում է Շտապ օգնության ծառայությանը։ Գործավարությունում առկա է առաջին օգնության

պարագաների փաթեթ: Կամպուսի ծրագրի իրականացման արդյունքում հիմնադրամը նախատեսում է ստեղծել նաև բուժկետ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում գործող լաբորատորիաները կահավորված և գերհագեցած են հաստատությունում իրականացվող ՄԿԾ-ներին համապատասխան նորագույն սարք-սարքավորումներով: Հիմնադրամը սերտ համագործակցում է ՍԵՊՌ-ի հետ, հիմնադրման օրից մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, լաբորատորիաների ստեղծումն ու կահավորումը հիմնադրամում իրականացվել է ՍԵՊՌ-ի լաբորատորիաների մոդելով, գործունեության ընթացքում հաստատությունն ուղղորդվում է ՍԵՊՌ-ի առաջավոր փորձով: Ֆրանսիացի գործընկերների ջանքերով հաստատությունը ձեռք է բերել արդի սարքավորումներ և գրականություն:

Հաստատությունում գործում է «Խոհարարական գործ» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար մեկ մասնագիտական խոհանոց-լաբորատորիա: Լաբորատորիայում տեղադրված են 12 անհատական սեղաններ և յուրաքանչյուր ուսանողին հատկացված աշխատանքային գործիքների փաթեթն ապահովում է ուսանողի անհատական աշխատանքը գործնական դասերի ընթացքում: Անհատական աշխատանք կատարելու նպատակով 25 հոգանոց խմբերը բաժանվում են 2 խմբի: Խոհանոց-լաբորատորիան կահավորված է ամբողջությամբ Ֆրանսիայից բերված գույքով, կահավորման պլանավորումը կատարվել է միջազգային չափանիշներին համապատասխան Լիոնից ժամանած փորձագետ-մասնագետների կողմից, որի արդյունքում խոհանոցում պահպանվում են սննդի անվտանգության, հիգիենայի, HACCP համակարգի ողջ շղթան: Գործնական աշխատանքի համար անհրաժեշտ սննդամթերքը ևս տրամադրում է հիմնադրամը: Խոհանոց-լաբորատորիան 220 տարատեսակ ժամանակակից սարք-սարքավորումներով՝ խմորհունցի մեքենա, մսի և ձկան սառնարան, գերսառեցնող սառնարան, բանջարեղենի սառնարան, խմորեղենի սառնարան: Գործնական աշխատանքի ժամանակ ուսանողներից յուրաքանչյուրին տրամադրվում է խոհարարական մասնագիտացված դանակների հավաքածու, աշխատանքային տախտակներ՝ բազմերանգ, տարբեր սննդամթերքի կտրման համար: Ուսանողները լաբորատորիա մուտք են գործում հատուկ համազգեստով և կոշիկներով: Փորաձագիտական խմբի կողմից ռեսուրսների ուսումնասիրման ժամանակ նկատելի էր, որ խոհանոց-լաբորատորիայում յուրաքանչյուր անկյունում առկա էին պաստառներ մթերքի ճիշտ մշակման, ձեռքի այրման ժամանակ առաջին բուժօգնության ճիշտ իրականացման համար և այլն:

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար Հիմնադրամում առկա է 2 լաբորատորիա, 1 ինդուկցիոն ձուլարան, գիպսային աշխատանքների համար նախատեսված 1 սենյակ: Լաբորատորիաներից առաջինը կահավորված է ամբողջությամբ Ֆրանսիայից բերված գույքով, կահավորման պլանավորումը կատարվել է միջազգային չափանիշներին համապատասխան ՍԵՊՌ-ից ժամանած փորձագետ-մասնագետների կողմից: Երկրորդ լաբորատորիան հիմնվել է ավելի ուշ՝ նույն չափանիշներին համապատասխան: Այս մանագիտության դիմորդների թվաքանակի աճով պայմանավորված, լաբորատորիայում նախատեսվել է ավելացնել աշխատանքային սեղանները և սարքերը: Լաբորատորիաները կահավորված են ատամնատեխնիկական անհատական սեղաններով. յուրաքանչյուր ուսանողի համար ստեղծված են անհատական պայմաններ՝ աշխատանքային տարածք, նյութեր և գործիքներ: Փորաձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնառության

ողջ ընթացքում, ելնելով դասավանդվող մոդուլի պահանջներից, բոլոր ուսանողների համար հասանելի են լաբորատորիայում գտնվող անհրաժեշտ սարքավորումները:

Հիմնադրամի գործընկեր «Հովակիմյան Լաբ» ընկերությունը հանդես է եկել նախաձեռնությամբ՝ կազմակերպել վարպետության դաս «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողների համար՝ ծանոթացնելու շուկայի վերջին տենդենցներին՝ ներգրավելով գերմանական Renfert ֆիրմայի ներկայացուցչությանը, որը համաձայնել է անվճար տրամադրել նյութերը դասընթացների իրականացման համար: Շենքային պայմաններից ելնելով՝ հիմնադրամում տեղաշարժման խնդիրներ ունեցող շահառուների համար առայժմ դասընթացները կազմակերպվում են միայն հեռավար, ԿԱՊԿՈՒ շահառուները մասնակցում են դասընթացներին առանց սոցիալական մանկավարժի կամ հոգեբանի աջակցության:

Հաստատությունում առկա է «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտական լաբորատորիա-սրահ: Սրահում առկա են մանեկեններ, բարձրակարգ խնամքի նյութեր, ներկեր: Յուրաքանչյուր ուսանողի համար հաստատությունը տրամադրում է մանեկեններ՝ վարսահարդարման աշխատանքներ իրականացնելու համար: Ուսանողները գործնական աշխատանքներ իրականացնելիս աշխատում էին մասնագիտական հայելիների առաջ:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ հաճախ ուսանողներին վստահում են դասախոսները՝ հանդիսանալով մոդելներ իրենց վարսերը կտրելու, հարդարելու և խնամքի իրականացման համար:

«Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման համար հիմնադրամում առկա է կարի արհեստանոց:

Դասընթացի արդյունավետ կազմակերպման համար յուրաքանչյուր ուսանողին հատկացվում են աշխատանքային գործիքների անհատական փաթեթ և պայուսակ: Վերջիններս նախատեսված են ուսումնական գործընթացի ժամանակ կատարած աշխատանքների պահպանման համար: 2021 թվականին փորձի փոխանակման շրջանակներում Հիմնադրամը վերազինել է կարի արհեստանոցը համապատասխան, ժամանակակից մեքենաներով: Իրականացվել են նաև մասնագիտական վերապատրաստումներ: «Կարի արտադրության տեխնոլոգիա» նյութատեխնիկական բազան, մասնավորապես թվային տեխնոլոգիաների ներմուծման մասով: Համագործակցությունների արդյունքում արհեստանոցը համալրվել է նոր սերնդի ունիվերսալ և եզրակարող կարի մեքենաներով (JACK IK-A2-CZ): Արհեստանոցը համալրված է նաև 2 եզրակարող, 1 զիգզակ, 1 օղակ բաց անող կարի մեքենաներով, մասնագիտականմանեկեններ (ֆիգուրա) 11 հատ, MN 2035 դասի արդուկ:

Գործնական աշխատանքների իրականացման համար հաստատությունը յուրաքանչյուր ուսանողին տրամադրում է գործվածք՝ անհատական աշխատանքների համար:

2021 թվականի սեպտեմբերից, աշխատաշուկայի պահանջարկից ելնելով, հաստատությունում գործում է «Հրուշակագործության տեխնոլոգիա» մասնագիտությունը: 2020-2021 ուստարվա ավարտին Հիմնադրամ է այցելել ֆրանսիացի հրուշակագործ-մասնագետ: Այցի շրջանակում Հիմնադրամի մասնագետները ֆրանսիացի գործընկերոջ աջակցությամբ մշակել են մասնագիտության ներդրման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ցանկը, կազմել տեսական նյութերի շտեմարանը և բաղադրատոմսերի ձեռնարկը: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ՍԵՊՌ-ի կողմից այս մասնագիտության լաբորատորիայի համար հաստատություն է ուղարկվել 13 ժամանակակից սերնդի հարիչներ, մասնագիտական

կաղապարներ, խոզանակներ, սառնարան, հասունացման սարք և բազմաթիվ մասնագիտական սարքեր, համազգեստ, կոշիկներ՝ լաբորատորիայում կրելու համար: Լաբորատորիայի նախագիծն արդեն հաստատված է ՍԵՊՌ-ի կողմից: Այս մասնագիտությամբ սովորող ուսանողները գործնական պարապմունքները ժամանակավորապես իրականացնում են խոհարարական լաբորատորիայում: Հրուշակագործության լաբորատորիան կբացվի 2023-2024 ուստարվա ընթացքում: Շենքային պայմաններից ելնելով՝ լսարանային փոփոխություններ են կատարվել՝ հանրակրթական դասերն անցկացնելու նպատակով:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսումնառության ընթացքում ուսանողներին անհրաժեշտ բոլոր նյութերն ու գործիքները տրամադրում է հիմնադրամը:

Հաստատությունում գործում է ռեսուրս կենտրոն, մուլտիմեդիա սրահ, որտեղ ուսանողներին տրամադրվում է անհրաժեշտ գրականություն, համակարգիչներ: Առարկայական լսարանները հիմնականում հագեցած են դիդակտիկ նյութերով, լաբորատորիաները՝ կահավորված. հաստատությունում առկա են համակարգչային 2 լսարան, ինտերակտիվ լսարան՝ մեկական համակարգչով և ինտերակտիվ գրատախտակով:

Ռեսուրս կենտրոնը զբաղեցնում է հաստատության 47,6 քմ տարածքը, որտեղ տեղակայված է հաստատության գրադարանը և ընթերցասրահը: Կենտրոնը համալրված է 1026 կտոր մասնագիտական գրականությամբ, էլեկտրոնային գրքերի թիվը՝ 70: Մասնագիտական գրականության զգալի մասը տրամադրվում է Ֆրանսիայից: Կենտրոնում բաժանորդագրված ուսանողների թիվը 203- են, բաժանորդագրված դասախոսների թիվը՝ 27-ը:

Կենտրոնն ունի հստակ սահմանված նպատակներ և դրանց իրականացման համար ֆինանսական ռեսուրսները ծառայում են ժամանակակից սարք-սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ:

Հիմնադրամի ուսումնական գործընթացին վերաբերող եկամուտներն ու ծախսերն ուղղված են բացառապես հաստատության ռազմավարական նպատակների իրականացմանը: Հիմնադրամի ֆինանսավորումը գոյանում է ուսման վարձերից առաջացած մուտքերից, լրացուցիչ կրթական ծրագրերով նախատեսված դասընթացներից, ՍԵՊՌ Ավընիղ դոտացիոն ֆոնդի կողմից հատկացված դրամաշնորհներից, տեղական և միջազգային գործընկեր այլ կազմակերպությունների օժանդակություններից:

ՖՀՄՈՒԿ-ում գործում է «Հիմնադրամի ֆինանսական կառավարման գործընթացներ (ընթացակարգ)»՝ հաստատված 2020թ.-ին: Սույն ընթացակարգով հաստատվում և կարգավորվում է հիմնադրամի ֆինանսական կառավարման գործընթացը:

Հիմնադրամում յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբում իրականացնում է ֆինանսական ռեսուրսների բաշխում տարեկան նախահաշվի համաձայն: Կազմում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ և ներկայացնումբյուջեի կատարողականի մասին հաշվետվություն: Հիմնադրամի բյուջետային մուտքերի գերակշիռ մասն ապահովվում է դրամաշնորհների հաշվին՝ 2023թ.-ին կազմելով շուրջ 58.8 %-ը, իսկ մուտքերի 36 %-ը ուսանողների վարձավճարներից: Ընդհանուր բյուջեի 44,1%-ն ուղղվում է աշխատակիցների աշխատավարձերին, իսկ մնացածը վճարումներ պետական բյուջե՝ (15.8%), ապրանքների ձեռք բերմանը (0,7%), ծրագրային ծախսեր (12,6%) և 11 տեսակի այլ ծախսերին (25,5%): Տարվա վերջին մնացորդը կազմում է 16,4%: Վերոնշյալ տոկոսային համեմատական (նախորդ 2 ուստարիների հետ համեմատած):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսները բաշխվում են ըստ առաջնահերթությունների՝ աշխատավարձ, ծրագրային ծախսեր, պետական բյուջե վճարումներ և այլն: Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումը խոցելի խմբերի համար իրականացվում է հիմնականում օտարերկրյա գործընկերների կողմից կատարված ֆինանսական աջակցությամբ: Կրթական ծրագրերի ապահովման տեսանկյունից ռեսուրսների կահավորման պլանավորումը և ձեռքբերումն իրականացվում է ՍԵՊՌ-ից ժամանած փորձագետի կողմից՝ միջազգային չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ըստ ստորաբաժանումներից ներկայացված պահանջագրերի:

Հաստատությունում ցանկացած գործարքի հիմք են հանդիսանում դրամաշնորհատու հիմնադրամի և Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրով ամրագրված դրույթները, հիմնադրամի տնօրենի կողմից վավերացված (ստորագրված) պայմանագրերը, գրավոր և բանավոր հրահանգները, էլեկտրոնայի հարկային և հաշվարկային հաշիվները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հիմնադրամի ՀԽ-ն հաստատում է հիմնադրամի գործունեության բյուջեն հաջորդ տարվա համար: Նշված բյուջեի հիման վրա դրամաշնորհատու կազմակերպությունը դրամական միջոցները բանկային փոխանցմամբ տրամադրում է հիմնադրամին: Կողմերի միջև կնքվում է դրամաշնորհի պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է ֆինանսական տարվա սկզբին, որին կցվում է հավելված, որտեղ նշվում է դրամաշնորհների տրամադրման ժամանակացույցը: Դրամաշնորհները ծախսվում են բացառապես դրամաշնորհի պայմանագրով և բյուջեով նախատեսված նպատակների համար: Ծախսեր իրականացող անձինք տնօրենի հաստատմանն են ներկայացնում իրենց ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ցանկը, գինը, մոտարկված արժեքը՝ պահանջագրերը, որոնք հաստատվում են տնօրենի և/կամ ուսումնական գծով տնօրենի տեղեկալի կողմից և ներկայացվում հաշվապահություն ի կատարումն: Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործումն իրականացվում է ըստ տվյալ միջոցը տրամադրող կազմակերպության և Հիմնադրամի միջև սահմանված ձևաչափով ձեռք բերված գրավոր պայմանավորվածության՝ պայմանագիր, հուշագիր: Ներքին փաստաթղթաշրջանառությունը հաստատությունում կազմակերպվում է էլեկտրոնային և թղթային տարբերակներով: Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում տեղեկատվության փոխանակումը կատարվում է հիմնականում էլեկտրոնային նամակագրության միջոցով: Փաստաթղթերի վարումը կատարվում է էլեկտրոնային և տպագիր եղանակով:

Փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային տարբերակով, սակայն փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ հաստատությունը պլանավորվում է իրականացնել փաստաթղթաշրջանառության թվայնացում: Հիմնադրամում վարչական փաստաթղթաշրջանառությունը կատարվում է հիմնադրամի գործավարի, հաշվապահի, կադրերի գծով պատասխանատուի, իսկ ուսումնական մասի փաստաթղթաշրջանառութունը կատարվում է տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և համապատասխան աշխատակցի միջոցով: Աշխատանքների համակարգումն ու վերահսկումը կատարվում է տնօրենի միջոցով:

ՖՀՄՈՒԿ-ում գործող հիմնական փաստաթղթերը հրապարակված են նաև հիմնադրամի պաշտոնական կայքէջում (ՌԾ-ն, կրթական ծրագրեր, գործունեության տարեկան

հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ, ՈԱՊ-ի տարեկան հաշվետվություններ, ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքներ, օրենքներ, կարգեր, որոշումներ, հրամաններ)։

Հիմնադրամը ձեռնարկում է նաև նախազգուշական միջոցառումներ և իր եկամուտների մի մասը ներդնում որպես ավանդ հրատապ անհրաժեշտությունների դեպքում ֆինանսական ծախսեր կատարելու նպատակով: Այս պահի դրությամբ 15.500,0 հազար դրամի չափով գումար, որպես ավանդ է ներդրվել բանկում մեկ տարի ժամանակով։

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամը ռեսուրսների օգտագործումն իրականացնում է ըստ ուսումնական պլանի։ Հաստատությունում որակի շարունակական բարելավումն ու կայունությունն ապահովելու համար հիմնադրամի նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազան պարբերաբար թարմացվում է ժամանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան։ Հաստատությունում առկա է ռեսուրսների շարունակական բարելավում, մասնագիտական կրթական ծրագրերի ներդմանը զուգահեռ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և ուսանողերի թվի աճին զուգընթաց հաստատությունը ապահովում էանհատականության սկզբունքը՝ համալրելով մասնագիտական նյութատեխնիկական բազան։

Հաստատության կողմից անցկացվել են հարցումներ ուսանողների շրջանում՝ ըստ կրթության որակի գնահատման հարցաշարի։ Հարցման ընթացքում ուսանողները գնահատում են նաև ռեսուրսները և նյութատեխնիկական բազան։ Հարցաթերթում ուսանողները նշում են նաև հաստատության բարելավման ենթակա մեկ առաջարկ, սակայն կոնկրետ ռեսուրսային խնդիրներ չեն նշվել։ Առկա չեն ռեսուրսների հասանելիության և կիարռելիության գնահատման մեխանիզմներ շահակիցների շրջանում։ Փորձագիտական այցից պարզվեց, որ կարիքները հիմնականում ներկայացնում են վարչական աշխատակիցները, ովքեր նաև դասավանդողներ են։

Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում ապահով և անվտանգ միջավայրի ստեղծման, առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն իրականացվում են աղետների ռիսկի կառավարման պլանի համաձայն, որի նպատակն է ուսանողների և անձնակազմի անվտանգության ու դիմակայունության բարձրացումն արտակարգ իրավիճակների ժամանակ։ Աշխատակիցների և ուսանողների մոտ արտակարգ իրավիճակներում գործելու հմտությունների տիրապետման նպատակով հիմնադրամում պարբերաբար իրականացվում են հատուկ տակտիկական ուսումնավարժանքներ, դասախոսություններ ԱԻ թեմաներով, հանդիպումներ հրշեջ-փրկարարների և ԱԻ աշխատակիցների հետ։ Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ հրդեհաշիջում կազմակերպելու համար հաստատությունում առկա են կրակմարիչներ՝ 10 հատ փոշային, 6 հատ գազային, հրշեջ վահանակ՝ 1 հատ, ջրի ծորակներ։ Հաստատության բոլոր հարկերում և տեսանելի վայրերում փակցված են տարհանման պլաններ։ Հաստատությունեում առկա է հիմնական՝ 1 և պահուստային՝ 4 տարհանման ելքեր։ Տարհանման և պատսպարման ժամանակ հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին նշանակված է ուղեկցող պատասխանատու։ Սակայն հաստատությունում բացակայում են հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ պայմաններ՝ թեքահարթակներ, վերելակ և այլն։ Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ հաստատությունը շենքային պայմանների փոփոխությանն և ընդլայմանը զուգահեռ նախատեսում է վերելակների տեղադրում։ Հիմնադրամի մասնաշենքը շուրջօրյա տեսահսկվում է՝ բոլոր հարկերի

Միջանցքներում լսարաններում և լաբորատորիաներում առկա է շուրջօրյա տեսանկարահանման համակարգ: Հաստատությունում գոյություն ունի նաև ազդանշանային համակարգ, որի ծառայությունը պայմանագրով վճարովի հիմունքներով վստահված է ՀՀ ՆԳՆ Էրեբունու ոստիկանության պահպանության բաժին:

Հաստատությունում առկա է քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի (հաստատված 2013թ.) և տնտեսվարի (հաստատված 2018թ.) աշխատանքային պարտականությունների նկարագրեր:

Հիմնադրամը «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ընկերության հետ կնքել է պայմանագրեր դժբախտ պատահարներից, գույքի, քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒԿ-ն իր ՄԿԾ-ներն իրականացնելու համար ունի համապատասխան շենք, մասնագիտական կաբինետներ, լաբորատորիաներ, լսարաններ, կահավորանք, որոնք ապահովում են վերջնարդյունքներին համապատասխան կրթության իրականացման հնարավորություններ: Փորաձագիտական խումբը դրական է համարում, որ ուսումնառության ողջ ընթացքում ուսանողներին անհրաժեշտ բոլոր նյութերն ու գործիքները տրամադրում է հիմնադրամը:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ հիմնադրամի լաբորատորիաների և արհեստանոցների հագեցվածությունը առկա նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայով լիովին թույլ են տալիս հաստատության արդյունավետ դասավանդում իրականացնել, յուրաքանչյուր ուսանողի համար անհատական աշխատանքային միջավայր ապահովել:

Փորձագիտական խումբը դրական է համարում է այն փաստը, որ ՖՀՄՈՒԿ-ում որակի շարունակական բարելավումն ու կայունությունն ապահովելու համար նյութատեխնիկական բազան պարբերաբար թարմացվում է ժամանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Այդ նպատակով լաբորատորիաների համալրումը ժամանակակից սարքավորումներով շարունակական բնույթ է կրում: Մշտական աշխատանք է իրականացվում ռեսուրսների արդիականացման, համալրման ուղղությամբ: Հաստատությունում առկա է ռեսուրսների շարունակական բարելավում, մասնագիտական կրթական ծրագրերի ներդմանը զուգահեռ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և ուսանողերի թվի աճին զուգընթաց հաստատությունը ապահովում են անհատականության սկզբունքը, համալրելով մասնագիտական նյութատեխնիկական բազան:

Հիմնադրամում իրականացվող ֆինանսական ռեսուրսների բաշխումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հիմնադրամը արձանագրում է ֆինանսական դինամիկ աճ՝ իր ռազմավարական նպատակներին հասնելու նպատակով: Միաժամանակ կարևոր ու գնահատելի է հաստատության, արդեն իսկ կայուն ֆինանսական պայմաններում, ֆինանսների բազմազանեցման ուղղությամբ տարվող արդյունավետ աշխատանքը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամում գործող փաստաթղթաշրջանառության համակարգը և գտնում, որ այդ գործընթացները կանոնակարգված են: Սակայն դրա հետ մեկտեղ համարում է, որ կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը կարող է նպաստել առավել արդյունավետության, հատկապես, որ դա նաև ժամանակի պահանջ է:

Փորձագիտական խումբը կարևորում է հաստատությունում ռեսուրսների կարիքների վերհանման ուղղությամբ գործող պահանջագրերի ներկայացման ինչպես նաև հարցումների մոտեցումները, որը նպաստում է ռեսուրսների թիրախային և արդյունավետ պլանավորմանը: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է նաև ռսուրսների կիրառելիության և հասանելիության գնահատման արդյունավետ մեխանիզմների ներդրումը՝ համարելով, որ դրանք գրծընթացների շարունական բարելավման կարևոր բաղադրիչներ և երաշխիքներ են:

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ ՖՀՄՈՒԿ-ը կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ենթակառուցվածք, հաստատությունում պարբերաբար իրականացվել և իրականացվում են բարեկարգման և ռեսուրսների համալրման աշխատանքներ, առկա է ուսանողների և դասախոսական համար անվտանգ միջավայր, արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության գործուն համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ հիմնադրամը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է բավարար:

VIII.ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: ՖՀՄՈՒՀ-ը սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում ինչպես ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը, այնպես էլ Ֆրանսիայի իր գործընկերներին, ՀԽ անդամներին: Ուսումնական կենտրոնում ներքին շահակիցների հանդեպ հաշվետվողականությունն ապահովելու համար առկա է ներքին հաշվետվողականության ապահովման գրաֆիկական սխեմա, այսպես՝ ՄՈՒՀ-ի ՈԱՊ-ը, Կարիերայի կենտրոնի պատասխանատուն, ՈՒԽ պատասխանատուն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը, դասավանդողները, կուրսղեկները ներկայացնում են կատարված աշխատանքների հաշվետվություն, որտեղ արտացոլվում են շահակիցների կարիքները վերհանող քանակական և որակական մի շարք տվյալներ, իր հերթին տնօրենը ներկայացնում է տարեկան հաշվետվությունն ավելի բարձր օղակներում: Հարկ է նշել, որ հաշվետվություններում դեռևս տուժում է վերլուծական բնույթը, և այս հանգամանքը նաև հիմնադրամն է դիտարկել: Հաշվետվողականությունն առկա է և պահպանվում է բոլոր մակարդակներում ու օղակներում:

Բացի ներքին շահակիցների առջև հաշվետվողկանության ապահովումից, ՖՀՄՈՒԿ-ը ապահովում է նաեւ արտաքին շահակիցների տեղեկացվածությունը ուսումնական կենտրոնում իրականացվող գործընթացների վերաբերյալ: Այս նպատակով վերջինս իր կայքէջի /www.fcepfa.am/ փաստաթղթեր բաժնում տեղադրել է ինչպես գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերն ու քաղաքականությունները, այնպես էլ հաշվետվությունները: Հաշվի առնելով տեղեկատվության տարածման արդի եղանակները՝ ուսումնական կենտրոնն ապահովում է ընթացկարգերի եւ գործընթացների թափանցիկությունն իր կայքէջի և սոցիալական հարթակների միջոցով, վերջիններս ներքին եւ արտաքին

շահակիցների համար պարբերաբար թարմացվում են անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներով: Բացի վերոնշյալից ՄՈՒՀ-ում գործում է նաև «ՖՀՄՈՒԿՅԱՆ ակնարկներ» եռալեզու թերթը, որն ամփոփելով տարվա ընթացքում կատարված աշխատանքները, ապահովում է արտաքին և ներքին շահակիցների առջև հաշվետվողականությունը: Վերջինս թողարկվում է տարբեր լեզուներով, դրանով իսկ ապահովելով գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունը տեղական և արտասահմանյան գործընկերներին:

ՄՈՒՀ-ի սոցիալական հարթակների, ինչպես նաև կայքում զետեղված հետադարձ կապի համար նախատեսված հատվածի միջոցով հասարակությունը կարողանում է կապ հաստատել ուսումնական կենտրոնի հետ, որի արդյունքում ստանում է իրեն հուզող հարցերի պատասխանները: Այնտեղ տեղակայված թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունից օգտվելով՝ աշխատանքի համար դիմում են տարբեր մասնագետներ, ինչի շնորհիվ իրականացվում է ՄՈՒՀ-ի թափուր աշխատատեղերի համալրումը: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ բազմաթիվ դիմորդներ և աշխատանք փնտրող անձիք իրազեկվել են ուսումնական կենտրոնի մասին վերոնշյալ հարթակներից: ՖՀՄՈՒԿ-ը գրանցված է Google analytics հարթակում, ինչի շնորհիվ տեսանելի է կայքի դիտարկման բազմաթիվ տվյալներ: Միաժամանակ պարզվեց, որ այս ուղղությամբ աշխատանքներն իրականացվում է համապատասխան մասնագետի կողմից և նախատեսում են բարելավման աշխատանքներ՝ կարևորելով վերլուծությունների իրականացումը:

Հասարակայնության հետ կապերի բաժնի բացակայությունը ՄՈՒՀ-ն առայժմ փորձում է լրացնել Կարիերայի կենտրոնի ակտիվ աշխատանքով:

Ուսումնական կենտրոնում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն են հարցումները, բաց դռների օրերի ընթացքում քննարկումների ժամանակ հնչեցված կարծիքները, Հիմնադրամի գործունեության վերաբերյալ կայքի և տարբեր սոցիալական հարթակների՝ հետադարձ կապով ստացված մեկնաբանությունները, միջոցառումները, հաշվետվությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը կարևորում է հասարակության բոլոր անդամների հետադարձ կապից օգտվելու հնարավորությունը: ՖՀՄՈՒԿ-ի կայքէջը և սոցիալական տարբեր հարթակները վարում է SMM մասնագետը՝ Կարիերայի կենտրոնի ղեկավարի ակտիվ մասնակցությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը կայքեջի, ֆեյսբուքյան, Ինստագրամյան էջերի հետադարձ կապի արդյունավետության վերլուծություն դեռևս չի իրականացնում:

Հասարակությանը մասնագիտական գիտելիքի փոխանցման համար, ելնելով աշխատաշուկայի արդի պահանջներից, ՖՀՄՈՒԿ-ն իրականացնում են նաև բազմաթիվ կարճաժամկետ ծրագրեր: Լրացուցիչ կրթական ծրագրեր ուսումնական կենտրոնն իրականացնում է ինչպես անհատների, այնպես էլ այլ հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում, օրինակ՝ KASA բարեգործական հիմնադրամ, Վեոլիա Ջուր ընկերություն, Հայաստանի մանուկներ (COAF) հիմնադրամ, «Զինվորի Տուն» Վերականգնողական Կենտրոն, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամ և այլն: Արդեն իսկ իրականացվել են ջրամատակարարման տեսուչների և խողովակագործների վերապատրաստումներ, ռեստորանային սպասարկման, հաշվապահության, լուսանկարչության, մատնահարդարման և ոտնահարդարման դասընթացներ: Լրացուցիչ կրթական ծրագրերում ներգրավված շահառուները (այդ թվում հասարակության խոցելի խմբերի ներկայացուցիչներ) կարճ ժամանակում կարողանում են տիրապետել մասնագիտական հմտությունների, ինչը նրանց

հնարավորություն է ընձեռում իրենց տեղը գտնել աշխատաշուկայում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ շենքային պայմաններից ելնելով (առկա չէ վերելակ), ուսումնական կենտրոնում տեղաշարժման խնդիրներ ունեցող շահառուների համար առայժմ դասընթացները կազմակերպվում են միայն հեռավար: Կարճաժամկետ ծրագրերը կազմելիս կենտրոնը համագործակցում է նաև Ֆրանսիայի գործընկեր ուսումնական կենտրոնների հետ: Մեծածավալ ծրագրերի ժամանակ տեղի է ունենում նաև ծրագրի ընթացիկ մոնիթորինգ: Դասընթացի ավարտին դասընթացավարը ներկայացնում է հաշվետվություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ կարճաժամկետ դասընթացները պարբերական բնույթ չեն կրում և իրականացվում են պահանջարկից ելնելով:

Հաստատությունում գործող ՈՒԽ կառույցը կազմակերպում և իրականացնում է մի շարք միջոցառումներ՝ մշակութային, էկոլոգիական, բարեգործական, կամավորական, բանավեճային համատեքստերով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այս միջոցառումների շրջանակներում տեղի են ունենում նաև հանդիպում-քննարկումներ տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ, իրականացվում են ՄՈՒՀ-ի ուսանողների այցելություններ մանկատներ և զոհվածների ընտանիքներին, կազմակերպվում է ծերանոցի շահառուների հրավեր ուսումնական կենտրոն և ուսանողների կողմից պատրաստված ուտեստների համտեսում ու հյուրասիրություն: Կենտրոնում առկա է նաև անկյուն՝ նվիրված պատերազմի զոհերի հիշատակին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում առկա է ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության գործող քաղաքականություն: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում առկա հաշվետվողականության հստակ սահմանված կարգը, որով վերջինս առաջնորդվում է: Դրա շնորհիվ վերհանվում են տարբեր օղակների շրջանում առկա խնդիրները, արված առաջարկները, կատարված աշխատանքները: Ներքին և արտաքին շահակիցների համար հաշվետվողականության ապահովման գործիքները նպաստում են Հիմնադրամի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը: Միաժամանակ փորձագիտական խումբը համարում է, որ այս գործընթացներն առավել կշահեն, եթե հաշվետվություններում զարգացվեն տվյալահենք և հետազոտահենք վերլուծությունները:

Փորձագիտական խումբը կարևորում և գնահատելի է համարում նաև այն փաստը, որ Հիմնադրամի կայքէջում տեղադրված են գործող բոլոր կանոնակարգերը, ընթացակարգերը, փաստաթղթերը, հաշվետվությունները, վերջիններիս վերլուծությունները և ամփոփումները, ինչը վերահսկվում է կայքի պատասխանատուի կողմից: Հատկանշական է նաև, որ Կենտրոնն ունի SMM մասնագետ, ով զբաղվում է հրապարակումներով: Սոցիալական մեդիա մարկետինգի մասնագետի կատարած աշխատանքի արդյունքում գրանցվել է հասարակության կողմից հետաքրքրվածության աճ: Մասնավորապես, ավելացել է նամակների և զանգերի թիվը, դիտումների և հետևորդների քանակը: Արդյունքում՝ ավելանում է հետաքրքրվածությունը Հիմնադրամի ծավալած գործունեության նկատմամբ: Այդ մասին է վկայում ուսանողների թվի աճը, լրացուցիչ կրթական ծրագրերին դիմողների թվի աճը, միջազգային և տեղական համագործակցությունների ավելացումը:

Գովելի է այն փաստը, որ ՄՈՒՀ-ը ձևավորել և կիրառում է սոցիալական հարթակներ իր գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, և դրանք ակտիվորեն գործարկելու արդյունքում բարձրացել է ներքին և

արտաքին շահակիցների տեղեկացվածությունը այնտեղ իրականացվող գործընթացներից: Առանձնակի հետաքրքրության է արժանի Հիմնադրամի գործունեության թափանցիկությունն ապահովող՝ տարբեր լեզուներով թողարկվող «ՖՀՄՈՒԿՅԱՆ ակնարկներ» թերթը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Հիմնադրամում գործող հետադարձ կապի ապահովման մեխանիզմները, որոնց շնորհիվ կապ է ստեղծվում դիմորդների, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, թափուր աշխատատեղերի համար դիմողների և Հիմնադրամի միջև: Այդ առումով փորձագիտական խումբը կարևորում է նաև ՄՈՒՀ-ում գործող Կարիերայի կենտրոնը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այն փաստը, որ, ելնելով աշխատաշուկայի արդի պահանջներից՝ ՄՈՒՀ-ում իրականացվում են նաև բազմաթիվ կարճաժամկետ ծրագրեր ինչպես անհատների, այնպես էլ այլ հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում: Փորձագիտական խումբը դրական է համարում կենտրոնի դրական և բազմաոլորտ փորձը թե՛ կարճաժամկետ ծրագրերի իրականացման, թե՛ միջազգային ծրագրերի իրականացման և թե՛ կրթական ծրագրերի իրականացման յուրօրինակ մոտեցումների գործածման տեսանկյունից և այլ ուղղություններով, և համարում է, որ կենտրոնը կարող է ստանձնել հասարակական պատասխանատվություն՝ ներկայացնելու այդ դրական փորձը ոլորտի համապատասխան գործընկերների լայն շրջանակի:

Գովելի է նաև այն, որ ՄՈՒՀ-ի ուսանողները մասնակցում են տարբեր միջոցառումների, էքսպոների, վերապատրաստումների, փոխանակային ծրագրերի, մրցաշարերի, բանավեճերի, իրականցնում են կամավորական աշխատանքներ, ինչի արդյունքում բարձրացել է հասարակության իրազեկվածությունը ուսումնական կենտրոնում իրականացվող գործընթացներից և ուսանողների գիտելիքներից:

Փորձագիտական խումբը կարծում է, որ հաշվետվողականության նման քաղաքականություն իրականացնելու արդյունքում ուսումնական կենտրոնն արձանագրել է տեսանելիության և ճանաչելիության աճ արտաքին և ներքին գործընկերների շրջանակում: Այդ ամենի շնորհիվ նկատվում է ուսանողների թվի կայուն աճ, հետաքրքրություն նոր ներդրված ՄԿԾ-ի նկատմամբ, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերի ավելացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության հստակ մեխանիզմ, կիրառվում են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, առկա են տարբեր հարթակներ Հիմնադրամի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, իրականացվում են հասարակությանը գիտելիքների փոխանցման ծրագրեր, ունի կարճաժամկետ ծրագրերի իրականացման հարուստ փորձ, Հիմնադրամը իր տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը, ներքին շահակիցներին և հասարակությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: ՖՀՄՈՒԿ-ի կանոնադրության համաձայն՝ վերջինս ստեղծվել է ֆրանս-հայկական համագործակցության արդյունքում և հիմնադրման օրվանից ինտեգրված է իր պատմական գործընկեր ՍԵՊՌ-ի հետ պլանավորված փոխանակման ծրագրերում: Հիմնադրամի տեսլականում հստակ սահմանված է միջազգայնացման վերաբերյալ գործունեության հավակնությունները՝ երկխոսության մեջ դնել մասնագիտությունները Եվրոպայում և Հայաստանում, քայլել եվրոպական կրթական համակարգի զարգացմանը համահունչ, կարևորել ֆրանկոֆոնիայի դերը մասնագիտական ուսուցման մեջ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մինչ 2011թ.-ին հայկական ՊԿՉ-ների ներդրումը, ուսումնական կենտրոնն աշխատել է ֆրանսիական ծրագրերով և ուսումնառության ավարտին շրջանավարտներին շնորհել ՍԵՊՌ-ՍԵՊՖԱ վկայականներ: ՖՀՄՈՒԿ-ի հիմնադիր անդամներ են հանդիսանում Ռոն-Հայաստան վերապատրաստումներ-փոխանակումներ ասոցիացիան (ՌԱՖ), ՍԵՊՌ-ը, որոնց նախաձեռնությամբ Հիմնադրամի բացման օրվանից Ֆրանսիայից Հայաստան են ժամանել ՄԿՈՒ ոլորտի մասնագետներ, ներդրել ուսումնական ծրագրեր, լաբորատորիաներ և արհեստանոցներ ֆրանսիական չափանիշներին համապատասխան: Փորձագիտական խմբի կողմից պարզվեց նաև, որ դասախոսական կազմն անցել և անցնում է վերապատրաստումներ ֆրանսիացի փորձագետների կողմից և այս ամենի արդյունքում, հաշվի առնելով ՀՀ ՊԿՉ-ները, իրականացվել է ծրագրերի տեղայնացում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին 5 տարիների ընթացքում ՄՈՒՀ-ը կնքել է համագործակցության նոր պայմանագրեր և ընդգրկվել մի շարք միջազգային կառույցների կազմերում: Օրինակ՝ Հիմնադրամն ընտրվել է որպես EfVET (Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական ֆորում) ցանցի նոր անդամ, Հիմնադրամը դարձել է Եվրոպական կրթական հիմնադրամի գերազանցության կենտրոնների ցանցի անդամ (ETF Network of Excellence), Հիմնադրամը մասնակից է դարձել Էրազմուս+ Գերազանցության կենտրոնների ծրագրին (ERASMUS-EDU-2023-PEX-COVE) և այլն: Բացի միջազգային մի շարք կառույցներից, Հիմնադրամն ակտիվ մասնակցություն ունի նաև տեղական մի շարք ծրագրերում: Օրինակ՝ շարունակական կրթության ապահովում ՔՈԱՖ (Հայաստանի մանուկներ) հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում: Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամը իրականացրել է Սպասարկման կարճաժամկետ դասընթացներ Լոռու մարզում՝ համագործակցելով ՔՈԱՖ հիմնադրամի հետ, շարունակական կրթություն պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների համար «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի և Օվերն Ռոն-Ալպ շրջանի ֆրանս-հայկական ասոցիացիայի (AFAARA) հետ ստորագրված հուշագրերի շրջանակներում:

Փորձագիտական խումբը պարզեց, որ այս պահի դրությամբ ՄՈՒՀ-ի արտաքին և միջազգային կապերի համակարգումն իրականացվում է տնօրենի կողմից անմիջական ձևով, քանի որ Հիմնադրամը դեռևս չունի առանձնացված արտաքին կապերի բաժին: Միաժամանակ վերոնշյալ աշխատանքների իրականացման համար Հիմնադրամի գործընկեր ՍԵՊՌ

ընկերությունն ընդունել է երկու աշխատակից, ովքեր զբաղվում են Հիմնադրամի միջազգային կապերի հարցերով և ուղիղ աշխատում Հիմնադրամի տնօրենի հետ:

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ՖՀՄՈՒԿ-ն ակտիվ համագործակցում է միջազգային կտեղական հաստատությունների և կառույցների հետ: Օրինակ.

- ՍԵՊՌ-ի և Լիոնի Մետրոպոլի հետ կնքած հուշագրերի շնորհիվ ապահովվում է ֆրանս-հայկական համագործակցության շարունակականությունը, ինչը իր հերթին նպաստում է ուսանողների և դասախոսների փոխանակման և մասնագիտական մի շարք այլ ծրագրերի իրականացմանը:
- Օվերն-Ռոն-Ալպի և ՀԽ անդամ Ֆրանսիական Ալյանս Հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ստացվել է ֆինանսական աջակցություն Հրուշակագործության լաբորատորիայինև վերջինիս համար գործիքների ձեռքբերման և տրամադրման համար:
- ՆԻՖԳ-ի (Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ) և ԿԶՀՀ-ի (Կայուն զարգացման հայկական հիմնադրամ) հետ համագործակցության արդյունքում իրականացվում է «Վերադարձ ակունքներին» ծրագիրը՝ նպատակ ունենալով աջակցել անկանոն վիճակում գտնվող և կամավոր Հայաստան վերադառնալ ցանկացող անձանց մասնագիտական կրթություն ստանալու հարցում:
- Կնքվել են Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի հետ համագործակցության հուշագիր և փոխըմբռնման հուշագիր «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի հետ՝ ի նպաստ 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների կրթության կազմակերպման: Արդյունքում մի շարք երիտասարդներ (37 շահառու) մասնակցել են ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպված կարճաժամկետ ծրագրերին և ստացել անվճար ուսուցման հնարավորություն:
- Ըստ Վեոլիա Ջուր ընկերության կարիքների վերհանման՝ «Վեոլիա ՋՈՒՐ» ՓԲԸ-ի հետ «Վերապատրաստման դասընթացների կազմակերպում» ծրագրի շրջանակներում կազմակերպության մասնագետ-տեսուչները և խողովակագործները անցել են եռափուլ վերապատրաստում:
- Համագործակցության հուշագիր է կնքվել նաև Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետ, որն իրենից ենթադրում է միջազգայնացման, փոխանակումների, պրակտիկաների կազմակերպման և այլ գործընթացներ:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ նաև, որ ակտիվ արտաքին կապերը միջազգային կառույցների հետ նպաստում են ՖՀՄՈՒԿ-ի բյուջեի բազմազանեցմանը: Այս ամենի շնորհիվ, կարիքերի վերհանումից հետո, իրականացվում է ուսումական կեննտրոնի ռեսուրսերի համալրում:

Պրակտիկաներ իրականացելու նպատակով ուսանողերն այցելում են տարբեր հաստատություններ: Փորձագիտական խմբի հանդիպումներից հետո պարզ դարձավ, որ բովանդակային առումով գործատուների հետ կապը դեռևս թույլ է, բայց վերջիններս հայտնեցին ավելի ակտիվ համագործակցության իրենց պատրաստակամությունը:

Համաձայն ՖՀՄՈՒԿ ինքնավերլուծության՝ միջազգայնացման հետ կապված խոչընդոտներից մեկը ներքին շահակիցների օտար լեզվի իմացության ոչ շատ բարձր մակարդակն է:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ նաև, որ միջազգային գործընկերների հետ շփման անհրաժեշտությունից ելնելով՝ Հիմնադրամի 2 աշխատակիցներ Հիմնադրամի

միջոցներով անցել են ֆրանսերենի դասընթաց 2019-2021 թվականներին: Ինչպես նաև «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության 1 արտուսվարպետ ուսանողների հետ մասնակցում է մասնագիտական ֆրանսերենի ուսուցման դասընթացին: Չնայած առկա օտարալեզու գրականությանը, որը համալրվում է Ֆրանսիայի գործընկերոջ կողմից, այնուամենայնիվ լեզվահմացության հետ կապված խնդիրները որոշակիորեն խանգարում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Հիմնադրամի ՌԾ տեսլականում սահմանված է միջազգայնացման վերաբերյալ գործունեության հավակնությունները, որի ուղղությամբ գործուն քայլերը շարունակաբար արդիականացվում են, ինչը էլ նպաստում է ոլորտի շարունակական զարգացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՖՀՄՈՒԿ-ի արտաքին կապերը ոչ միայն իր պատմական գործընկեր ՍԵՊՌ-ի հետ, այլև Ֆրանսիայի և եվրոպական մի շարք այլ գործընկերների հետ: Այսպիսի համագործակցությունը հնարավորություն է ընձեռում իրականացնել մի շարք փոխանակման ծրագրեր, մասնակից դառնալ միջազգային միջոցառումների և կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ ու փորձի փոխանակում, ինչն ինքնին շատ խրախուսվում է ՄՈՒՀ-ի կողմից: Այդուհանդերձ այս առումով հստակ ընթացակարգեր չկան, մինչդեռ որպես ՌԾ կարևոր նպատակ կարևոր կլիներ խրախուսման բազմազան մեխանիզմների ներդրումը, մասնավորաբար նաև դասախոսի գնահատման մեխանիզմում որպես բաղադրիչ:

Առանձնակի հետաքրքրության է արժանի այն փաստը, որ Հիմնադրամն այս պահի դրությամբ դեռ չունի առանձնացված արտաքին կապերի բաժին, սակայն փորձագիտական խումբը փաստում է, որ արտաքին և միջազգային կապերի համակարգումն արդյունավետորեն է իրականացվում տնօրենի, ՍԵՊՌ-ի համապատասխան 2 աշխատակիցների կողմից: Աշխատանքն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով ապագայում կարևոր կլինի համապատասխան աշխատակցի առկայությունը Հիմնադրամում՝ վերոնշյալ գործառույթներն իրականացնելու համար, ինչի անհրաժեշտություն տեսնում է նաև հաստատությունը:

Փորձագիտական խումբը խիստ կարևորում և գնահատելի է համարում այն փաստը, որ ՖՀՄՈՒԿ-ը ունի համագործակցության լայն շրջանակ, որն տարեցտարի էլ ավելի է ընդլայնվում: Հիմնադրամի համագործակցությունը միջազգային մի շարք կառույցների և գործընկերների հետ զարգացման և միջազգայնացման լուրջ հնարավորություններ է ընձեռում ինչպես ՄՈՒՀ-ի, այնպես էլ իր արտաքին և ներքին շահակիցների համար: Այս ամենին զուգահեռ պետք է նշել, որ թույլ է կապը տեղական այլ քոլեջների հետ և առկա են որոշակի խնդիրներ գործատուների հետ համագործակցության հարցում: Օրինակ՝ վարսահարդարության մասով պրակտիկայի գործատու չկա, հետևաբար առաջանում են որոշ բարդություններ: Ցանկալի կլիներ ընդլայնել գործատուների հետ համագործակցությունը ուսումնական կենտրոնից դուրս պրակտիկան ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Միաժամանակ փորձագիտական խումբը համարում է, որ կարելի է զարգացնել համագործակցությունը գործատուների հետ նաև բովանդակային առումով, հատկապես, որ դա հնարավորությունները տեսնում են նաև գործատուները և հայտնում են պատրաստակամություն: Այս ամենը կնպաստի տեղի աշխատաշուկայի հետ առավել սերտ կապին և կընդլայնի հնարավորությունները՝ ուղղված համատեղ ծրագրերի իրականացմանը, մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի կողմից լեզվիմացության

մակարդակի բարձրացման միտումը թե՛ դասախոսների և թե՛ ուսանողների շրջանում: Այդ նպատակով ՖՀՄՈՒԿ-ը որոշ դասավանդողների ուղարկել է վերապատրաստման, գրադարանում առկա է օտարալեզու գրականության բավարար քանակ ուսանողների համար, վերջիններս սովորում են մասնագիտական տերմինաբանություն ֆրանսերենով: Այնուամենայնիվ, օտար լեզուների իմացության ցածր մակարդակը որոշակի խնդիրներ և խոչընդոտներ է ստեղծում: Կարևոր է, որ կենտրոնը աշխատակիցների ընտրության ժամանակ որպես ցանկալի բաղադրիչ դիտարկում է լեզվաիմացությունը, սակայն դեռևս նկատելի չէ սրա ցանկալի արդյունքը: Փորձագիտական խումբը համարում է, որ հիմնադրամը կրթական ծրագրերի միջազգայնացման ուղղությամբ իրական հնարավորություն ունի և այս ուղղությամբ համապատասխան նախադրյալների ստեղծման տեսանկյունից կարևորում է աշխատակիցների լեզվաիմացության զարգացման ուղղությամբ առավել արդյունավետ և նպատակային միջոցառումների ձեռնարկումը:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամը արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի միջազգային փորձի ուսումնասիրություն չի իրականացրել, թեև իր գործունեության ընթացքում ակտիվ համագործակցում է ՍԵՊՌ կամպուսի հետ և սա բնականոն կերպով հանգեցնում է վերջինիս առաջավոր փորձի ուսումնասիրմանն ու դրանով առաջնորդվելուն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն, իր կանոնադրության համաձայն, ստեղծվել է ֆրանս-հայկական համագործակցության արդյունքում և հիմնադրման օրվանից ինտեգրված է իր պատմական գործընկեր ՍԵՊՌ-ի հետ պլանավորված փոխանակման ծրագրերում, ունի արտաքին կապերի և համագործակցության լայն շրջանակներ, միջազգային տարբեր կառույցներում և ծրագրերում ընգրկվածություն և հարուստ փորձ, որն տարեցտարի մեծանում է, Հիմնադրամն իր արտաքին կապերի միջոցով խրախուսում և ապահովում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: ՖՀՄՈՒԿ-ը կարևորել է որակի ապահովման ներքին համակարգի ներդրումը: Գործընթացների վերաբերյալ հստակ պատկերացումներ ձևավորելու և քայլեր իրականացնելու համար կարևորել է ՈԱԱԿ-ի վերապատրաստումներին աշխատակիցների մասնակցությունը: Որից հետո այդ ուղղությամբ զարգացման պատկերացումներն ամրագրել է 2022-2027 թթ.-ի ՌԾ-ում և կարևորել որակի ապահովման համակարգի ներդրումը: Ըստ ինքնավերլուծության, ՖՀՄՈՒԿ-ն համարում է, որ որակի ապահովման համակարգը Հիմնադրամում ներդրվել է 2021

թ-ին՝ վերջինս փոխկապակցելով այն հանգամանքի հետ, որ այդ ժամանակ հիմնադրամի տնօրենի հրամանով նշանակվել է կրթության որակի ապահովման պատասխանատու, սահմանվել են նրա գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Նույն թվականին հաստատվել է նաև Որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականություն փաստաթուղթը, որտեղ սահմանվում են Որակի ապահովման պատասխանատուի և Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի գործառույթները:

Հիմնադրամը 2022 թ-ին մշակել և ներդրել է Որակի ապահովման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության և նրանց առջև հաշվետվողականության քաղաքականություն, ըստ որի թվարկվում են ուսանողների, դասախոսների, գործատուների և շրջանավարտների ներգրավման ձևերը:

ՖՀՄՈՒԿ-ը 2021 թ-ի մշակել և ներդրել է Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման ընթացակարգ: Այստեղ անդրադարձ է կատարվում ուսանողների, դասախոսների, դիմողների, շրջանավարտների և գործատուների կարիքների վերհանմանը, սակայն հիմնականում ընթացակարգային դրույթներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզվեց, որ Որակի ապահովման պատասխանատուն համագործակցում է ՄԿԾ-ների պատասխանատուների, ստորաբաժանումների ղեկավարների, ՈՒԽ-ի և Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի հետ: Փորձագիտական այցից պարզվեց, որ Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովը դեռևս միայն հարցաթերթիկներ է բաժանում հարցումների անցկացման հարցում օգնելու նպատակով:

Որակի ապահովման պատասխանատուն նաև վարչական այլ գործառույթներ է իրականացնում: Որակի ապահովման պատասխանտուն ունի առանձին աշխատասենյակ, որն ապահովված է անհրաժեշտ աշխատանքային գույքով: Փորձագիտական այցից պարզվեց, որ անհրաժեշտ նյութական ռեսուրսների համալրումը կատարվում է ըստ ներկայացված պահանջագրերի:

Հարցումների անցկացման գործընթացների կարգավորման նպատակով 2022 թ-ին ներդրել են Հարցումների անցկացման կարգ: Ներքին և արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացներում ներգրավում են հարցումների միջոցով: Որակի ապահովման պատասխանատուն կազմել է որոշ հարցարաններ: Ներքին շահակիցների պարագայում հարցումներն անցկացնում են թղթային հարցաթերթիկների (կրթության որակի գնահատման հարցում, առաջին կուրեցիների շրջանում հարցում, դասավանդողների գնահատում ուսանողների կողմից) կիրառմամբ, իսկ շրջանավարտների և գործատուների պարագայում (գործատուների բավարարվածության և կարիքների վերհանման հարցում, շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցում՝ ըստ մասնագիտությունների) կիրառել են Google forms-ի ընձեռած հնարավորությունները: Բոլոր հարցումները, բացառությամբ կրթության որակի հարցումներից և ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցումներից անցկացվել են դեռևս մեկանգամյա: Ինքնավերլուծության ձևաչափով պահանջվող հարցերի շրջանակում ևս անցկացրել են մեկանգամյա հարցումներ: Ուսումնասիրությունների և փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ հարցումների արդյունքներն ամփոփվում են կամ թղթային հարցումների արդյունքների ըստ առանձին հարցերի միջին միավորների հաշվմամբ, կամ Google forms-ի հարթակում արդյունարար գրաֆիկական արտածումներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարցարաններում հարցերն այնպիսին են, որ շատ պարագաներում չեն բացահայտում խնդիները (մասնավորաբար՝ գրադարանի ու միջոցառումների գնահատում կամ հատկացված նյութերի ու գործիքների գնահատում և այլն):

Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ եղել են դեպքեր, երբ ցածր միավոր գնահատված հարցի պարագայում ֆոկուս-խմբային քննարկման միջոցով են կարողացել բացահայտել խնդիրը, չնայած որ, դրանց արձանագրություններ և վերլուծություններ առկա չեն: Կարևոր է նշել, որ ուսանողների շրջանում կրթության որակի գնահատման հարցումներն արդեն 3 տարի է անցկացվել են, ընդ որում, հարցումներն անցկացվում են 2-րդ կուրսեցիների շրջանում և մասնակցել է շուրջ 50 ուսանող (ուսանողական համակազմի շուրջ 25%-ը): Պետք է նշել նաև, որ դասավանդողների գնահատման համար հիմնադրամը ներդրել է մեխանիզ, որտեղ գործածում է բազմագործոն գնահատման մոտեցում՝ հաշվի առնելով ուսանողների շրջանում հարցումների արդյունքները, դասալսումների արդյունքները, ինչպես նաև կիրառելով որոշակի փաստացի տվյլաների հենքով գործոններ: Չնայած դրանց համադրման հենքով կատարված վերլուծություններ դեռևս առկա չեն, այնուամենայնիվ այս գնահատումների հենքով իրականացվել են նաև պարգևատրումներ:

Ըստ ինքնավերլուծության, ՖՀՄՈՒԿ-ը համարում է, որ որակի ապահովման ներքին համակարգը դեռևս նոր է ներդրել, ուստի դեռևս վերանայելու գործընթաց չի իրականացվել: Սակայն Որակի ներքին ապահովման քաղաքականություն փաստաթղթում անդրադարձ է կատարված որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման գործընթացին: Ըստ դրա յուրաքանչյուր 4 տարին մեկ, նոր ռազմավարական ծրագրի կազմմանն ընդառաջ նախատեսվում է իրականացնել որակի ապահովման ամբողջական համակարգի վերանայում, ինչն իրենից ենթադրում է որակի ապահովմանն առնչվող փաստաթղթերի, որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների վերանայում և փոփոխում, սակայն ելնելով անհրաժեշտությունից, իրականացվում են նաև ընթացիկ վերանայումներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ մասնավորաբար վերանայել են ուսանողների կողմից դասավանդողների գնահատման հարցարանը՝ պայմանավորված վարչական աշխատակիցների կարծիքներով, թերևս, ոչ թե որոշակի համակողմանի վերլուծական հենքով:

Որակի ապահովման համակագի համեմատական վերլուծություն դեռև չի իրականացվել, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ Որակի ապահովման պատասխանատուն նախաձեռնել է ուսումնասիրել Լիոնի գործընկեր ՍԵՊՌ կամպուսի որակի ներքին ապահովման գործընթացները, այդ նպատակի համարիրականացվել է նաև այց՝ Ֆրանսիա:

Պետք է նշել, որ հիմնադրամում առկա են որոշ գործընթացներ, որոնք ՊԻԳԲ շրջափուլով անցել են և գործընթացներ, որոնք գտնվում են շրջափուլի տարբեր փուլերում: Միաժամանակ առկա են առանձին գործընթացներ, երբ որոշակի խզում է նկատելի փուլերի միջև:

ՖՀՄՈՒԿ-ն առաջին անգամ է ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն իրականացնում: Ինքնավերլուծության հիմքում բավականին փաստաթղթային հենք է առկա, որոշ չափանիշներում նաև բավականին վերլուծական է ներկայացված, մասնավորաբար 7-րդ չափանիշում՝ նաև տվյալների հենքով վերլուծություն: Նկատելի է SWOT վերլուծության և ինքնավերլուծության տեքստի որոշակի խզում: Փորձագիտական խումբը անհրաժեշտություն է ունեցել որոշակի հավելյալ տվյալների՝ ամբողջական վերլուծություն իրականացնելու համար: Հաշվետվություններում տվյալների հենքով վելուծությունները գրեթե բացակայում են և այս հանգամանքը նաև ՖՀՄՈՒԿ-ն է իր թույլ կողմը համարել:

Հիմնադրամը ENE network-ի անդամ է և ըստ այդմ 2023 թ-ից դեռևս առաջին անգամ լրացրել է գնահատման հարցաշար, որի արդյունքում արտաքին գնահատմամբ անդրադարձ է լինելու գործունեության բոլոր ուղղություններին («Foundamental», «Develpmental», «Mature»):

ՖՀՄՈՒԿ-ի կայք-էջում տեղադրված են Հիմնադրամի 2022-2027 թթ.-ի ՌԾ-ն, կրթական ծրագրերը, գործունեության տարեկան հաշվետվությունները, շահակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքները, «Ֆիմուկյան ակնարկներ» թերթի համարները 3 լեզուներով, որոշումներ, հրամաններ և այլն: Սակայն փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ ուսանողները, դասավանդողները, ովքեր վարչական աշխատանքներում ներգրավված չեն, ինչպես նաև արտաքին շահակիցները հիմնականում իրազեկ չեն այդ վերլուծություններից և փաստաթղթերից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒԿ-ը կարևորել է որակի ապահովման համակարգի ներդումը և նկատում է, որ այդ կարևորումը ոչ միայն արտաքին պահանջներից բխող անհրաժեշտությամբ է պայմանավորված, այլև ներքին գիտակցված կարևորում է: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ ներդրման գործընթացը հիմնադրամը սկսել է դաշտի ուսումնասիրմամբ՝ ձեռնարկելով նախ ՈԱԱԿ-ի կողմից աջակցության և վերապատրաստումների մասնակցության գործընթաց: Փորձագիտական խումբը կարևորում է, որ մշակվել և ներդրվել է համապատասխան փաստաթղթային հենք, որը գործառնական է: Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ անհաժեշտություն կա ուշադրություն դարձնելու Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի գործունեության արդյունավետության ապահովմանը, ինչը կարող է նպաստել ուսանողների և շրջանավարտների՝ որակի ապահովման գործընթացներում մոտիվացված ներգրավվածության ապահովմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ որակի ապահովման գործընթացներին վերաբերող որոշ փաստաթղթերում, որոնք ենթադրաբար պետք է կանոնակարգեին ընթացակարգային դրույթներ, դեռևս այդպիսիք բացակայում են: Նկատի ունենալով ՖՀՄՈՒԿ-ի ձգտումը առավելապես փաստաթուղթ-գործընթաց համահունչությունը պահպանելուն, նման դրույթների հստակեցումը կարող է նպաստել գործընթացների առավել արդյունավետ և կանոնակարգված իրականացմանը և կնպաստի գնահատման գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն հանգամանքը, որ ՖՀՄՈՒԿ-ը տրամադրում է համապատասխան ռեսուրսներորակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացման նպատակով, չնայած որ ՌԾ-ում և տարեկան ֆինանսական պլաններում այս ուղղությամբ դեռևս համապատասխան ռեսուրսային պլանավորումներ առկա չեն: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ հիմնադրամը կարևորել է որակի ապահովման ուղղությամբ վերապատրաստումներին մասնակցությունն ու հմտությունների զարգացումը և կարողացել է ապահովել համապատասխան որակներով մասնագետի: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ Որակի ապահովման պատասխանատուի՝ այլ վարչական հաստիքների զբաղեցումը կարող է որոշակիորեն խանգարել գործընթացների հնարավորինս արդյունավետ իրականացմանը և օբյեկտիվության ապահովմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՖՀՄՈՒԿ-ն արդեն բավականին հարցարաններ է մշակել և գործածում հիմնադրամի տարբեր գործընթացները ներքին և արտաքին շահակիցների կողմից գնահատելու նպատակով, նաև դրական է, որ առանձին դեպքերում առկա են դրանց բարելավման գործընթացներ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՖՀՄՈՒԿ-ի կողմից բազմագործոն գնահատման մեխանիզմի մշակման, ներդրման ու վերջինս որպես մոտիվացման հիմք կիրառելու փորձը, քանի որ այսպիսի մեխանիզմները կարող են հանգեցնել գնահատումների սուբյեկտիվության քչացման: Սակայն փորձագիտական

խումբը գտնում է, որ հետազոտությունների մեխանիզմները բազմազանեցման և բարելավման կարիք ունեն՝ ուղղված խնդիրների առավել թիրախային բացահայտումների ապահովմանը: Այս տեսանկյունց կարևոր կլինի, որ ինչպես մեխանիզմների և միջոցների (հարցարաններ, թվային հարթակներ և այլն) մշակման, այնպես էլ դրանց բարելավման գործընթացներն առավել մասնագիտացված ուսումնասիրությունների և գնահատումների հենքով լինեն: Բազմազանեցման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ ՖՀՄՈՒԿ-ը ուշադրություն դարձնի տարբեր գործընթացների վերաբերյալ տվյալների հավաքագրմանն ու դրանց հենքով բազմակողմանի վերլուծությունների իրականացմանը: Այս հանգամանը, ինչպես նաև շահակիցների մոտիվացված ներգրավվածության ապահովումը հետազոտությունների սուբյեկտիվության նվազեցման և արժանահավատության բարձրացման անկյունաքարեր են:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՖՀՄՈՒԿ-ը դեռևս որակի ապահովման ներքին համակարգի համեմատական վերլուծություն չի իրականացրել, սակայն այս ուղղությամբ քայլեր է ձեռնարկում ու պլանավորումներ Լիոնի գործընկեր ՍԵՊՌ կամպուսում ուսումնասիրություններ իրականացնելու: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ նման վերլուծությունը կարող է առավել արդյունավետ լինել, եթե նկատի առնվեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային այլ հաստատություններ ևս:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒԿ-ը մշակել է որակի ապահովման ներքին համակարգի վերանայման քաղաքականություն, գնահատելի է նաև, որ մասնակի վերանայումներ են առկա: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ համակարգի շարունակական զարգացման ապահովման նպատակով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել որակի ապահովման համակարգի գնահատման գործընթացին:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՖՀՄՈՒԿ-ում առկա են որոշ գործընթացներ, որ ամբողջական ՊԻԳԲ շրջափուլով անցել են: Դրանով հանդերձ կարևորում է, որ հիմնադրամը ուշադրություն դարձնի շրջափուլի առանձին բաղադրիչների արդյունավետ իրականացմանը և բոլոր գործընթացների համար շրջափուլի բաղադրիչների փոխկապակցվածության ապահովմանն ու շրջափուլային իրագործմանը, քանի որ վերջինս շարունակական զարգացման ապահովման անհրաժեշտ մեխանիզմ է:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՖՀՄՈՒԿ-ի արտաքին գնահատման համար իրականացված գործընթացները, որոնք ընդհանուր առմամբ բավականին օբյեկտիվ պատկեր ստանալու երաշխիքներ են ստեղծում: Սակայն փորձագիտական խումբը համարում է, որ այս գործընթացների հետագա բարելավմանը կարող են նպաստել պարբերաբար բազմակողմանի տվյալների հավաքագրումն ու համակողմանի վերլուծությունների իրականացումը, որոնք կարող են արտացոլվել տարեկան հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում:

Փորձագիտական խումբը դրական է համարում պաշտոնական կայքի միջոցով հիմնադրամի գործընթացների որակի մասին տեղեկատվության առկայությունը, սակայն նշում է, որ շահակիցները հիմնականում մոտիվացված չեն իրազեկվելու այդ մասին և հարցումների ամփոփումները չեն տարածվում հետևանքի տեսքով: Այս ուղղությամբ մոտիվացվածության բարձրացումը կարող է նպաստել գործընթացների շարունակական բարելավմանը:

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ ՖՀՄՈՒԿ-ը ներդրել է որակի ապահովման համակարգ՝ տրամադրելով համապատասխան ռեսուրսներ, մշակել և ներդրել է հիմնական փաստաթղթային հենքը, որը գործառնական է, ներդրել է հետազոտությունների իրականացման

մի շարք մեխանիզմներ, կարևորում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացներում, մշակել է որակի ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն, նախաձեռնել է միջազգային փորձի ուսումնասիրման գործընթաց, առկա են ՊԻԳԲ շրջափուլն ամբողջապես անցած գործընթացներ, որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար ապահովում է բավականին օբյեկտիվ պատկեր, աշխատանքներ է իրականացրել հիմնդրամի գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՖՀՄՈՒԿ-ը բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը ՖՀՄՈՒԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է բավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Ամսաթիվ՝ 10.01.2024թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. Արմենուհի Սարգսյան՝ 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 1
   ուսումնամեթոդական ձեռնարկի և 70-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:
2. Օլյա Ավետիսյան՝ 2012-2016թթ.-ին սովորել է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ Հագուստի մոդելավում և նախագծում մասնագիությամբ, 2016-2019-ին սովորել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Մագիստրոսական կրթություն է ստացել նույն համալսարանի
   «Հոգեբանություն» կրթական ծրագրում: Աշխատել է «Ալեքս Տեքստիլ» ՓԲԸ-ում որպես կոնստրուկտոր, ինչպես նաև «ԳՈԼԴ ՍՍԱՄ» ընկերությունում՝ 3D մոդելավորող: 2018թ-ից մինչ օրս աշխատում է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս է:
3. Էլեոնորա Ղազարյան՝ 2001–2006թթ. սովորել է Երևանի Մ. Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի Ստոմատոլոգիական ֆակուլտետում, 2006–2009թթ. անցել է կլինիկական օրդինատուրա օրթոդոնտիա մասնագիտությամբ Երևանի Մ. Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանում, 2009–2012թթ. եղել է առկա ուսուցմամբ ասպիրանտ Երևանի Մ. Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնում: 2012թ.-ին պաշտպանել է թեկնածուական թեզը, այնուհետև շնորհվել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2012–2013թթ. եղել է ԵՊԲՀ մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի ասիստենտ, 2013–2018թթ. ԵՊԲՀ մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դասախոս, 2018թ.-ից առ այսօր՝ ԵՊԲՀ մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դոցենտ: Հանդիսանում է ավելի քան 25 տպագրված գիտական աշխատանքների հեղինակ և համահեղինակ հայրենական և օտարերկրյա մասնագիտացված գիտագործնական հրատարակություններում և

ամսագրերում, 2 արտոնագրերի սեփականատեր և հեղինակ, 2 ուսումնամեթոդական ձեռնարկների և օրթոդոնտիայի դասագրքի համահեղինակ: Գիտական զեկույցներով հանդես է եկել միջազգային և տեղական համագումարներում և գիտագործնական համաժողովներում: Վերապատրաստվել է Գերմանիայի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի և այլ առաջատար կլինիկաներում, ուսումնական կենտրոններում: Ունի բժիշկ-օրթոդոնտի կլինիկական աշխատանքի 16 և դասավանդման 11 տարվա փորձ: Հանդիսանում է Օրթոդոնտների Եվրասիական ասոցիացիայի (EAO) անդամ, Հայ Ստոմատոլոգների ասոցիացիայի (AAO) անդամ և Հայաստանի Օրթոդոնտների ասոցիացիայի (AOA) վարչական խորհրդի անդամ:

4. Թամարա Պետրոսյան՝ 2015-2020 թթ. սովորել է Էրեբունի հայ-ամերիկյան պետական բժշկական քոլեջում, 2020 թվականից Հայկական բժշկական ինստիտուտի 5-րդ կուրսի ուսանող: 2023թ. մասնակցել է ՈԱԱԿ Ուսանողության ձայն նախագծի ուսանող-փորձագետներիվերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Յ

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի
11.10.2023թ.դասալսումներ, ռեսուրսների դիտարկում 16.10.2023թ.-19.10.2023թ.

	16.10.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի Հոգաբարձուների խորհրդի անդամներ հետ	15:40	16:40	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:50	17:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե

	17.10.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՄԿԾ պատասխանատուների և Հանրակրթական ծրագրերի բաժնի ղեկավարի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչներիհետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի կենտրոնի պատասխանատու, պրակտիկայի բաժնի պատասխանատու, ռեսուրս կենտրոնի պատասխանատու, գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի վարիչ)	14:40	15:40	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:00	70 րոպե

	18.10.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Խոհարարական գործ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Կարի արտադրության տեխնոլոգիա» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների	10:00	11:20	80 րոպե
2.	Հանդիպում Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Խոհարարական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ(10-12 հոգի)	Հանդիպում «Կարի արտադրության տեխնոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների հետ(10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե
3.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			12:40	13:20	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
5	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			14:40	15:20	40 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			15:50	18:00	130 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանումը	Չափանիշ
1.	Ուսումնական մեթոդմիավորման նիստեր, արձանագրություններ:	1
2.	Դասախոսական կազմի կարիքների վերհանման հիմքեր:	1
3.	ՈւԽ կազմից ամեն տարի ընտրվող որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի հիմքեր:	1
4.	Կարիերայի կենտրոնի և կապը շրջանավարտների հետ կատարած աշխատանքների հիմքեր, վերլուծություններ:	1
5.	Գործատուների հետ մշտական կապը կրթական ծրագրերի մշտադիտարկման ժամանակ, պրակտիկաների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ներգրավվածության միջոցներով դուրս փոփոխություններ:	1
6.	ՈԱՊ-ի կողմից արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման նպատակով իրականացված հարցումներ:	1.10
7.	Հոգաբարձուների Խորհրդի արձանագրություններ:	1
8.	2022 թ.-ին հաստատման ՌԾ մշտադիտարկման և գնահատման կարգի արձանագրություններ:	1
9.	Վերջին 5 տարիների ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ:	2
10.	2022 թ-ին հաստատված աշխատակիցների նկատմամբ խրախուսանք և կարգապահական տույժի դեպքեր, արձանագրություններ:	2
11.	ՈԽ Առաջարկությունների փաթեթներ վերջին 5 տարիների: Խնդիրների լուծման հիմքեր	2
12.	Ուսանողների առաջադիմության, հաճախելիության և վարքագծային կանոններով պայմանավորված խնդիրների առաջացման դեպքերի վերլուծություններ:	2
13.	Արտաքին շահակիցների հետ հանդիպումների արդյունքում արված վերլուծություններ:	2
14.	Աշխատախուկայի ուսումնասիրության վերլուծության արձանագրություններ:	2
15.	Սոցիալական հարթակներում հրապարակվող տեղեկատվության գնահատման վերլուծություններ:	2
16.	Մոդուլների ծրագրեր:	3
17.	Դասալսումների վերլուծություններ:	3

18.	Գիտելիքների ստուգման գնահատման և բողոքարկման վերլուծություններ:	3
19.	Հիմնադրամ և ՍԵՊՌ-ի նեկայացուցիչների հետ միասին ՀՀ մարզային իրականացված ճանաչողական այցերի արձանագրություններ, վերլուծություններ:	3
20.	ՍԵՊՌ-ի հետ կատարած համեմատական վերլուծություններ:	3
21.	Ուսման առաջադիմությունը խթանելու նպատակով բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների ցանկ վերջին 5 տարիների կտրվածքով:	4
22.	Դասախոսական կազմի կողմից ուսանողների կարիքների վերհանման արձանագրություններ:	4
23.	Գործատուների կողմից պրակտիկաների կրիքների վերհանման վերլուծություններ:	4
24.	Վարչական կազմի կողմից ուսանողների կարիքների վերհանման վերլուծություններ:	4
25.	Միջոցառումներին, վեապատրաստումներին մասնակցության ցուցանիշներ ուսանողների շրջանում, հարցումների վերլուծություններ ըստ տարբեր միջոցառումների:	4
26.	Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառա-յությունների գնահատումն իրականացված հարցումների վերլուծություններ:	4
27.	Կիսամյակի կտրվածքով դասավանդողների կողմից ներկայացվող հաշվեվություններ:	5
28.	Ուսանողների կողմից տարեկան կտրվածքով դասավանդողների գնահատումն իրականացվղ վերլուծություններ:	5
29.	Վերապատրաստումների ժամանակացույց: 5 տարիների վերապատրաստումների ցանկ:	5
30.	Դասախոսների խրախուսման և կարգապահական տույժի դեպքերի արձանագրություններ:	5
31.	Ներքին կարգապահական կանոններով ատեստավորում անցած դասախոսների ցանկ:	5
32.	Հաստիքացուցակ:	5
33.	Ռեֆերատներ, կուրսային, անհատական աշխատանքներ:	6
34.	Վերջին 5 տարիների կարճաժամկետ դասընթացների ցանկ, նշել ժամանակահատվածը և մասնակցության ցուցանիշները (ներքին և արտաքին շահակիցներ):	8
35.	ՈՒԽ բանավեճի ակումբի միջոցով հաղորդակցման խոչընդոտների հաղթահարման արձանագրություններ:	8
36.	ՈԱ կողմից մշակված և իրականացված հարցաթերթեր կամ հարթակներ, արձանագրություններ:	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ուսումնական մասնաշենք
2. Լսարաններ
3. Առարկայական լաբորատոր լսարաններ 2 հատ /Ատամնատեխնիկական գործ ՄԿԾ/
4. Առարկայական լաբորատոր լսարան /Խոհարարական գործ ՄԿԾ/
5. Առարկայական լաբորատոր լսարան / Վարսավիրական արվեստ ՄԿԾ/
6. Առարկայական լաբորատոր լսարան /Կարի արտադրության տեխնոլոգիա ՄԿԾ/
7. Մարզահրապարակ /քոլեջի բակում/
8. Գրադարան, ռեսուրս կենտրոն
9. Տեսանկարահանման համակարգ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՖՀՄՈՒՍԿ Ֆրանս հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն
2. ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
3. ՀՀ ԿԳՄՍՆ Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. ՈԱԱԿ Որակի ապահովման ազգային կենտրոն
5. ՈԱՇ Որակավորումների ազգային շրջանակ
6. ՊԿՉ Պետական կրթական չափորոշիչ
7. ՄԿՈՒԶԱԿ Մասնագիտական կրթության զարգացման ազգային կենտրոն
8. ԻՎ Ինքնավերլուծություն
9. ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
10. ԿԾ Կրթական ծրագրեր
11. ՌԾ Ռազմավարական ծրագիր
12. ԶԾ Զարգացման ծրագիր
13. ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն
14. ՈՆԱԿ Որակի ներքին ապահովման կենտրոն
15. ԳԱՑ Գնահատման առանցքային ցուցանիշներ
16. ՀԽ Հոգաբարձուների խորհուրդ
17. ՈՒԽ Ուսանողական խորհուրդ
18. ՊԴԿ Պրոֆեսորադասախոսական կազմ
19. ՈՒԱ Ուսումնական արդյունք